ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳՐԵՑ

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1936

V

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ
ՈՌՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա 2540

ԳՐԵՑ

ՄԵՍՐՈՊ ՄԱԳԻՍՏՐՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1936

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Երկրի կլիման եւ վերջին իջխողների վերաբերմունքը.

Խորհրդային Հայաստանի ներկայ տեղիտորիան իւր աշխարհագրական եւ կլիմայական դիրքի պատճառով արհեստական ոռոգման անհրաժեշտ կարիքն ունի: Ծովերից և ովկիանոսներից նա թէ հեռու է ընկած և թէ նրանցից բարձրացող շոգիների ճանապարհին գտնւող բարձր լեռնաշղթաները արգելք են հանդիսանում տարբաց բոլոր եղանակներին, յատկապէս ամառւայ խիստ շոգերի ժամանակ, երկրի մակերեւոյթին կենդանութիւն տւող խոնաւութեանը՝ ցանկալի չափով ներս թափանցելու: Ամառւայ ակիզբներին Ադուլիսում ականատես ենք եղել թէ ի՛նչպէս նրա անմիջական մերձաւորութեան վրայ բարձրացող լեռնաշղթան արեւելքից եկող ամպերի առաջը բռնել են պարսպի պէս, թէ ի՛նչպէս այդ ամպերը հասնելով ամենաբարձր գագաթներին, ծածկել են սրանց միջի գիգզագաձեւ տարածութիւնը հաւասարապէս և ամբողջ բարձունքներին վիթխարի պարսպների նմանութիւն տւել: Ահա

թէ ինչով է բացատրւում Ղափանի խոշոր անտառների եւ փարթամ բուսականութեան ներկայութիւնը եւ Սպուլխի ու նրա հարեւան երկրամասերի ամայութիւնը, մանաւանդ երբ արհեստական ոռոգում եւ պոյութիւն չունի։ Կասպից Ծովից բարձրացող ամպերը միշտ չեն կարողանում մագլցել Սպուլխի արեւելա-հիւսիսային բարձրութիւնները եւ անձրեւները թափւում են Ղափանի շրջանում։

Նոյն պատկերն է մեզ ներկայանում պատմական Հայաստանի արեւմուտքում։ Սարըգամիշի ընդարձակ անտառները, Օլթիի փարթամ բուսականութիւնը, Սխալցխայի, Բուռի հովտի անմահ կանաչութիւնը առատօրէն ոռոգւում են Սեւ Ծովի խոնաւութիւնից. մինչդեռ հիւսիսից հարաւ ընկնող բարձր լեռնաշղթաները պատնէշ են կանգնած նոյն խոնաւութեան առաջ ու Ղարսից ու Ղարաբաղից սկսած դէպի Հայաստանի հողամասերը միանգամայն զուրկ են անտառներից եւ փարթամ արօտներն ու խոտաբոյսերը աճում են գլխաւորապէս ձմեռայ չափազանց առատ ձիւնների հեռանքով։ Սա թէ ինչո՛ւ մեր երկրի կլիման կոնտինենտային — ցամաքային — է կոչւում։

Նման բնական արգելքներ պոյութիւն ունին նաեւ երկրի հիւսիսում եւ հարաւում։

Քանի որ բնական պայմաններով ծովերի պոլորշիների ընթացքին խանգարող

արգելքներ կան, մեր երկրի մեծագոյն մասը զրկուած է որոշ չափով նաև այդ գոլորշիների մթնոլորտը մեզմացնող քարիքից։ Ամառուայ շոգերը մեր երկրում, ոչ միայն դաշտային մասերում և հովիտներում, այլ մինչև իսկ լեռների բարձրունքներում, ցերեկը անտանելի են լինում, նոյն համեմատութեամբ ձմեռուայ սառնամանիքներն են մեր երկրի կենդանական և բուսական աշխարհին դաժան և անտանելի ծանր հարուածներ հասցնում։ Ահա թէ ինչո՛ւ Հայաստանը երկրագնդի այն մասերից է, որտեղ կուլտուրական և բնական կենցաղ ստեղծելու համար, պահանջւում է շատ աւելի մեծ էներգիա և նախաձեռնութեան ոգի, քան աշխարհիս շատ և շատ բախտաւոր երկրամասերում։ Այդ նախաձեռնութեան ոգին ամենից առաջ պիտի արտայայտուի այն ուղղութեամբ, թէ ինչ որ բնական եղանակով պատրաստի գոյութիւն չունի անհրաժեշտ չափով, պիտի ձեռք բերուի տեղուն աշխատանքի և խելացի ու նպատակայարմար գործադրած արուեստի միջոցով։ Գիտակցող անհատը, համայնքն ու պետութիւնը պարտաւոր են ըմբռնելու տուեալ գրութիւնից բղխող մեծագոյն կարիքը և իրենց էներգիան այդ կարիքին ի սպաս դնելու։

Հայաստանում ապրող հայ մարդը և նրանից առաջ նոյն երկրում ապրող ժողովուրդներից ոմանք ըմբռնել են այդ մեծ

կարևորությունը, թէ Հայաստանը առանց արհեստական ոռոգման կարող է առ առաւելն ու գլխաւորապէս խաշնարածութեան վայր ծառայել, զուրկ նատակեաց կեանքի քաղաքակրթութիւնից։ Հարիւր տարի ցարական Ռուսաստանը — հիւսիսային հզոր արծիւը — մեր երկրի տէրն ու իշխողն էր բառի ամենավատ մտքով, թէև կուլտուրական պետութեան հովերով. հարիւր տարուայ ընթացքում այդ «կուլտուրական» պետութիւնը մեր երկրում անցկացրեց միայն երկու ուղղութեամբ շոսէներ և մի երկաթուղու գիծ, այն ևս պատերազմական և հարևան երկիրներին տիրելու նպատակով։ Իսկ ջրաբաշխական որևէ ձեռնարկ, բացի այն որ պետականօրէն այդ չի կատարել, շատ անգամ արգելում էին նաև մասնաւոր ձեռնարկները։ Երկար տարիներ անհետևանք էին մնում Էջմիածնի վանքի դիմումները Զանգու գետից ջուր հանել Վաղարշապատի բերքատու տարածութիւնները ոռոգելու համար։ Այդ իրաւունքը ձեռք բերուեց միայն 1912 թ. այն ևս անհատական ագդեցութեան շնորհիւ։ Շուշեցի յայտնի բժիշկ Մովսէս բէկ Աթաբէկեանը ցանկանում էր Ստեփանակերտի մօտ իւր ջրաղացի ջուրը օգտագործել փոքրիկ հիդրոկայանի համար. տարիների դիմումներից յետոյ միայն իրաւունք ստացաւ, դարձեալ անհատական կապերի շնորհիւ. այլապէս երկար ժամանակ նրան

իրաւունք չէին տալիս։ Աւելորդ է օրինակները կուտակել։

Ցարական իշխանութիւնը բաւականացաւ անփոփոխ պահպանելով պարսից տիրապետութեան ժամանակաց ջրային օրէնքները և ստիպելով տեղական ազգաբնակութեանը, որ պահպանեն հին առուները տարեկան անհրաժեշտ նորոգութիւններով։ Մի՛ակ փորձը կատարուեց մի քանի իշխանական եւ հարուստ ռուսների ձեռքով, որ Երասխ գետից ջուր հանեցին — Սրապդայեանի առուն — նրա ափերին գտնուող ամայի հողերը ոռոգելու համար, քամբակամշակման նպատակով։ Այն եւս կիսակատար թողնուեց եւ Խորհրդային կառավարութիւնը աւարտ հանեց։

Իսկ Դաշնակցական կառավարութիւնը. նրա շինարարական գործունէութիւնը արտայայտուեց նրանով, որ Բագուեցի խոշոր կապիտալիստ Մայիլեան եղբայրներին առատ կոնցեսիաներ տուեց երկրի հանքային, անտառային եւ ճանապարհային հարստութիւնների ու ձեռնարկների շահագործման համար։ Նրանք Թիֆլիզի Սոլոլակ թաղի իրենց գրասենեակում բազմած, հպարտութեամբ պարծենում էին, որ իրենց պորֆեյլը լի է դաշնակցական կառավարութիւնից ստացած կոնցեսիաներով։ Ոչ միայն այդքան։ Էջմիածնի վանքը Զանգուի առուն շինել վերջացրել էր եւ ջուրը բերել հասցրել էր վանքի անտա-

ոը։ Սակայն կարճ ժամանակից յետոյ պարզուեց, որ առուի ճանապարհին այսպէս կոչուած հարաւիներ, ստորերկրեայ ճեղքուածներ կան որ կլանում են ջուրը։ Իսկ որոշ տեղերում աւազի բարձր շերտերը շարունակ փլչում են և խանգարում ջրի հոսանքին։ Վանքը բերել տուեց մեծ քանակութեամբ ցեմենտ և շինանիւթեր, վատնուած տեղերը վերաշինելու։ Դաշնակցական կուսակցութիւնը, իւր զլխաւոր պատասխանատուութեան օրերին, այդ բոլոր պատրաստի նիւթերը խլեց վանքից, վերանորոգելու Սրաքսի Իգդիր տանող կամուրջը, որ իւր իսկ կարգադրութեամբ քանդուած էր։ Վերանորոգութիւնը կատարուում էր, որ տաճիկ զօրքերը տահման անցնեն և մինչև Իրանց, ապրստամբներին հետ, կռուեն Նորահասատան Խորհրդային կառավարութեան դէմ։

Բ. Խորհրդային կառավարութեան ձեռնարկները.

Իսկ ի՞նչ ենք տեսնում Խորհրդային կառավարութեան հաստատութիւնից յետոյ։ Սէլորդ կլինի թուել, թէ մեր երկրի բանուորա-գիւղացիական իշխանութիւնը, ժողովրդի կարիքներին և նրա մեծագոյն շահերին նախանձախնդիր, մէկուէկէս տասնամեակի չնչին ժամանակամիջոցում ինչ հսկայական չափերով է առաջ տարել եր-

կրի կենդանացման գործը յատկապէս ռոդման միջոցներով։ Սառանձին հիացումով եմ մտաբերում այն օրերը, երբ նորահաստատ մատոդ կառավարութիւնը առաջի հերթին ձեռնարկեց Զանգուի առուի աւարտման գործին։ Մեր երկիրը իրենից ներկայացնում էր աւերակների կոյտ, ոռվալլուկ և. մերկ բնակիչներով։ Չկար ապահովութիւն, ժողովուրդն ապրած լինելով դաշնակ կառավարութեան վայրագ ձևերը, երբ որև թիւրելուց յետոյ վառնպաւոր էր նոյն իսկ վաղարշապատից Երևան գնալը, ոչ թէ աւելի հեռու տեղերից այդ օրերում Խորհրդային կառավարութիւնը ժողովրդի ծոլ կարիքների բաւարարման գործն էր առաջ տանում և թէ շինարարական ձեռնարկներին ձեռնամուխ լինում։ Հենց այդ օրերին մեր մատոդ կառավարութիւնը սկսեց էջմիածնի առուի շինարարութեանը։ Առուի աշխատանքները չէին վերջացել, վրայ հասան մեր երկրի ցրտերը, որից սաստիկ նեղուում էին աշխատողները, թէ վերահսկողները. բայց սկսած գործը չկանգնեցրին և ծրագրուածը ժամանակին աւարտեցին։

Սակայն այդ սկիզբն էր խոշոր ծրագիրների և մի տեսակ կարկատան արդէն նախապէս կատարուած կիսկատար գործի։ Ինչ խօսք որ Հայաստանի բոլոր գիտակ քաղաքացիների յիշողութեան մէջ տակաւին թարմ է Շիրջրանցքի մեծագոյն ձեռ-

նարկը, որի չափով ձեռնարկ մեր հնագոյն պատմութեան ամբողջ ընթացքում, բացի Ուրարտացիներից, ոչ մի իշխող չի կատարել, ոչ հին Հայերը, ոչ Պարսիկները, ոչ Հռոմայեցիներն, Արաբները եւն.։ Շիրջրանցքի աշխատանքները վերջացել էին եւ տեղի էր ունենում նրա բացման մեծագոյն հանդէսը։ Բազմաթիւ հիւրերի մէջ էր հռչակաւոր Ֆրիտեօֆ Նանսենը, որ Ազգերի Լիգայի կողմից, մի յանձնախումբի գլուխ անցած, եկեր էր Հայաստան իբր թէ այդ Լիգայի կողմից մեր երկրին օգնութիւն հասցնելու։ Այդ լաւ մարդը, իր կամքից եւ ցանկութիւնից անկախ, մեր երկրի համար ոչինչ անել չկարողացաւ, բայց իբրեւ յիշատակ իւր ճանապարհորդութեան գրեց մի գիրք — Արմենիա՝ խաբուած ժողովուրդ — անուանով, գերմաներէն, անգլիերէն եւ ֆրանսերէն լեզուներով հրատարակուած, որի մէջ համակրութեան մեծ եւ խրախուսանքի էջեր է նուիրում Հայաստանի երիտասարդ կառավարութեանը եւ Շիրջրանցքի գործը արդարացի կերպով ներկայացնում է իբրեւ կենդանի կոթող եւ հաստատուն գրաւական երկիրը լաւագոյնս կառավարելու։

Գ. Ե՞րբ եւ ի՞նչպէս է սկսել ոռոգումը մեր երկրում.

Բոլոր ազգերի հնագոյն պատմութիւն-

նը սկսում է առասպելներով։ Առասպելների և կրօնական պաշտամունքի կերպարանքով են ժողովուրդների մէջ պահպանւում հանրօգուտ ստեղծագործութիւնների յիշատակները։ Մեր երկրի մէջ ջրի ոռոգմամբ երկիրը շէնացնելու աշխատանքները ժողովրդի յիշողութեան մէջ սկսել են անյիշատակ ժամանակներից և պահել ժողովրդական հեքիաթների ձևով, վիշապների պաշտամունքով և աստուածաշնչեան առասպելով։ Մեր հեքեաթների մէջ սովորական են ջրերը կլանող և ցամաքեցնող հրէշների պատմութիւնները, որոնցից ազատւում են մարդկային, յատկապէս կոյս աղջիկների զոհաբերութեամբ(*)։ Ջրերի պաշտաման կուլտը յայտնի դարձաւ, երբ Պրոֆեսօր Մառը Փառնիի գաւառում գտաւ վիթխարի քարերի վրայ փորագրուած վիշապներ, որ իրենց օձային կերպարանքով, ոլորտներով հոսող առուների ջրերն են յիշեցնում։ Իսկ բիբլիական առասպելը աւելի բան է տալիս։ Նախ այդ առասպելով նոբաստեղծ առաջի մարդն ու կինը Հայաստանի բարձունքներից բղխող չորս գետերի ակունքների սկզբում տնկուած պարտեզումն են բնակութիւն ստանում։ Մինչև օրս անկորուստ պահւած է Բարձր Հայքում, Եփրատ գետի ակունքներում,

(*) Տե՛ս «Բլբուլ կուշ» Ազգ. Հանդէս, 1912. XXIII 149-172։

Բարդուս անունը, որ ըստ ամենայնի յի-
շեցնում է Աստուածաշնչի «պարադիզը»։

Սակայն ուելի հետաքրքիր և նշանակա-
լից է Ջրհեղեղի աւանդութիւնը, որ պահուած
է ոչ միայն Աստուածաշնչի մէջ, այլ շատ
ուելի հին բաբելոնական գրականութեան
մէջ, համարեա թէ բառացի և նոյնանման։

Բաբելոնիայի ազգային մեծ հերոսն
էր Գիլգամեշը. Ն. Ք. 2768 թուականից
սկսած թագաւորող Նարամ-Սինի ժամա-
նակակից։ Պեղումների շնորհիւ գտնուած
են ազգուանների վրայ սեպաձև գրութեամբ
Գիլգամէշին նուիրուած պոէմների հատուած-
ներ, որի մասն է կազմում Ուտանապիշ-
տիմի պատմութիւնը, որ Բաբելոնիայի
Նոյն է։ Ինչպէս Նոյ, սա ևս նախապէս
աստուածներից տեղեկանում է, որ տեղի
է ունենալու ընդհանուր Ջրհեղեղ և որից
ազատուելու համար տապան պիտի շինի
իւրայիններով և ամեն տեսակ կենդանի-
ներով մէջն պիտի ապաստան գտնի, մա-
հանից փրկուելու համար։ Այդպէս էլ նա-
տանում է, ինչպէս Նոյը՝ և Ջրերը պակա-
սած ժամանակը իւր տապանով կայան է
գտնում Տիգրիս և Փոքր-Զաբ գետերի
մէջտեղում գտնուող Նիսայիր լեռան վրայ։
Ինչպէս Նոյը՝ Արարատ լեռան վրայ։ Նոյը
տապանից դուրս գալով Արարատի փէշե-
րին բնակութիւն է հաստատում և խաղողի
առաջին այգին տնկում։ Ահա թէ երբ է Հա-
յաստանում սկսել երկրի մշակութիւնը։

յատկապէս այգեգործութիւնը և նրա հետ անհրաժեշտապէս կապուած առոգման աշխատանքը։

1913 թ. գերմանական և զվիցարական մի արշաւախումբ, 40 հոգուց բաղկացած, որին միացանք մենք, բարձրացաւ Արարատը, մի մասը մինչև գագաթը։ Ճանապարհորդների միւս մասը, այսպէս կոչուած Ալպեան կլուբի Ընկերութեան անդամներ, իսկապէս գերմանական օֆիցերներ էին, որ մեծ պատերազմի նախօրեակին եկել էին, Արարատ բարձրանալու պատրուակով, ռուս-տաճկական սահմանները ուսումնասիրելու։ Միայն թէ 40 հոգուս մէջ կային իսկական ալպինիստներ և Բեռլինի բոտանիկական պարտէզի դիրեկտոր, յայտնի մասնագէտ բուսաբան Կեօլերը։ Սա առ տեղեաւն կատարած իւր ծանօթութեան հիման վրայ մեզ այն կարծիքը յայտնեց, թէ հաւանական Արարատի փէշերը հնագոյն ժամանակներից առոգման առուներ ունէին և լաւ մշակուած էին, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ցորեն բուսնում է այնպիսի բարձրութեան վրայ, որ ուրիշ երկրամասերում, նոյն զօտում, սովորական չէ և չի հանդիպում։

Ուրարտեան սեպագիր արձանագրութիւններից մէկը գտնուել է Արարատի փէշերին, այժմ աւերակ Դաշբուռուն գիւղի մօտ։ Արձանագրութիւնը փորագրել է տուել Վանից հիւսիս արշաւող Մենուա

թագաւորը, այժմ Շամիրամ–սուլ անուանով յայտնի առուի հեղինակը։ Հաւանական է ենթադրել, որ նա իւր տիրապետութեան նոյն վայրում եւս, ինչպէս իր երկրում, ջրային աշխատանքներ է կատարել, բայց բիբլիական և բաբելոնական առասպելը շատ աւելի հին է քան Մենուասի ժամանակը։ Միայն մանրամասն հետախուզութիւնները կարող են պարզել գերմանական պրոֆեսորի ենթադրութիւնը, Մենուասի հնարաւոր ձեռնարկը և առասպելի կապը։

Դ. Ո՞ւրտեղից է սկիզբն առել մեր երկրի հնագոյն կուլտուրան.

Տասն և ութերորդ դարից սկսած եւրոպական ազգերը, Ֆրանսացիք, Անգղիացիք, Գերմանացիք, վերջերս աւելի մեծ չափով Ամերիկացիք, իրենց լաւագոյն գիտնականների աշխատանքներով ուսումնասիրում են մարդկութեան քաղաքակրթութեան ծագման և սկզբնաւորութեան վայրերը, երկրի երեսին կանգուն, աւերակ կամ կիսաւերակ դրութեամբ եղած յիշատակարանները. կարդում և բացատրում են ծանօթ և միանգամայն անծանօթ կամ մոռացած գրերն ու արձանագրութիւնները. սակայն դրանով եւս չբաւականանալով, հսկայական ծախք և աշխատանք է կատարել և կատարւում է

A I/7540

գետնի տակ երկար դարերի կուտակված հաստ հողաշերտերով ծածկված և յաճախ մեծ, առերևույթ բնական, բլուրների կերպարանքով, պահված հին քաղաքների, գերեզմանների, առանձին յիշատակարանների և այլն աւերակներ՝ պեղումների միջոցով բաց անել և դրանց օգնութեամբ մարդկութեան անցած կուլտուրայի մասին հաստատուն փաստեր ձեռք բերել։ Շնորհիւ այդ պեղումների և այլ եղանակով ըստացված գրաւոր և նիւթական անհատնում յիշատակարանների, բոլորովին մոռացված և կամ հազիւ ծանօթ ժողովուրդների պատմութիւնը, գրականութիւնը, կրօնը, օրէնքները, արհեստն ու գեղարուեստը, գիւղատնտեսական, առողջապահական, ընտանեկան և բազմաթիւ այլ իրական փաստեր ներկայումս ամէն մի հետաքրքրող անհատի համար ուսումնասիրելու և ծանօթանալու առարկաներ են դարձել։

Թէ ինչ առաջնակարգ նշանակութիւն ունին նման աշխատանքները նաև մեր երկրի նկատմամբ. յիշենք պրոֆեսոր Ակադեմիկոս Մառի վերին հսկողութեամբ կատարուած պեղումները։ Երբ վերջի պատերազմի ժամանակ ռուսաց զօրքը կարճ ժամանակով տիրապետեց պատմական Վան քաղաքին, Ակադեմիկոսը կազմակերպեց հնագիտութեան հետախուզող մի յանձնախումբ և Վանում պեղումներ կատարելու

գործը յանձնեց իր աշակերտ Օրբելուն։ Սա բերդաքաղաքի ժայռի մի պատուանդան, որ հողակոյտով թաղված էր, սկսեց պեղել և գտաւ գլուխը կոտրած ուրարտեան մի կոթող (stele) մեծ քառակուսի պատուանդանի մէջ ամրացրած։ Կոթողը և պատուանդանը ծածկված էին սեպաձև ընդարձակ արձանագրութեամբ։ Վանի մինչ այդ յայտնի մեծ արձանագրութիւնն է Խորխորի կամ Մեհերի դրան բնական ժայռի վրայ գրածը. Օրբելու գտածն ունի 263 տող. Խորխորինը 398։ Նորագիւտ արձանագրութեամբ Ուրարտեան պատմութեան ամենահետաքրքիր հատուածն է փորագրուած. երբ այդ պետութիւնը Ասորեստանի դէմ յաջող պատերազմներով ընդարձակել էր իւր իշխանութեան սահմանները և աշխարհակալական մեծ պետութեան դրութեան հասել։

Յոյն պատմահայր Հերոդոտի պատմութիւնից արդէն ծանօթ էին հնագոյն ազգերի, Եգիպտացիների, Ասորա-Բաբելոնիայի, Պարսիկների, Սկիւթացիների պատմական անցեալից բաւական ամփոփ տեղեկութիւններ, իսկ այնուհետև մինչև ներկան արդէն գոյութիւն ունին շատ հարուստ և անընդհատ պատմական գրածքներ։ Սակայն նորագոյն վերոյիշեալ ուսումնասիրութիւնները եկել են ճշգելու, լրացնելու և հարստացնելու մարդկութեան քաղաքակրթութեան անցեալի պատկերը։ Այժմ մենք գիտենք, թէ եւրոպական կո-

չեած քաղաքակրթությունը ինչ հանգրանաններ է ունեցել և ինչ եղանակաւ է կատարելագործել։ Այդ ուսումնասիրությունները պարզել են որ համարեա թէ միաժամանակ, Քրիստոսից մօտ 4000 տարի առաջ, Նեղոսի և Տիգրիս ու Եփրատ գետերի հովիտներում է ծագում առել մեր քաղաքակրթության արշալոյսը։

Եգիպտացիները հիւսիսային Աֆրիկայում և Սումերացիք ու Աքքադներ կոչեած ժողովուրդները Փոքր-Ասիայի արևելքում խոշոր գետերի բուսցրած ճոխ բուսականությունից օգտուելով, թողնելով որսորդական և խաշնարածական ատանդական կենցաղը, նստակեաց են դառնում, սովորում երկիրը մշակել և երկրագործական արտադրությամբ իրենց կեանքն ապահովել։ Բնությունն ինքն է նախնական մարդուն քաղաքակրթության առաջին քայլերն անելու ճանապարհը ցոյց տալիս։ Ամէն տարի, աշնան արևադարձին, Նեղոս գետի հարաւում բարձր լեռների և լճերի շրջանում, տեղատարափ անձրևների հետևանքով, մեծ քանակությամբ ջրեր են գոյանում և երկրագնդի ամենաերկար Նեղոս գետի հունով թափւում են Միջերկրական Ծովը, հեղեղի տակ առնելով մի բարակ երկար շերտի ձգեած դաշտեր, գետերի երկու կողմում։ Դադարում են անձրևները, նեապած ջրերը նորից տեղաւորւում են գետի բնական հունի մէջ. իսկ

խոնաւութեամբ և մանաւանդ ջրային տիղմով ծածկուած դաշտերը, տրոպիկ արևի տաք ճառագայթների ազդեցութեամբ, ծածկւում են փարթամ բուսականութեամբ։ Նոյն երևոյթը տեղի է ունենում Եփրատ և Տիգրիս գետերի ընդարձակ հովտում, երբ գարնան արևադարձին սկսում են հալչել պատմական Հայաստանի բարձունքների հատ ձեան շերտերը, որտեղից սկիզբն են առնում այդ գետերը և լանալով այդ մասերի պարարտ սևահողը, տանում ծածկում և հարստացնում են Միջագետքի ընդարձակ դաշտերը և արագահաս և ճոխ բուսականութեան յարմարութիւն ստեղծում։

Այդ երկու երկրամասերում բնակութիւն հաստատած ժողովուրդները, որոշ չափով միմեանցից անկախ, հիմք են դնում մարդկութեան քաղաքակրթութեանը, ստեղծելով պետական կազմ, ժողովուրդների համակեցութեան օրէնքները, արուեստները և գեղարուեստ, մանաւանդ ճարտարապետութիւն և քանդակագործութիւն. ստեղծում են կրօնական բազմապլուսի ըմբռնումներ, և մեծապէս զարգացնում գիւղատնտեսութիւնը, ոռոգման բաւական բարդ սիստեմով։ Իսկ ամենից գլխաւորը՝ գրերի գիւտն են անում և սովորում բնութեան մէջ եղող հանքերը մշակել և օգտակար դարձնել։

Դարեր տևող, դանդաղ բայց հաստա-

տուն առաջ ընթացող քաղաքակրթությունը, յիշեալ երկու վայրերում չի պարփակվում, որովհետև մի կողմից մթերքների փոխանակության անհրաժեշտությունը սկիզբն է դնում հարևան ժողովուրդների հետ վաճառականական կապեր ստեղծելու, միւս կողմից ուրիշի աշխատանքին տիրանալու կամ ուրիշներին իրեն բռնությամբ ծառայեցնելու ցանկությունը, փոխադարձ յարձակումների և պատերազմի աղբիւր ծառայելով, ժողովրդներին շփման մէջ են դնում և միմեանցից սովորում են ինչ որ անյայտ էր։

Այդ եղանակով նոր ժողովուրդներ քաղաքակրթության մասնակից դառնալով, իրրև աւելի թարմ և խիզախ զանգուածներ, տիրանում են հների ուսմանը և պատերազմներում նրանց յաղթելով, տիրանում նրանց երկիրներին և նոր աշխարհակալ պետություն կազմում։

Մօտ 1500 թուականին Եփրատ գետի ափին հիմնուած Բաբելոնիա մայրաքաղաքին տիրանում է Ասորեստանի ժողովուրդը, որի Նինուէ մայրաքաղաքը գտնուում էր նոյն Միջագետքի աւելի հիւսիսային մասում, կառուցուած Տիգրիս գետի ափին։ Մօտ հազար տարի է տևում այդ աշխարհակալ նոր պետությունը, ախոյեան ունենալով իրենցից աւելի հիւսիս-արևմուտք գտնուած ժողովուրդներին, նաև Ուրարտացիներին։

Եգիպտական քաղաքակրթությունը ևս պարփակված չմնաց Նեղոսի ափերում. վաճառականությունն ու տիրապետության արշաւանքները նրանց ուղղեցին դէպի ասիական երկիրները. Պաղեստինի վրայով դէպի Սիրիա և դէպի Փոքր-Ասիա, և հետագայում նոյն Փոքր-Ասիան հանդէս բերաւ Եգիպտոսին տիրող Հիւքսոս ժողովրդեանը և Եգիպտոսի ամենամեծ ախոյեան Հետիտական ժողովրդին, մասնաւորապէս նոյն ժամանակներում, երբ Սաոբեատանցիք սկսեցին իրենց տիրապետական արշաւանքներն ընդդէմ Բաբելոնիայի։

Հետիտներն ու Ուրարտացիք, որ իրենք իրենց Խալդեր են կոչում, հին պատմական գրականության մէջ հազիւ են յիշատակուած, առանց կարևոր մանրամասնութիւնների, մինչդեռ երկուսն էլ ընդհանուր պատմութեան և մասնաւորապէս մեր երկրի անցեալի համար առաջնակարգ նշանակութիւն ունին։ Նրանց թողած յիշատակարանները եւրոպական ուսումնասիրութեամբ յայտնաբերուեցին. նրանց մեզ ժառանգութիւն թողած հիերոգլիֆաների և սեպաձև արձանագրութիւնների ու գրածքները նորագոյն հետախուզումների շնորհիւ են մատչելի դարձել և այդ երկու մեծ պատմական ժողովուրդների անցեալը մեր առաջ պարզել։ Եւ որովհետև երկու ժողովուրդներն էլ հնում մրցակից են եղել Եգիպտացիներին և Սաոբեատան-

ցիններին՝ սրանց յիշատակարաններում եւ բաւական հարուստ տեղեկութիւններ կան որ գալիս են լրացնելու տեղական հարաւզատ աղբիւրների թերիները։

Հետաքրքրական իշխանութիւնը աւելի հին է ուրարտականից. նրանց բնակավայրն էր Փոքր–Ասիան՝ Հայաստանի արեւմուտքում Հալիս գետի եւ նրա մերձակայ երկրամասերում. գլխաւոր մայրաքաղաքն էր Հատտի, ներկայումս Բողազքեոյ, որտեղ պեղումների միջոցաւ ի յայտ են բերուած նրանց ստեղծագործութեան կարեւոր մնացորդները, անշուշտ եգիպտականից ազդուած. նրանք ստեղծել են իրենց գրերը եւ որ ընդհանուր քաղաքակրթութեան համար ամէնաէականն է, նրանց է վերագրւում երկաթի մշակութիւնը՝ մի քանի գիտնականների կարծիքով։

Ը. դարում Ասորեստանցիների թրծած աղիւսների պատմական արձանագրութեամբ, սեպաձեւ գրերով անձանագրուած է որ 1115–1110 թ. թագաւորում էր Թեգլաթ Պալասար առաջինը։ Սա էր որ արշաւելով դէպի հիւսիս, մտնում է Հայաստան. «Մի երկիր որ խիտ անտառներով էր ծածկուած» եւ «որտեղ իրենից առաջ ոչ մի թագաւոր չէր մտել»։ Կործանում է Կուրհիէ եւ Հարիա երկիրները, տեղական աստուածներին գերի վերցնում, նաեւ բնակիչներին, յափշտակում նրանց ստացուածքը, իսկ գիւղերը հրդեհում, ապա

մտնում է նայիրի երկիրը, կռուի մտնում 23 փոքր թագաւորների հետ, չարդում բոլորին և հալածում մինչև Վան քաղաքը և ապա ստիպում իրեն հարկատու դառնալ։ Իսկ նախաքրիստոսեան ութերորդ դարից նոյն Ասորեստանցիներին մօտ առաջին անգամ յիշւում են Ուրարտացիներ։

Յիշեալ դարից սկսած երկու ժողովուրդները, Ասորեստանցիք և Ուրարտացիք, փոխադարձ յաջողութիւններով, միմեանց դէմ շարունակում են պատերազմները, մինչև նախաքրիստոնէական վեցերորդ դարը, երբ արևմուտքից Ուրարտացիների երկիրը ներս են խուժում և վերջնակապես հաստատւում Արմէնները—Հայերը, և մեր երկրին տալիս են իրենց անունը։ Ապա պատմական ասպարէզ է մտնում պարսկական նոր թարմ և պատերազմասէր ժողովուրդը և տիրապետում Բաբելոնիային, Ասորեստանին, Ուրարտացիների ու Հետիտների երկիրներին, մինչև Եգիպտոս, մինչև Հնդկաստան, մի խօսքով ժամանակւայ ծանօթ քաղաքակիրթ բոլոր երկիրներին։

Պարսիկ Դարեհ Աքիմենեան թագաւորի Բեհիստունի բնական բարձր ժայռի վրայ փորագրւած սեպաձև արձանագրութեան մէջ առաջին անգամ պատահում ենք Արմենիա անւանը։ Ասել է վեցերորդ դարից, նախաքրիստոնէական, Հետիտների և սրանցից ուշ եկող Ուրարտացիների տի-

բապետութիւններին տէր էին դարձել Սրմէնները, նոր ժողովուրդ, և ոչ պարսիկ թագաւորը և ոչ էլ նրանից յետոյ հինգերորդ դարու յոյն պատմագիր Հերոդոտը, նախկին տիրողներին չեն ճանաչում, այլ Սրմէններին։

Պարսկական տիրապետութիւնը մերերկրում, երկար կամ կարճ ընդհատումներով, հայկական, մակեդոնական, հռոմէական, յունական, արաբական, սելճուկ և թաթար ցեղերի իշխանութիւններով, շարունակւել է մինչև 1820–1828 թիւը. մինչև ցարական Ռուսաստանի տիրապետութիւնը պատմական Հայաստանի միմասի վրայ մինչև այժմ։ Հետևապէս մերերկրի քաղաքակրթութեան, յատկապէս երկրի մշակութեան ամենամեծ հետքերը պարսիկ տիրապետողները թողած պիտի լինին։

Հայաստանի Պարսիկներից տիրապետութեան ամենահին հաւաստիագիրը և տիրապետողի հպարտութեան արձանն է Բեհիստունի Դարեհ թագաւորի յիշեալ արձանագրութիւնը։ Նա փորագրւած է Քիրմանշահ քաղաքին մօտ, հին Մարերի՝ այժմ Քրդստանի երկրամասում, Եկբատանա, այժմ Համադան քաղաքից դէպի արևմուտք տանող ճանապարհի վրայ։ Սրձանագրութիւնը փորագրւած է բնակութիւնից հեռու վայրում, առերևոյթ հնում էլ այդպէս է եղել, միայն թէ ժայռի անմի-

Ջական ստորոտում բղխում է Պարսկաստանում ոչ սովորական մի հսկայական աղբիւր, որի ներքևում ճահիճներ են։ Համադանից դէպի արևմուտք, դէպի Քիրմանշահ, և այնտեղից դէպի Բաղդատ գընացող ճանապարհորդը այդ ժայռի տակով պիտի անցնի, այդ անուշահամ ջրի ափին կանգ առնի, իրեն և գրասային հանգըստութիւն տալու և զովացնելու և գլուխը վերև բարձրացնելով, պիտի տեսնի հպարտ տէրապետողի բարձրաքանդակ արձանը։ Դարեհի գլխի վերև թեւատարած Ս.հուրամազդան է փորագրուած, նրան յաղթութիւն տուող աստուածը. իսկ առջևում շարուած են, վիզերնին շղթայ, Դարեհի ձեռքով յաղթահարուած բոլոր թագաւորները։ Շղթայուածների մէջ է նաև Ս.ամենայի թագաւորը, որը, ինչպէս արձանագրութիւնն է պատմում, երեք անգամ պարսիկ զօրապետներից յաղթելով, երեք անգամ ապստամբութեան դրօշակ բարձրացրեց, դժուարութեամբ ենթարկուելով օտարի լծին։

Յաղթութեան պատմութիւնը հաղորդող սեպաձև ընդարձակ արձանագրութիւնը գրուած է երեք լեզուներով. պարսկերէն կամ հին պեհլևի, բաբելական և ելամական լեզուներով։

Թէ թուած տէրապետողները երկար դարերի ընթացքում մեր երկրի հողամշակման, յատկապէս ջրերի օգտագործման

համար, բացի Ուրարտացիներից և հայկական փոքր իշխանություններից, այն եւս քրիստոնէական միջին դարերից սկսած, ինչ են կատարել, միւսների արածների մասին տեղեկություն չունինք։ Հաւանաբար պատմական մանրամասն ուսումնասիրությունները որոշ փաստեր ի յայտ բերեն։ Միակ մեզ ծանօթ տեղեկությունն այն է, որ Երևանի Դալմայի առուի հունումը աւանդաբար վերագրւում է ռուսական տիրապետությունից առաջ այդ քաղաքը եւ երկիրը կառավարող պարսիկ սարդարին. սակայն ի նկատի ունենալով Երևան քաղաքի հնությունը և որ այնտեղ միշտ մշակւել է խաղողի որթը եւ այդ-ներ գոյություն են ունեցել, հաւանական ենք համարում ընդունել որ սարդարն աւելի շուտ նորոգել է հին, ուրարտեան թագաւորների հանած առուն, որ ժամանակաւորապէս խանգարւել էր։ Ուրարտացիները Երևանի Ղանլի թափայի մօտ, էյզարում բերդեր էին շինել և աւելի հիւսիս իրենց տիրապետության տակ ունէին, և ինչպէս կը տեսնենք, առուների հանման առաջնակարգ տեղ էին տալիս։

Ե. Ուրարտացիների կամ Խալդիների ձեռագործերը.

Վանայ Ծովի հիւսիսային ափին բարձրանում է մի հսկայական ժայռ, բնու-

թիւնից կարգւած հին ժամանակների համար, թեթև պարիսպների յաւելմամբ, անյաղթելի և անմերձենալի բերդի տեղ ծառայելու։ Իբրեւ բերդ եւ Ուրարտեան երբեմնի հզօր եւ աշխարհակալ պետութեան մայրաքաղաք, ինչպէս տեսանք, զոյութիւն է ունեցել նախաքրիստոնէական ութերորդ դարից, իսկ իբրև բերդ պահպանել էր իւր նշանակութիւնը մինչև վերջի մեծ պատերազմը, տաճիկ կառավարութեան համար։ Նրա դիրքի պեղեցկութիւնը, կլիմայի առողջարար մեղմութիւնը, շրջապատ երկրի մշակութեան յարմարութիւնն ու պտղաբերութիւնը, արհեստական միջոցներով մեծ տարածութիւնների ոռոգման հնարաւորութիւնը, Ուրարտացիներին, գուցէ նրանցից առաջ ապրող մարդկանց միտք է տուել այդ տեղը իշխանութեան գլխաւոր կենտրոն դարձնելու։ Նրա հին ուրարտա-խալդիական անունն է Տուշպա, որ յետոյ Վան-Տոսպ հայկական ձեւակերպումն է ընդունել։ Այդտեղ հաստատուած փոքր իշխանութիւնը, Ասորեստանի գլխաւոր մրցակիցը հանդիսանալով, նախաքրիստոսեան ութերորդ դարում, ինչպէս ակնյայտնի պարզւում է Օրքելու ի յայտ բերուած և Մառի կարդացած ու թարգմանուած արձանագրութեամբ, տիրանում է Ասորեստանի աշխարհակալական դիրքին և նրա տիրապետութեան տակ գտնւած երկիրներին մինչև Միջեր-

կրական Ծովը, իբր իշխանության տակ առնում։

Վանի բնական ժայռերի վրայ քաղաքին տիրող Ուրարտացիները սեպաձև արձանագրություններով արձանացրել են անջնջելի կերպով իրենց շինարարության և յաղթությունների յիշատակը։ 1829 թ. Ֆրանսիական Ասիական Ընկերության յանձնարարությամբ գերմանացի Շուլց գիտնականն ուղարկեց այդ երկիրը հնագիտական հետախուզությունների ենթարկելու և առաջինն եղաւ, որ բնական ժայռերի, ինչպէս նաև յատուկ պատրաստած զանազան քարերի վրայ արձանացած սեպաձև գրությունները ժողովեց հրատարակելու համար։ Յետագայում եւրոպացի, նաև ռուս և հայ գիտնականների ջանքերով աւելի թւով նորանոր արձանագրություններ ի յայտ բերեցին որ բաւական լրիւ կերպով կարդացել են։ Մի կարևոր հանգամանք պարզւում է, որ Ուրարտեան աշխարհակալ թագաւորները, նոր տիրապետած երկիրներում քաղաքներ, բերդեր, մեհեաններ էին կառուցանում, որոշ տեղերում ջրանցքներ անցնում և այդպիսի տեղերում իրենց կատարածների յիշատակը սեպաձև արձանագրությամբ յաւերժացնում։ Այդ արձանագրության մէջ նոքա իրենց Խալդեր են անւանում, երկրի գլխաւոր Խալդի աստուծոյ անունով։

Հետեւելով և առաջնորդւելով այդպի-

ալ արձանագրություններով բաւական մանրամասնութեամբ վերականգնել է այդ շինարար ժողովրդի և նրան առաջնորդող թագաւորների պատմութիւնը։ Համառօտ կանգ առնելով միայն նրանց դէպի Հայաստան կատարուած տիրապետական արշաւանքների վրայ, տեղեկանում ենք հետեւեալը։

Ութերորդ նախաքրիստոսեան դարի սկզբում Մենուա թագաւորը Վանից արշաւում է դէպի Սրաքսի հովիտը և հասնելով Սրարատի ստորոտներին գետի աջ ափին Դաշքուռուն գիւղի մօտ, նոր քաղաք է հիմնում Luhiunini–Լուխիունինի անունով՝ վերափոխելով Menuahiuili։ Նրա որդի Սրգիշտիս շարունակում է հօր սկսածը, գետն անցնում և սրա ձախ ափին, մի բլրի վրայ արդէն գոյութիւն ունեցող հին ամրոցը վերաշինում է, մեհեաններով և այլ շէնքերով զարդարում և իր անունով վերակոչում Սրգիշտիխինիի — Սրգիշտի քաղաք։ Սրգիշտի և նրա անմիջական ժառանգների համար, Վանից յետոյ, այդ քաղաքը երկրորդ մայրաքաղաք է դառնում Սրարատեան դաշտի և նրանից դէպի հիւսիս-արևելք և հիւսիս-արևմուտք ընկած նոր տիրապետած երկրների համար։ Այդ քաղաքի տեղն է այժմ անբնակ Սրմաւիրի բլուրը, որտեղ պատահաբար և ոչ յատուկ հետախուզութեամբ կամ պեղումներով բաւական թւով սեպաձեւ արձանագրութիւններ են գտնւել։

Ուրարտացիները շարունակելով իրենց արշաւանքը բարձրացել են Արագած լեռը Ամբերդի ճորով, ապա Բաշապարանի ուղղութեամբ, իջել են Ծիրակի դաշտը և հասել մինչև Բարձր Հայք, մինչև Սարըղամիշի մօտերքը, և աւելի հիւսիս մինչև Զլգիր լիճ։ Միւս կողմից հիւսիս-արևելեան ուղղութեամբ առաջ ընթանալով Երևանի անմիջական մերձաւորութեան Ղանլի թափա կոչուած տեղում և յետոյ Իլլար գիւղի մօտ պաշտպանութեան և յարձակման բերդեր են շինում, հասնում են մինչև Սևանի լիճը և մերձակայ երկրներով անբողջովին իրենց տիրապետութեան տակ առնում։

Լճի հարաւային և հարաւ-արևելեան մասում, բնական ժայռերի վրայ իրենց սկզբնական դրութեան տեղում անկորուստ պահուած են մի քանի արձանագրութիւններ, ամենից նշանաւորը և ընդարձակը Ռեօլանդուան կամ Սլուչալու գիւղի մօտ գտնուածն է. ժայռի վրայ կախուած մի բարձր ժայռի երեսին փորագրուած և սովորական միջոցներով միանգամայն անմերձանալի ընդարձակ 19 տողից արձանագրութեան մէջ Սարդուրի թագաւորը նկարագրում է իր պատերազմական յաջողութիւնները և յիշատակում, որ յաղթել է 22 թագաւորների եւ նրանց երկրները իր տիրապետութեան տակ առել։ Յիշուած անուններից մի քանիսը համապատասխան են ցայժըմ պահուած և գործածական տեղական

անուններին, իսկ մեծ մասը անյայտ են. հետևապէս անկարելի վերականգնելու տիրած երկրների ամբողջութիւնը։

Այդ շինարար ժողովրդի տիրապետութիւնը մեր երկրում դժբախտաբար երկարատև չի եղել։ Եօթներորդ դարու վերջերից արևմուտքից ներս են խուժում թարմ և պատերազմիկ հորդաներ։ Կիմբներ իսկ աւելի ուշ Արմէններ, միևնոյն ժամանակ հիւսիսից Կովկասեան լեռնաշղթան պատռելով արշաւանքներ են սկսում Սկիւթական զանազան ցեղեր և Ուրարտացիները, որ Ասորեստանի հետ վարած երկարատև պատերազմներով արդէն բաւական թուլացել էին, ընկճւում են, կորցնելով իրենց անկախութիւնը և վեցերորդ դարից սկսած երկրի տէրերը դառնում են Արմէնները, յիշատակուած Պարսկաստանի Բեհիստունի արձանագրութեան մէջ։ Երբ չորրորդ դարում յոյն Քսենեֆոն պատմագիրը տաս հազար յոյն վարձկան զօրքի գլուխն անցած Հայաստանի լեռներով, Վանայ Ծովի մօտով, նահանջում էր դէպի իւր հայրենիք Յունաստանը, հանդիպում է Հայերի և ոչ թէ խալդիական-ուրարտեան իշխանութեան։

Զ. Ուրարտա-Խալդիական ջրաբաշխական ձեռնարկները.

Նեղոս, Տիգրիս և Եփրատ գետերի հե-

ղեղումները տարեայ մէջ կարճ տեւողութիւն ունին. երկար ամիսների աճումն ունեցող բոյսերին կենդանութիւն տալ չեն կարող։ Բացի այդ ջրերը իրենց բնական հոսանքին թողնելով, համեմատաբար փոքր տարածութիւններ էին հեղեղում և յաճախ փոփոխելով իրենց ընթացքը, միանգամ կենդանացրած շրջանը անջրդի և ամայի էին դարձնում։ Հէնց այդ փոփոխութիւնները մարդկանց սովորցրին արհեստական աշխատանքներ կատարել և ջրերի ընթացքը և նրանց շահագործումը ենթարկել իրենց կամքին։ Հնագիտական ուսումնասիրութիւնները պարզել են թէ ի՛նչպիսի ջրային մատակարարման սիստեմներ էին ստեղծւել, թէ ո՛րքան կատարելագործւած էին առուների ցանցերը և թէ մանաւանդ ի՛նչ վիթխարի աշխատանքներ են կատարւել յորդացած ջրերի աւելցուկը ամբարել փոքր և չափազանց մեծ լճերում, տարեայ ընթացքում օգտագործելու համար։ Բնական կամ արհեստական փոսերի ջրերը կամ բաց արխերով առնում էին աւելի ցած ընկած դաշտերը, կամ դոյլերով վերեւ բարձրացնում՝ մօտ ընկած դաշտի համար։ Հնագոյն պրիմիտիւ անիւներով, կենդանիների օգնութեամբ խորքերից ջուր բարձրացնելու արհեստը համարեա անփոփոխ կերպով կիրարկւում է մինչև այժմ Պարսկաստանում և հէնց նոյն Միջագետքում։ Միայն վերջի տարիներում սակաւ առ

սակաւ դուրս են մղում նախնական գործիքներն ու եղանակը, փոխարինելով ջրաշուղ գործիքներով։

Հետևապէս հին մարդկային քաղաքակրթութիւնը երկրագործութեան համար բնական ջրերից օգտուելու երեք սիստեմ ունէր. ինքնահոս առուներով ջրերը հացընել ցանկացած եւ հնարաւոր տեղերը. լճերի մէջ ամբարել աւելցուկ ջրերը ժամանակի կարիքի համար եւ երրորդ՝ աւելի խորքերում գտնւած ջրերը դոյլերով կամ անիւներով վերև բարձրացնել, կամ տանել հացնել աւելի ցած տեղեր, երբեմն գետնատակ առուներով կամ տուներով։

Ուրարտուի թագաւորները Վանի շրջանում եւ Արարատեան դաշտում գործադրել են երեք միջոցները, հոյակապ եւ մեծայուն ձեռնարկներով։

1891 թ. երկու գերմանացի ուսումնական Բեզգ եւ Լեհման–Հաուպտ գիտական արշաւանք կազմակերպելով մանրակրկիտ քննութեան ենթարկեցին Ուրարտացիների պատմական բոլոր վայրերը, ներկայ ժամանակների ռուսական, տաճկական եւ պարսկական երկրներում, իջան մինչեւ Ասորեստան, հասան Նինուէի աւերակները, փոքր չափով պեղումներ կատարեցին Վանի թռիչակալէում, վերստուգութեան ենթարկեցին զանազան մասնագէտների միջոցով արդէն ծանօթ յիշատակարանները եւ երկար ժամանակ մշակում էին

լրենց հաւաքած գիտական մեծ պաշարը։ Երկուսն էլ պարբերաբար հրատարակել են մասնակի ուսումնասիրութիւններ և յօդուածներ, բայց գլխաւոր աշխատանքը դեռ չի աւարտուած։

Զեռնս տակ է Լեմանի Հայաստանի անցեալի ուսումնասիրութեան կարեւոր երկը. Հայաստանը երբեմն եւ այժմ, Armenien Einst und Jetzt, Berlin-Leipzig. 1910 1926 և 1931, երկրորդ հատորի առաջին մասում, երկու հատոր, երեք մասից բաղկացած։ Գրքի մէջ գնահատելի էջեր են նւիրուած Ռուզաս առաջնի եւ Մենուաս թագաւորների շրջանարարութեան մնայուն ձեռնարկներին և ստորերկրեայ ջրերի քարհիներին, և ծանօթանալով այդ նիւթին, հիանում ենք այդ անձանց շինարար մեծ գործերի վրայ, որոնց հետ կարելի է համեմատել միայն ներկայումս Խորհրդային իշխանութեան կատարածները Հայաստանում։ Ծանօթանանք այդ գործերին։

1. Ռուզաս առաջնի լիճը.— Վան քաղաքի արեւելեան կողմում, լեռների մէջ գտնւում է մի արհեստական վիթխարի լիճ, ծանօթ ներկայումս Քեշիշ գեոլ անունով։ Ժամանակը մոռացութեան է տւել երկրի համար այդ բարիքը ստեղծող Ռուզասի անունը և նրա արածը վերագրում են մի անանուն քահանայի։ Բարեբախտաբար անկորուստ մնացել է Ռուզասի

կանգնեցրած կոթողը, մեծ պատանդանի մէջ ամրացրած տափակ սիւնանման մի քար, որի վրայ սեպաձեւ տառերով լճի շինութեան և թոփրակկալէ նոր քաղաքի հիմնարկութեան մանրամասնութիւններն են հաղորդուած, որ առ տեղեաւն արտագրել, կարդացել և թարգմանել է գերմանացի գիտնականը։

Վանից արեւելք ընկած է Վարագայ լեառը, սրա հարաւային ուղղութեամբ գտնւում է Տոնի անունով գիւղը, որի մօտ է Ջրահաւաքման մի վիթխարի բնական փոս։ Տոնից դէպի այդ փոսը վայրենի ճեղքուածներով տեղեր են, ուղղագիծ զառիվայրերով, ժայռերի կտրուածքներով և անդնդախոր վիհերով։ Գիւղից մօտ կէս ժամ հեռաւորութեամբ է Ռուզաասը, յիշեալ միջավարում, իր արհեստական լճի տեղը որոշել, ոչ թէ մերձակայքը չրելու համար, որ վայրենի խորթ ու փորթութեամբ մի տարածութիւն է և ուռոգելու համար միանգամայն անօգուտ կ'լինէր, այլ որպէս զի այդ տեղում ամբարուած ջուրը արհեստական առուներով հեռուն տարէր, դէպ ի պտղաբեր և մշակելի տեղեր։

Լճի տեղը վերին աստիճան յարմար է ընտրուած։ Վիթխարի ձոր է, որի հիւսիսարեւմտեան անկիւնը նեղանում է մինչեւ հարիւր մետրի լայնութեամբ և ունի մի երկրորդ նեղացում ընդամէնը յիսուն մետր լայնութեամբ։ Այդ երկու անցքերը վիթ-

խարի քարերով, կիկլոպեան պատերի ամբարտակով ամրացրած են, որով գոյանում է հսկայական ջրամբարը տարբոյ ջրառատ եղանակներին շրջակայքի աւելցուկ ջրերը ամբարելու համար։ Նեղ, յիսուն մետրանոց բացուածքը գտնւում է հարաւ-արևմտեան մասում և սրա պատնէշը քսան մետրանոց կիկլոպեան պարբսպով է կառուցած։ Այդ պատի մէջ թողնւած է մի շլիւզ, որ ունի 1.50 մետր բարձրութիւն, մի մետր լայնութիւն, շինւած յատուկ խնամքով տաշւած մեծամեծ քարերով։ Շլիւզի անցքի ներսում յարմարեցրած էր տուեալ չափերի մի մեծ սալքար, որ ըստ պահանջել հարկի, կարելի էր ետ քանալ և փակել, ջրերի ընթացքն ու ջրի քանակը կանոնաւորելու համար։ Երկրորդ նեղ անցքի առաջ ևս շինւած է համապատասխան պատնէշ։ Երկու պատնէշներով ամբարւած ջրերը բացւած երկու շլիւզներով ի վիճակի են ամէն մի վայրկեանում 12–15 խորանարդ մետր ջուր դուրս հոսեցնել, որպէսի քանակ կ'հեղեղէր Վանի դաշտային մասն ամբողջովին, հետևապէս այդքան ջրի կարիքը չկար։ Ուստի շլիւզները շինւած էին նաև նրա համար, որ ջրառատ տարիներում նախապէս աստիճանաբար բացւէին ջուր դուրս թողնելու, որպէսզի մինչև պռունգները լցրած ջրամբարից հեղեղներ չթափւէին դէպի Վանի դաշտը։ Տաճկական կառա-

վարութեան տեղական պաշտօնեաներն, առանց ըմբռնելու շլիւզների անհրաժեշտութիւնը, ինչպէս Լեման–Հաուպտն է արտայայտում, հողով ու քարերով փակել էին ուել հիւսիս–արևմտեան անկեան շլիւզը։ 1891 թ. չափազանց ձիւնառատ ձմեռուայ հետեւանքով, Ջրերը լցուցին ամբողջ լիճը. Ջրերը նախապէս պարպելու ճանապարհը փակուած էր, լճից դուրս թափուող Ջրի առաջը արգելքներ չկային, դէպի Վան տանող առուները ծայրէ ծայր լցնելով, սոսկալի թափով ներքև գլորուեցին, միացան Ցայնկոյսների գետակին, քանդեցին եղած կամուրջը, գետեզերքում գտնուած տները, այգիները և պարտէզները։

Ռուզասի լիճը ծովի մակերեւոյթից 2500 մետր բարձր է, իսկ Վանայ լիճը 1625 մետր. երկու լճերի հեռաւորութիւնը միմեանցից ընդամէնը մօտ 30 կիլոմետր է, ուրեմն պարզ է, թէ 1000 մետրաչափ բարձրութիւնից գլորուող Ջուրը ի՞նչպիսի վնասներ ոյժ կ՚ներկայացնէր։

Ռուզաս առաջինը Սարդուրի որդին էր, Ասորեստանի Սարգոն երկրորդի ժամանակակիցն ու հակառակորդը։ Նրա շինած լճի Ջրերը առուներով բերած հացրած են մինչև թոփրակկալէ, ճանապարհին բաւական գիւղերի Ջուր մատակարարելով թէ Ջրելու և թէ Ջրաղացների համար։ Գլխաւոր առուն թոփրակկալէ չհա-

ած, մի քանի ճիւղերի է բաժանւում և ստորերկրեայ անցքերով, բլրից դէպի արևմուտք և դէպի հարաւ-արևմուտք ուղղութեամբ, դուրս հանւում է Վանի Այգեստան կոչւած տարածութիւնը ջրելու։ Ճիւղերից մէկը բաց եղանակով հասնում է դէպի Վանի ժայռի բարձունքները։ Ռուզասը իւր մեծագործութիւնը ձեռնարկել էր որովհետև Վանի Թուխրակկալէ նոր քաղաքի հիմք էր դրել, որի պահպանութեան համար անհրաժեշտ էր մերձակայքի լաւագոյն մշակութիւնը արհեստական ոռոգման միջոցով։ Եւ ներկայումս նրա անկորուստ պահւած արձանագրութիւնը հնագոյն քաղաքներից մէկի հիմնադրութեան ճիշտ ժամանակի և հիմնադրի իսկական հաւաստիագիրն է, իբրև հազուագիւտ փաստ։ 1927 ին Թադէոս Ավտալբէկեանը Նոր Բայազէտ քաղաքում գտաւ մի նոր արձանագրութիւն, Ռուզաս առաջնի, որ կարդացին հայ մասնագէտներ Պետական Համալսարանի պրոֆ. Քալանթարեանն ու Ղափանցեանը։

2. Այս ջրամբարից մեծութեամբ այնքան փոքր չէ Բերկրի արհեստական լիճը. Վանայ լճի հիւսիս արևմտեան անկիւնում, որ առ տեղեաւն ծանօթացել է Բելկը, Լեմանի ընկերակիցը։ Լեմանը այդ երկրորդ լիճը միայն անցողակի է յիշատակում, որովհետև նրա շինողի արձանագրութիւնը չի գտնւած և պակասում են պատմական

մանրամասնութիւններ, ուստի գիտնականը չի հաղորդում տեղեկութիւններ այդ լճի օգտագործման մասին։

3. Մեծուսայի առուն ներկայումս ժողովրդական գործածական Շամիրամ սուի անունով է յայտնի, կամ Շամիրամի առու։ Այդ անունով է յիշատակուած նաև Մովսէս Խորենացու Հայոց Պատմութեան մէջ (Գիրք Ա. գլ. ԺԶ.). «Թէ որպէս յետ մահուանն Սրայի Շամիրամ չինէ զքաղաքն և զարքարտակ գետոյն և զիւր տուն։ . . . Շամիրամ հրաման տայ բիւրուց և երկու հազար արանց անարուեստից գործաւորաց յԱսորիստանեաց և յայլոց իշխելոց և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք լցեն ի յարուեստ գիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին և գործն հաւասար հրամանին առնոյր զկատարուն։

. . . Եւ հրամայէ նախ զարքարտակ գետոյն ապառաժիւք եւ մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալ, ամրաւ շաղեալ եւ քարձրացեալ, որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև յայսօր ժամանակի . . .։ Եւ թէ զփոքր առնուլ դէպ ումեք լինիցի, և ոչ իբր պարտատակաց քար մի արժանաւոր ի շինուածոյ արքարտակին խլել ոք զորեցի, թէև մեծաւ աշխատութեամբ ջանայցէ։ Եւ ի հեղուածս արուեստին՝ որ զքա-

բամբք՝ հայեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հայեցողացն երեւեցուցանէ կարծիս։ Եւ այսպէս ընդ քազուն ասպարէզս անցուցեալ զաւանչարտակն, հասուցանեմ ի նկատեալ տեղի քաղաքին»։

Մարենացու համառօտ նկարագրութեան մէջ գտնւում են առուի շինութեան ուշագրաւ էական մասերը, որպիսին աւելի մանրամասն և նոր հասկացողութեամբ եւրոպացի գիտնականն է տալիս իւր նկարագրութեան մանրամասնութեան մէջ, ինչպէս կ'տեսնենք ներքեւում։ Առուի բուն հեղինակը Ռերտեան Մեհուռաս թագաւորն էր, որը առաջինը արշաւանք սկսեց դէպի հիւսիս, Երասխի ափը և Արարատ լեառը։ Այդ առուն սկիզբն է առնում բնական վիթխարի մի աղբիւրից, որ դուրս է ժայթքում 1750 մետր ծովի մակերեւոյթից բարձր գիրքում, երբեմն հայկական Բժընկերտ գիւղից դէպի հարաւ գտնւող և հարաւից Հայոց Ձորը շրջափակող լեռնաշղթայի ստորոտում։

Ճանապարհորդը տակաւին աղբիւրի ակը չհասած, հեռուից լսում է դուրս ժայթքող ջրի վշշոցը և տեսնում է բարձունքում ճախրող բազմաթիւ ջրային աղմկող թռչունների թռիչքները։ Աղբիւրը բղխում է 30–40 մետր լայնութիւն ունեցող տեղերից, երկրի բազմաթիւ պատռւածքներից, պարունակելով առատ թլթւածքի գազեր, որ պղպջակներով ծածկ-

կում են ջրի երեսը, ջուրը խմելիս գազի պարունակությունը բաւական զգալի է լինում։

Այդ վիթխարի աղբյուրի ջրի քանակը ամէն վայրկեանում 1500 լիտրից աւել է, որ գարնանը շատ աւելի է մեծանում։ Իր բնական ընթացքին թողած այդ ջրերը, ամենակարճ ճանապարհով, ջրվէժներ կազմելով, անօգուտ եղանակով պիտի թափէին վանայ լիճը. Լեմանի նկարագրութիւնից ակներև է, որ այդ աղբիւրի նմանութեամբ մենք ունինք ներկայումս Սիսիանու Շաքիի աղբիւրը, որ ծաղկէփունջի նմանութեամբ սքանչելի մի ջրվէժ կազմելով անօգուտ եղանակով թափւում է Որոտն գետը։ 1931 թւի աշնանը Հայաստանի Խորհրդային իշխանութիւնը, կանխօրէն կազմւած ծրագրով, այդ սքանչելի ջրառատ աղբիւրի վրայ էլէկտրական կայարան շինելու հիմք դրեց և շուտով Շաքիի աղբիւրը իր շրջանի բանւորագիւղացիներին էներգիա և լոյս է մատակարարելու։

Մենուասի առուի ջրերը բնական ընթացքին թողնւած, մինչև Խոշաբի գետակի թափւելու տեղը ընդամէնը հինգ կիլոմետր տարածութիւն ունին. Մենուասը իր արհեստական առուով նրա երկարութիւնը աւելացրել է 15–16 անգամ, ասել է 75–80 կիլոմետր։ Աղբիւրի ակի գլխի վերեւ ցցուած են ժայռեր, որոնցից մէկի վրայ

սեպաձեւ անձանագրւած էր ձեռնարկութեան յիշատակարանը, որ մինչև 1890 թ. իր տեղում պահւած էր, ինչպէս վստահելի աղբիւրից Լեմանն էր տեղեկացել, բայց հետեւեալ տարին արդէն այլ եւս չկարերեւի գլուխել ընկել է ակի աւազանի մէջ։

Բարեբախտաբար բազմաթիւ ուրիշ արձանագրութիւններ կան պահւած առուի ամբողջ շարունակութեան վրայ, իւրաքանչիւրը 4. 9 կամ 13 տողից բաղկացած, ընդհանրապէս համանման բովանդակութեամբ. միակ տարբերութիւնն այն է, որ բազմատող յիշատակարանները փորագրւած են շինարարական և բնական մեծ արգելքների տեղերում։ Դրանց էական բովանդակութիւնն այս է.

«Հզօր Խալդերի համար շինել է Մենուան, Իսպուինիի որդին այս առուն. սրա անուն է Մենուասի առուն»։

Առուի հէնց ակների մօտ հասարակ քարերով և հողակոյտի պատնէշով չրի ընթացքը փոխել են և նրան ուղղել դէպի հիւսիս-արեւելք, դէպի Վերին Բժնկերտ, բաւական խորացրած հունի միջոցով, որով չրի հոսման ոյժը իւրաքանչիւր վայրկեանում երեք մետրի է հաւասար։ Նախապէս ջուրը կուտակւում է մի մեծ աւազանի մէջ, բնական և ապա արհեստականօրէն մեծացրած, և երբ այդ աւազանից դուրս է գալիս, նրան պարփակող առուն ունի 4–5 մետր լայնութիւն, մէկ ու կէս

խորութեամբ։ Վերին Բժնկերտից առուն բաւական ժամանակ ընթանում է ուղիղ դէպի հիւսիս, զիգզագներ կատարելով, Բոյդաղի, Հայկաբերդի և Աստուածաշէն գիւղերի մօտերքով։ Ճանապարհին մի տեղ հանդիպում է Խոշաբի գետակին, որի վերայից անցնում է ծառերի կոճղերից և հողով ու քարով ծածկւած բարձրութեան վրայով, անկասկած հին ուրարտական հիմնաւոր կառուցւածքին փոխարինող։ Անկորուստ պահւած առաջին սեպաձեւը գտնւում է Ներքին Բժնկերտ գիւղի կամրջից հարիւր մետրաչափ ներքև, բնական ժայռի վրայ, ժամանակի և եղանակների հարւածներից բաւական ազատւած։ Այնուհետև սեպաձևերը յաճախ են պատահում։

Յիշեալ գիւղերից առուն ընթանում է դէպի առաջ, մի շարք հայկական (Լեմանի այնտեղ եղած ժամանակում) և քրդական գիւղերի խմելու, ոռոգման և ջրաղացների ջուր մատակարարելով։ Առուի երկարութեամբ բաւական յաճախ տեղերում շինւած են աքվեդուկներ, այնքան հմտութեամբ և հաստատուն կերպով կառուցւած, որ դարեր անվնաս դիմացել են ամէն տեսակ պատահարների։

Շինարարական մեծ և հմուտ վարպետութեան գործ է Իշխանիդոմի աքվեդուկը, շինւած այն հաշւով որ առուն աքվեդուկի պատի վերևի եզերքից քսան մետր հեռու է անցնում և այդ հեռաւորութեամբ

պատնէշ է շինուած մօտը բարձրացող լեռան հանդէպ, որպէսզի ջրի մեծութիւնը և հզօրութիւնն ինքնաս չհասցնի և լեռան հնարաւոր փլուածքներ առաջ չբերի։ Պատը շարուած է հինգ շարք քարով և երեքից չորս մետր բարձրութիւն ունի։

Այն տեղում ուր առուն դուրս է հանւում Հայոց Ձորից և արևմտեան ուղղութիւնից, դարձեալ թեքւում է դէպի հիւսիս, մտնում լեռան պատուածքի կամ տունելի մէջ և ապա ժայռերի փորուածքից դուրս գալուց յետոյ, ճիւղաւորւում է և գլորւելով դէպի ցած, երեք աստիճան ջրաղացների ջուր է մատակարարում։

Այդ ջրաղացների փաստը Լեմանին հիմք է տուել ընդունելու, որ Հայաստանի ամէն կողմ գտնւող ջրաղացներն, իբրեւ ջրաոյժի օգտագործման միջոց, գոյութիւն ունէին Ուրարտացիների ժամանակներից և հետևապէս ջրաղացաշինութեան արհեստը այդ հին ժողովրդից մնացած ժառանգութիւն է։

Իշխանիգոմից կէս ժամ քայլելու հեռաւորութեամբ առուի մասին Լեմանը գրում է. «Առուի ճանապարհին մենք հասանք մի լեռնանցքի, շինութեան համար այնպիսի մի արտասովոր դժւար տեղ, որ դրան յաղթահարելն այդ ջրանցքը դնում է հնութիւնից մնացած ջրաշինարարական ձեռնարկների մէջ, եթէ ոչ ամէնախոշոր, ամենանշանաւորների շարքին»։

Առուի առաջ գտնվում է լեռնային մի վիթխարի վիհ, ընկած արևելյան ուղղությամբ և այդ վիհի միջով պետք էր ջուրն անցկացնել։ Լերան հարավակողմին կառուցված պատի վրայով է տարված առուն։ Ապա պատին տրված է համարյա ուղղանկյուն թեքությամբ ժայռի միջի վիհը մագլցելու համար։ Սկզբի նայողի տպավորությունն այնպես է, որ առուն տարված է այսպես կոչված — կեղծ — երկուստեք լի մի հաստաքաշ քարակոյտի աղեղի վրայով։ Սակայն երբ մոտիկից քննում էք, երևում է, որ հարթ պատակողպէք է դա, մի մետրաչափ լայնությամբ դուրս ընկած ելուստի պատով, որով ջուրը վիհի վրայով անցկացնելը հնարավոր է դարձել։ Իսկական ջրատար պատը ընթանում է արևմուտքից հյուսիս 33 աստիճան թեքությամբ և կառուցված է անդունդից վեց մետր բարձր։ Այստեղում էլ ջրատար մասը ներկայումս ծածկված է իրար խիտ առ խիտ հագցրած ծառաբմատներով. դարձեալ նոր ժամանակվայ կարկատանք։ Ահա այդպես շինած պատի վրայով ջուրը կտրում անցնում է այդ ահռելի վիհը դեպի հյուսիսային կողմը, իսկ յետոյ ծռվում է դեպի արևմուտք։ Այդտեղում առուի հիմքը քարերով սալայատակած է, 30—40 մետր խորությունն ունի, իսկ լայնությունն է 90—110 մետր։ Այդքան մեծ փոսի երկու կողմից պատեր են շարված, որով ջուրը չի կարող

պատուածքներ առաջ բերել, ոչ հիմքը փորփրելով և ոչ կողերի շերտերը ողողելով։

Այդ վիհով գործը չի վերջանում, ճանապարհին ընդառաջ են գալիս դարձեալ դժուար յաղթահարելի խոչնդոտներ, որոնց մէջ ամենանշանաւորը, հնագիտական և տեխնիկական տեսակէտով, Կատեպանը անուն կրող տեղն է, Արտամետի հսկայական ձորը։ Արտամետի ձորում արդէն նկարագրածի պէս, կիկլոպեան պատեր են կառուցուած վիթխարի ժայռերից, ձորի ահռելի բացուածքի համար պատնէշներ յարմարացնելու և ջրի ճանապարհը հարթելու։ Վիթխարի ձորի յաղթահարումից յետոյ, առուն համեմատաբար դիւրին և թեք մակերեւոյթով ընթանում է դէպի Վանի բերդաքաղաքը, նրա մերձակայքին կենդանութիւն տալու համար։

Ուղիղ այն տեղում ուր ջուրը դուրս է գալիս Արտամետի հսկայական ձորից և առաջը բացւում է Վանայ լճի սքանչելի տեսարանը, Մենուասը, թեք մակերեւոյթի վրայ, տնկել է տուել մի խաղողի այգի իր կնոջ անունով և նրա վայելչանքի համար։ Անկորուստ պահուած արձանագրութիւնն է մեզ այդ ուշագրաւ տեղեկութիւնը հաղորդում։ Արձանագրութեան թարգմանութիւնն է.

«Մենուասն է այս խաղողի տնկարանը ձգել իւր Տարիրիաս կնոջ համար և տեղի անունն էլ Տարիրիաս կոչել»։

Վերին Բժնկերտ գիւղից սկսած, 80 կիլոմետր տարածութեամբ բոլոր գիւղերը և Վան քաղաքը Ն. Փ. Փր. ութերորդ դարից սկսած վայելում են Մենուասի մեծագործութեան պտուղները։

4. Լեմանը Վանում ուշադրութեան է առել նաև Այգեստանում գտնւող բազմաթիւ քարհիպնները կամ քանքանները, որոնց թիւը նրա ստացած տեղեկութիւններով 21 էր հասնում։ Այդ քարիպների մէջ կան նորերը և այդպէս էլ կոչւում են և հները. վերջիններս աւելի խոր են ընկած և աւելի հեռաւոր տեղերի հասցրած։ Գերմանացի գիտնականը մասամբ ենթադրաբար է ընդունում, որ քարհիպներով ջուր ստանալու սխատեմը դարձեալ ուրարտատան է և նրանց ժամանակներից մնացած։ Երբ մենք կը ծանօթանանք Պարսկաստանի մի ծայրից մինչև միւսը սփռուած քարհիպներին, սկսած Դարեհի և Քսերքսեսի ժամանակներից, կ'համոզւենք որ կարիք չկար ենթադրութիւն անելու։ Քարհիպներ անշուշտ գոյութիւն են ունեցել ուրարտախալդիական քաղաքակրթութեան օրով և Վանը այդ բարիքն էլ վայելում է նրանցից իբրև ժառանգութիւն ձեռք բերած։ Վանից հիւսիս է գտնւում Թիմարի գաւառը, որտեղ հողերի մեծագոյն մասը քարհիպների ջրերով են ոռոգւում։

Այդպէս մենք գտնում ենք, եզրափակում է գիտնական գերմանացին իր

հետախուզութիւնները, որ հնութիւնն ու ներկան սերտօրէն կցորդւած են միմեանց հետ. ոչ այնպէս ինչպէս Միջագետքում և Բաբելոնիայում, որտեղ քաղաքների հիմնարկութեան վայրերն ներկայումս հիմնայատակ կործանւած են, և ծածկւած աւազի ու փոշու հաստ շերտերով. որտեղ ջրանցքների հետքերը միայն աւազի վրայ ձգւած գծերն են մատնանշում, մինչդեռ խալդիական ստեղծագործութիւնները, իրենց անընդհատ կենսունակ օգտակարութեամբ, ուսումնասիրողի համար իւրայատուկ հմայք ունին: Ռուզասի լիճը, Մենուասի առուն և միւսները մինչև այսօր իրենց գտնւած վայրերին կենդանութիւն տուող երակներն են կազմում:

5. Արշակունի թագաւորների տոհմային գերեզմանատունը և թագաւորական գանձերի պահպանութեան ապահով տեղը ԱՑի — Կամախ բերդն էր: Այդ բերդի մասին Լեմանը գրում է (Հար. Ա. էջ 496—500). Քաղաքը գտնւում է Քեսմուրչայի Ցրատի հետ խառնարանի մօտ, վերջնի ձախ ափին: Այդտեղէն է անցնում նաև Տանաձոր գետակը, ժայռերի թիկունքներով: Այդ տեղը ներկայացնում է մի նեղ սարահարթ, մօտաւորապէս 1 ու մի քառորդ կիլոմետր երկարութեամբ, միանգամայն չոր անապատի կերպարանքով. հին աւերակների անցած փառքի մնացորդներով: Հետաքրքիր հարց էր, թէ ի՛նչ-

պէս են այդտեղ ջուր բերել բաւական խոշոր ազգաբնակութեան կարիքների համար։ Տակաւին պահուած են ուսապաքարի մէջ հնուց փորուած սանդուխների աստիճանները, որ իջնում էին մինչև ներքևում հոսող Տանաձորի ջուրը։ Բայց այդ եղանակով ջուր տանել և ազգաբնակութեանը բաւարարել անկարելի էր։ Տեղական բնակիչների ցուցմունքով Լեմանը հետախուզում և տեսնում է որ Կամախի հետևում գտնուած բարձունքներից փայտեայ խողովակներով 80—100 մետր բարձրութիւնից ջրաբեր առու կար շինուած։ Որոշ տեղերում կարելի էր տեսնել վիմախոր առուներ ջրի համար։ Բացի այդ կային նաև վիմափոր սենեակներ այդ առուների ծայրերին, որ ծառայել են իբրև հսկայական ջրամբարներ և վիմափոր անցքեր նրանց մէջ ջուր թափելու։ Լեման ինքը տեսնում և համոզւում է, որ որոշ տեղերում դեռ պահուած կային փայտեայ խողովակները, հաստատելով տեղացիների պատմածները։

Բացի այդ՝ բերդալերան արեւմտեան կառուցուածքներում կար ջրագլխի հսկայական մեծութեամբ մի բացուածք, և մի շարք կողմնակի խողովակներ, բոլորն էլ վիմափոր, երկարժամանակեայ ջրի հոսանքից լոսուածքներով։

Դէպի Տանաձոր տանող աստիճանների ճանապարհով եւ այդքան զարմանալի եւ դժուարագործ ստորերկրեայ վիմափոր ջը-

բանցքով կենդանացած Անի–Կամախը ներկայացնում էր նախահայկական ջրամատակարարման արուեստի մի գեղեցիկ մնացորդ, որ գոյութիւն է ունեցել նաև հայկական պատմութեան ընթացքում։

Ուրարտացիներից պահւած կան ջրատարութեան և ջրապօծագրութեան ուրիշ հետաքրքիր օրինակներ ևս. օրինակ Բոստան–զայա անունը կրող վանի շրջանի ուրարտեան այն բուրգը, որտեղ պարտէզ էր տնկւած վիմափոր, կամ բոլոր բերդերի դէպի ջուր տանող գետնանցքների վրայ, լայն աստիճանների տերասների վրայ. բայց մենք բաւականանք յիշատակելով այն առուները, որ ուրարտական թագաւորները շինել են Արարատեան դաշտում։

6. Ուրարտեան համեմատաբար կարճատև տիրապետութիւնը ներկայ Հայաստանի տերիտորիայի, սկսած Երասխ գետի ձախ ափից դէպի Սևանայ լիճը, նոյնպէս ջրաշինարարութեան հետքեր է թողել։ Ինանական թուականներին երկու սեպաձև արձանագրութիւն գտնւեցին Արարատեան դաշտում, մէկը Երասխի ձախ ափին, բոլորովին պատահական կերպով, միւսը Զուարթնոցի աւերակներում, պեղումների շնորհիւ։ Առաջինի գտնողը մի գիւղացի էր, որ դաշտում յանկարծակի բռնւած յորդ անձրեւից պաշտպանւելու համար ապաստանարան է որոնում կուտակւած քարերի խառնուրդում, Ֆեալագարխ գիւ-

ղի առուագլխին, մօտաւորապէս Կարա-
կայա հին աւերակ քաղաքի դէմ յանդի-
ման, որտեղից սկսում են Սարդարապա-
տի, Շահրիարի և այլն գիւղերի առուները։

Գիւղացին նկատում է, որ իրեն ա-
պաստանարան տուող ժայռի վրայ ինչ որ
գրութիւն կայ, որ սեպաձև արձանագրու-
թիւն էր։ Ռուս Նիկոլսկի և գերմանացի
Լեմանը ստանալով մեր ուղարկած արձա-
նագրութեան էստամպաժը, մեր նկարա-
գրութեամբ, թարգմանեցին և երևաց, որ
Արմաւիրին տիրող Արգիշտին է գրել տուել
այդ արձանագրութիւնը, որի մէջ յիշա-
տակում է, որ ինքը Արաքսից առու է
(խալդիական պիկի բառով արտայայտուած)
հանել երկիրը ջրելու համար։ Զուարթնոցի
պեղմամբ գտնուած արձանագրութեան մէջ,
շատ աւելի ընդարձակ և ուրիշ տեղեկու-
թիւններով հարուստ, Ռուզաս երկրորդը
յիշատակում է, որ ինքը տիրել է Կուար-
լուի երկրին, քաղաք է հիմնել և Իլդա-
բրուն գետից առու է հանել, հողերի ոռոգ-
ման համար։ Մինչդեռ այս երկու արձա-
նագրութիւնները հաստատուն տեղեկու-
թիւններ են մեզ հաղորդում. Արարատեան
դաշտի ոռոգման համար երրորդ առուի
հանումը բաւական հաւանական մի են-
թադրութիւն է, որի մասին գրում է Լե-
մանը։ Ենթադրութեան աղբիւրն այն է,
որ Սևանի լճի ափերին գտնուած սեպա-
գրերից երկուսի շնորհիւ յայտնի է դար-

ձել, որ այդ լճի ջրերը, ինչպէս նաև Վանայ լճինը, ենթակայ են մօտ երեսուն տարիների պարբերական բարձրացումների և նուազումների։ Սևանայ լճից մի գետակ է դուրս գալիս, որ խառնուելով Մխխանէի լեռներից բղխող գետակի հետ Զանգու գետն է կազմում։ Լճից դուրս եկող ջրի քանակն անհրաժեշտ էր Արարատեան դաշտի ոռոգման համար. մինչդեռ համարեա թէ ցամաքելու աստիճանի է հասնում լճի ջրերի նուազման տարիներում։ Լեմանը ենթադրում է, որ ջրամատակարարման այնքան առաջնակարգ կարևորութիւն տուող ուրարտական թագաւորները բնականաբար պիտի միտք յղանային օգտագործել Սևանի ջրերը ոռոգման համար և նրանցից մէկն է լճից դուրս եկող գետակի ելման անցքը փորել, յատկապէս Ռուզաս երկրորդը, որ իր արձ. հաստատուած աուռի համար միջոց կ'մտածէր Սևանի պէս մի խոշոր ջրամբարից օգտուելու (Տե՛ս նրա գրքի, հտր. Ա.., էջ 164)։

Այսպէս պատահաբար յայտնաբերուած արձանագրութիւնները ապացուցանում են, որ Վանի շրջակայքը այնքան առատութեամբ ջուր մատակարարող թագաւորները, Արարատեան դաշտի պտղաբերութիւնը և ապասելիք հողամշակութիւնն անուշադիր չէին թողել։ Պիտի հաւատալ որ նոր հնարաւոր գիւտերն ապագայում աւելի լրիւ տեղեկութիւններ կ'բերեն։ Աւելորդ

չենք համարում այստեղ կրկնել ուրիշ առթիւ արտայայտւած ենթադրութիւնը, որ Երեւանի առուները պարսկի սարդարներին վերագրւած, Աշտարակի Սկանտուխի առուն, որ 1292 թ. նորոգել է ոմն Յակոբ վարդապետ, հաւանական Ուրարտայինների նախնական ձեռնարկներն են։

7. Հնագոյն տեղեկութիւններից է Մ. Խորենացու հաղորդածը Հայոց Տիրան թագաւորի Գայլատուոյ — ծովէն — հանած առուի նուիրման մասին։ Այսպէս է պատմւած. Արտաշէս թագաւորի Արտաւազդ որդին մեռնում է անժառանգ և Տիրան թագաւորը Անձեւացեաց ազգից Եռանցուաւ անունով պատանուն է տալիս «զամենայն տունն Արտաւազդայ», որան է տալիս Տաճոճ աւանը, հետն էլ ագարակներ և մեծ մի այգի, որի միջով անցնում էր — զետ առուն —, որ հանւում էր Գայլատուոյ լճից. «և զայգին մեծ, յոր մտանէր առուն զետ, հանեալ ի ծովէն Գայլատուայ» (Խորենացի, Պատմ. Գիրք Երկրորդ, Գլ. 62)։

Ստ. Կամսարական գիւղատնտեսը, ինքը Սուրմալուի գաւառից և լաւատեղեակ այդ շրջանին, բերանացի զրոյցում ինձ յայտնեց, որ այդ լճից արհեստական կաւէ խոշոր փողերով ջուր է բերած մինչեւ Երասխի աջ ափին գտնւած Կարակալայի աւերակները։ Իմ հարցին, թէ արդե՞օք Գալատուոյ լիճը — Բալղ-գեօլը արհեստա-

կան մի լիճ չէ իրենից ներկայացնում։ Նա ասաց. առ տեղեաւն այդպիսի հարց իրեն չի տուել, բայց լաւ մտաբերելով լճի երկրաբանական դիրքը, երեք կողմից բարձր լեռներով ու բլուրներով շրջափակուած, իր կերպարանքով Սևանայ լճին նման ամենացածր, զէպի արևմուտք նայող մասում, մի գաշտավայր է ներկայացնում, որից յետոյ խոր բացուածք կայ։ Կարելի է կարծել և հնարաւոր է, որ գաշտի մասը սկզբնական արհեստական կառուցուածք ունենար, գարերի կուտակումով, ուստի աւելի երկարացած և ընդլայնած լինի։ Նա հնարաւոր է համարում ընդունել, որ արհեստական ամբարտակ է կառուցել։

Է. Հայկական ջրաբաշխական ձեռնարկները միջին դարերից ի վեր.

Ուրարտա-խալդիացիներն իրենց քաղաքակրթական գերը վերջացրին Ն. Ք. Գր. վեցերորդ դարից, իրենց տեղը զիջելով Թրակիայից Փռիւգիայի վրայով ներս խուժող Արմենիա-Հայերին, որոնք անշուշտ իրենց մէջ ձուլեցին տեղական հին ժողովուրդներից շատերին, սկզբում Հեթիտներին և ապա Ուրարտացիներին։ Այդ ձուլման պրոցեսի և նոր ժողովրդի առաջ գալու և նախորդների երկրներին տիրանալու հանգամանքները դեռ ևս անյայտութեան թանձր քողով են ծածկուած։ Բազ-

մաթիւ են եւրոպացի մասնագէտների ենթադրութիւնները, բայց հարցը կարող են լուծել միայն իրական փաստեր, որ ծածկուած են երկրի խորը կուտակումների տակ։ Հետքերի և Յալդերի այդպիսի աղբիւրներով այժմ քաջածանօթ դարձած պատմութիւնը այդ է ապացուցանում։ Մինչև Քրիստոսի վերերորդ դարը, մի չափազանց երկար անջրպետ, ոչ գրաւոր յիշատակարաններ են յաջորդական ջրաքաշխական աշխատանքների մասին մեզ տեղեկութիւններ հաղորդում և ոչ էլ երկրի մէջ գոյութիւն ունին ձեռնարկներ, որ մեզ ստիպէին անյայտ մնացած իսկական հեղինակներին որոնելու, ինչպէս Քնշիշ գեօլի և Շամիրամ սուլ օրինակներն են ցոյց տալիս և ոչ էլ այդ ուղղութեամբ ուսումնասիրութիւններ կան կատարուած։

Սակայն թէ այդ 1200 տարիների շրջանում մեր երկրում ջրաքաշխական գործեր չեն կատարուել, անկարելի է. մեր երկրում առանց արհեստական ոռոգման դժուար է քաղաքակրթական կեանք երեւակայել, միայն այս պիտի նկատել, որ հաւանական եղած գործերը փոքր և աննշան ձեռնարկներ էին, կամ հների կարկատանքներ։ Ուղիղ այդպէս փոքր ձեռնարկներ են մեզ ներկայանում հայ զանազան դասակարգի մարդկանց ջրաքաշխական կատարած գործերը, որոնց յիշատակութիւնը պահուած են կամ հայ պատմագիրների մօտ, սկսած

վեցերորդ դարից, կամ եկեղեցիների ու վանքերի պատերի վրայ փորագրուած։ Բաւական յաճախ են տեղեկութիւններ նաև ձեռագիրների յիշատակարաններում, բայց բոլորը ի մի հաւաքել մանրազնին կանոնաւորութեան առարկայ է. մենք բաւականում ենք գլխաւորապէս արձանագրական նիւթերով։

Այդպիսի արձանագրական յիշատակարաններ բաւական շատ են, որոնց օրինակները, թէև թերի արտագրութիւններով և ոչ լրիւ, ի մի հաւաքած տպագրուած են Կ. Կոստանեանի Վիմական Տարեգիր ժողովածուի մէջ, տպագրուած Պետերբուրգում 1913 թ.։ Յարմարութեան համար արձանագրութեան տուեալները բաժանում ենք այսպէս. 1.— Նոր առուներ կամ աղբիւրներ հանելու փաստեր։ 2.— Արդէն գոյութիւն ունեցող առուների նորոգութիւններ։ 3.— Ջրային վէճերի կարգաւորումներ։ 4.— Բարեգործ անձանց նուիրատուութիւններ զանազան վանքերի և եկեղեցիների։

1. Նոր առուներ հանելու փաստեր.

ա. Ներսէս Շինող մականուանեալ կաթուղիկոսը Վաղարշապատում, Հռիփսիմէի վանքից մօտ երկու և կէս կիլոմետր հարաւ-արևելեան մասում արդէն գոյութիւն ունեցող չորս վանքերից զատ շի-

նում է հինգերորդ նորը, Զուարթնոց անունով։ Հոյակապ և չքեղ եկեղեցուն կից շինել է տալիս կաթուղիկոսարան և շրջապատի դաշտի վրայ ընդարձակ այգիներ տնկում։ Այդ այգիների ոռոգման համար տաններորդ դարու Յովհաննէս պատմագիր կաթուղիկոսի վկայութեամբ, Քասախ գետից նոր առու է հանում և բերում հասցնում իր նոր տնկարանը։

Զուարթնոցի պեղումները անբիկբայ ցոյց տուին, որ այդ առուն իսկապէս գոյութիւն է ունեցել, որովհետև բացուեցին Ջրի կանոնաւոր հետքեր, և պեղումներ կատարող Մաչիկ վարդապետը հին առուի հետքերով նոր առու փորեց և բաւական ընդարձակ մաս վերուտին այգիներով և ծառատունկերով ծածկեց։

Պատմագրի հաղորդածը կարօտ է որոշ ճշտման։ Վաղարշապատը դարեր առաջ արդէն ոռոգւում էր Քասախ գետի, հաւանական նաև Զագու գետերի Ջրերով։ Տրդատ թագաւորի ժամանակ Հռոմից Հայաստան փախած կոյսերը չորրորդ դարում յիշեալ Հռիփսիմէի և նրանից ոչ հեռու դէպի արևմուտք ընկած Շողակաթի վանքերի շրջակայքում գտնւած հնձաններում էին տպաւորուն գտել, որտեղ նրանք նահատակւեցին և որտեղ յետոյ վանքերը շինւեցին։ Հետևապէս արդէն չորրորդ դարում Վաղարշապատի ներկայ այգիների տեղում դարձեալ խաղողի այգիներ էին

տնկուած եւ Քաւոխ գետի ջրով ջրուած։

Ներսէս Շինողը գլխաւոր առուն մի ճիւղն է տարել իր նորակառոյց եկեղեցու մօտ։

Ք. Նոր Բայազէտ գաւառի, Ներկայումս Մարտունու շրջանի Ներքին Սլուչայու անուամբ գիւղի արեւելահիւսիսային կողմում մի գեղեցիկ հովտի մէջ շինուած է Հայաստանի չափազանց բազմաթիւ վանքերից մէկը «Վանիսլանու» անունով յայտնի, որի մանրամասն նկարագրութիւնը յիշատակարաններով տալիս են Մեսրոպ Սրբազան Սմբատեան իր «Գեղարքունիք» գրքի մէջ և աւելի լրիւ Եր. Լալայեան իր հրատարակած Սզգ. Հանդէսի 1913 թ. XIV. էջ 51—54, առաջ բերելով վանքի շինութեան կարեւոր յիշատակարանը։ Սրա մէջ հաղորդւում է թէ՛ շինութեան և թէ մեզ հետաքրքրող ջրամատակարարման մասին։ Եկեղեցին շինել տուողն էր «Շապուհ Բագրատունի Հայոց սպարապետ տէրանց տէր, որդի Աշոտոյ Հայոց թագաւորի և ժամանակս Հայոց թագաւորին մեծին Սմբատայ հարազատ եղբաւր իմոյ ... վերակացու և տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ Սիւնեաց տիկին ...»։

Շապուհ Սպարապետը իր շինել տուած եկեղեցուն գիւղերով և կալուածքներով նուէրներ տալով հարստացնում է.

«Եւ եռու գ. գեղոյս սահման Կոթայ քարն, Շաւառնահողն, Գետամէջն,

կթանոցն, Գետավանաց ծոմը. մկ. դրամ ի կոթայ քարէն, շվ. ի Բոտելեաց, ոկ. յՍղիբողանաց, ՉՂ. ի Կարբէն զեսերեն և նաւերեն»։

«Տր. Սողոմոն տր. Սթանաս, Սմբատ թագ. ասա ածվ. քերեալ ջուրս յՈնճոռաց Դաւթի ձեռօք .. զոր յառաջ բերած էր..»։

Այս ՉրաբերութԹեան յիշատակութիւնը, որ մի տեսակ հին առուի նորոգման կերպարանք ունի, սրա հետ միասին գետերի և նաւերի, խիստ անորոշ են և միայն նոր ուսումնասիրութիւնն առ տեղեաւն կարող է պարզել ՉՐի սկզբնական ակն ու անցած առուի ուղղութիւնն ու նպատակը։ Մեզ համար կարևորն է, որ հայկական իշխանութեան ամենաբարձր դիրքերի վրայ կանգնած անձինք իրենց երկիրը շէնացընելու համար առուներ են անցրել և եկեղեցու շինութեան հաւասար յիշատակելի գործ համարել։

Թ. Ավդալբեկեանը հմտալից մի յօդուած ունի հրատարակած Հ. Ս. Ս. Հ.ի Գիտութեան և Արուեստի ինստիտուտի տեղեկագրի (1931ի Հ. Գ. էջ 90–112) մէջ՝ «Նոր Բայազէտի հին առուներն ու շրջակայքի ոռոգման հեռանկարները» վերնագրով։

Յօդուածի մէջ այս արձանագրութեան մասին տեղեկութիւն չկայ. նա ուրիշ աղբիւրներով և իր անձնական մանրազնին տեղագրական ուսումնասիրութիւններով

գտել է, որ Նոր Բայազէտի շրջանում հընուց գոյութիւն են ունեցել առուների շատ աւելի զարգացած ցանցեր, որոնց օժանդակութեամբ երկրի աւելի մեծ թւով գիւղերը կարողացել են պահպանել իրենց գոյութիւնը, և որոնց բաւական խոշոր թիւը ներկայումս, հին ջրատար երակների ոչընչացմամբ, ամայացել և անմարդաբնակ են դարձել։ Ռուս և հայ հեղինակները ժ-թ-ի դարում տեղեկութիւններ հաղորդել են միայն — երեք հին առուի մասին։ Վերոյիշեալ առուների վրայ, մենք, գրում է Ավգալբեկեանը, 1927 թ. սկսած մեր հետախուզութիւնների հետևանքով, ավելացրել ենք և ավելացնում ենք եօթ հին առու։ Իբրև եզրակացութիւն իր ձեռք բերած կարևոր տեղեկութիւնների, առաջարկում է վերանորոգել այդ հին առուները և ընակաշէն դարձնել — մօտ 75 քառակուսի կիլոմետր — ընդարձակ մի տարածութիւն։ Իսկ եզրափակման միանգամայն ընդունելի երկու նախադասութիւններն են. — Հին առուները պէտք է դադարեն հընութեան յուշարձաններ լինելուց և դառնան կենդանի կեանքի գործօն երակներ։ Հին առուները մեր երկրի ոսկէ հանքերն են գետնի երեսին։

գ. Յակոբ Եպիսկոպոս, առաջնորդ և մետրապօլիտ Սիւնեաց նշանաւոր Տաթևի վանքի, մի առու է հանում, որ իր կարևորութեամբ եւ խոշորութեամբ մասամբ

յիշեցնում է Ուրարտայինների գործը։ Նրա կատարած գործի մանրամասնութիւնը յիշատակում են իր յաջորդներից Յովհաննէս եպիսկոպոսը, ժամանակի բերմամբ վնասուած առուի նորոգողը և ապա աւելի մանրամասն Ստեփանոս եպիսկոպոս Օրբելեան պատմագիրը։

Յակոբը Դվինեցի էր, Յովհաննէս պատմագիր կաթուղիկոսի եղբօրորդին և նրա ձեռնասունը։ Երիտասարդ հասակում եպիսկոպոս ձեռնադրուելով, կարգւում է Տաթևի վանքի վանահայր և Սիւնեաց թեմի առաջնորդ, քառասուն տարիների ձիգ ժամանակաշրջանում 918–958։ Նա սիրում է շինարարութիւն. ամենից նշանաւորը Վարարակաղ առուի շինութիւնն է։ Օրբելեան պատմագիրը այդ մասին այսպէս է պատմում.

«Սա գանձագին առնէ զջուրն Զագէձորոյ, որ Վարարակն կոչի. ի տեառն Փիլիպպէէ որդւոյ Վասակայ Սիւնեաց իշխանի ընդ ԲԺՌ դրամի (12,000 դրամի) և մի լուսաւոր ջաւահիրի . . . և բերեալ ի Յաքուցն որ հանդէպ վանիցն, յայնկոյս գետոյն, և արար զամենայն վայրն առապար եւ փշալից վարդուս եւ տնկալից։ Տնկեաց բազում այգիս եւ որթս սորեկս. էարկ տունկս ի զանազան պտղաբերաց. ձիթենիս և թզենիս և նռնենիս. և յամենայն մրգաբերաց արար դրախտս զարմանալիս։ Եւ զարդարեալ զբոլոր վայրն ընդարձակագոյն

թանձրախիտ ծառուք և քաջուղէշ որթուք, ի վայելումն եղբայրութեանն եւ ի պէտս ամենայն կարօտելոց եւ ողքաւոց»։

Տաթևի վանքի արխիւում, գուցէ նաև քարերի վրայ արձանագրուած, կային առուի շինութեան յիշատակարանը, միանգամայն համապատասխան պատմագրի տեղեկութեանը, որովհետև նա այդ վաւերագիրն էլ է մուծել պատմութեան մէջ։

«Եւ Յակոբ շնորհիւն աստուծոյ եպիսկոպոս Սիւնեաց, գնեցի զ Վարարակ ջուրն յաստուածապահ տեառն Փիլիպպէէ, Սիւնեաց տեառնէ, ընդ ԻԺՌ դրամի և մի պատուական գոհարի. և բազում ծախիւք և մեծամեծ աշխատութեամբ վերին աւգնականութեամբն ածի զջուրն ի լեռնէն Զագեանոյ և բերի ի Վարդուսս. և տնկեցի որթս սուրեկս և այգիս վայելուչս և դրախտս բազմածաղիկս և պտղալիցս, ի վայելումն սուրբ հայրապետաց որ ի սուրբ աթոռս հաստատին և սուրբ ժողովոյս և ամենայն հաւատացելոց Քրիստոսի...։

Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ ոչ Նորեցեաց, ոչ Խոտանանեցեաց, ոչ Շնհերացեաց կամ Հայեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կարել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի ջուր տալ. զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ։

Եւ թէ ոք յանդգնի եւ զայս ջուրս կարէ, այնպիսին նզովեալ լիցի յԱ-

տուծոյ եւ ի սուրբ նշանէս եւ ՅԺԸ (318) հայրապետացն որ ի Նիկիայն գումարեցան և ի մէնջ, և բաժին նորա ընդ ուրացողս եւ կախարդս լիցի յաւուր ահեղ ատենին Քրիստոսի, եւ ընդ սատանայի եւ հրեշտակաց նորա ճարակ լիցի անշէջ հրոյն տանջանաց, ուր հուր նոցա ոչ շիջանի եւ որդն նոցա ոչ վախճանի։

ՅՁՍ. Թուականիս (= 932 թ.) գրեցաւ վճիռս այս իմով ձեռամբս և կնքեցաւ մեր գովրական մատանեաւս ի կամս աստուծոյ»։

Վանական արխիւի մէջ պահուած էր նաև առուն վաճառող Փիլիպպէ Լշխանի պարտաւորագիրը, այսպիսի բովանդակութեամբ.

«Կամաւն աստուծոյ ես Փիլիպպէ որդի տեառն Վասակայ Սիւնեաց տեառն, իմոյ կամաւորութեամբն վաճառեցի զՎարարականաց Ջուրն սուրբ Գրիգորին, որ իմ պապուն տէր Փիլիպպէին շինեալ էր, ի սուրբ եպիսկոպոսարանն Տաթեւոյ։ Եւ գնեաց Յակոբ Սիւնեաց եպիսկոպոս ընդ ԲԺՌ դրամի և մին մեծագին գոհարի, և վճարեաց զամենայն գինն ողջամբ։ Եւ ես առեալ իմ զգանձս և զմին գոհարն ի Յակոբայ Սիւնեաց եպիսկոպոսէ և ապիկար եմ ես և իմ զաւակունքս և ազգայինք յայդ ջրոյդ յայսմհետէ մինչև յաւիտեանս ժամա-

նակաց։ Եւ չկայ Նոյեցեաց կամ Խոտանանեցեաց, կամ Շնհերայ և Հայեցեաց յայդ Ջրոյդ հաշիւ. ոչ շատ և ոչ սակաւ. ոչ յարտ հատանել և ոչ ի մարգ զատել. որ մարդ և անասուն Ջուր ըմպեն ի մատակէդ։

Եւ թէ ես կամ իմ զաւակք յայս պայմանէս ստեմք և կամ յայդ Ջրէդ կտրիլ խորհիմք յարտ կամ ի մարգ կամ յայլ ինչ, յատուածոյ և ի սուրբ նշանէդ նզովեալ եղիցիմք և զվերոգրեալ անէծսդ տեառն Յակոբայ անմահ կենօք ժառանգեսցուք։ Ամսուած շնորհաւոր արասցէ սուրբ ուխտիդ և սուրբ աստուածածազգեաց հայրապետացդ»։

Վարարական Ջուրը գտնւում է Գորիս քաղաքի հովտի ամենաբարձր տեղում, որտեղից բղխում են Գորիսի գետի ակունքները, մօտ 10—12 կիլոմետր տարածութեամբ։ Բարձր դէպի հիւսիս Ջրինաւելի մօտ է Վերինշէն գիւղը, Ուչթափայ կոչւող լեռնադաշտի արևելահիւսիսային բարձունքներում։ Ուչթափան ձգւում է հիւսիս—արևմտեան ուղղութեամբ, Որոտն գետի հոսանքին զուգահեռ, աստիճանաբար ցածրանալով, իսկ Որոտն գետի և Գորիսի հովտի ուղղութեամբ անդնդախոր կտրուածքներ ունի, երբեմն ցից ժայռերով պարսպանման կտրուած։ Բազմաթիւ հայկական խոշոր գիւղեր, հովտներում և անդունդների մէջ շինուած, Ուչթա-

փայլ արօտներով և վարելահողերով են լը-
ռենց ապրուստը հայթայթում։ Ուչթափան
բնակութեան համար հիանալի յարմարու-
թիւններ ունի, սակայն դարերի անապա-
հով վիճակը, բայց նաև ինքնահոս աղբիւր-
ների առատութիւնը և կլիմայի մեղմու-
թիւնը թելադրել են մարդկանց գիւղեր
շինել ամենաանտառներում, գժուարամերձ և
ամեն հանգստութիւնից զուրկ մասերում,
գլխաւորապէս թշնամու յարձակումներից
և ձմեռուայ բքաբեր քամիներից ազատ լի-
նելու յոյսով։ Ուչթափան բազմաթիւ աղ-
բիւրներ ունի, մանաւանդ նրա աւելի բար-
ձը, լերան ստորոտներին մերձաւոր մա-
սերում, իսկ Պատմագրի յիշած գիւղերի
մերձաւորութեամբ, ջրերը պակաս են և
ամառուայ շոգերին մարդ ու անասուն բա-
ւականաչափ նեղւում են խմելու ջրի պա-
կասութիւնից։

Յակոբ եպիսկոպոսը իր առուն շինել է
Ուչթափայի ամբողջ երկարութեամբ, հիւ-
սիսից հարաւ-արևմուտք, մօտաւորապէս
30 կիլոմետր տարածութիւնից։ Դաշտի
բնական թեքութիւնը և հարթութիւնը
առուի փորման գործը բնականաբար կը
դիւրացնէին, բայց որովհետև դաշտի մէջ
յաճախ են հեղեղատներ և բլրանման բար-
ձրութիւններ, գետինը տեղ տեղ ամուր
քարերով է ծածկուած. առանց բարդ աշ-
խատանքների անկարելի էր գործը գլուխ
հանել։ Մանրամասն հետախուզութիւնը

կ'պարզի թէ հեղեղատների և այլ դժուարութիւնների առաջը շինարարն ինչպէս է հարթել։ Կարևոր է այդ հետաքրքրութիւնը Ուրարտեան արուեստի հետ համեմատելու համար։

Սառուն գործում էր մինչև 14րդ դարը, երբ Օրբելեանն իր նկարագրութիւնն է տալիս. մանաւանդ որ Օրբելեանի նախորդ վանահայրը, Յովհաննէս եպս.ը, հիմնական նորոգութիւններ էր կատարել։ Նորոգողն արձանագրութեամբ յաւերժացրել է իր աշխատանքը, չմոռանալով նախորդին։ Ուչթափայի վրայ, Վերինշէնի դէմ յանդիման տեղում, մի ժայռ կայ ցցուած, որի տակով առուն էր անցնում։ Այդ ժայռի 2,26 × 0,83 մետր ընդարձակ հարթ երեսին նորոգողը գրել է տուել իր արձանագրութիւնը.

«Ցամի յորում էր թվ. ՉԽԳ (= 1294) ես տէր Յոհանէս կամաւն աստուծոյ եւ աղաւթիւք հոգեւոր հաւր մերոյ տէր Հայրապետա տարա զՋուրս Վարարական ի Վարդուտցի զոր աստուածապատիւ եւ հոգեւոր տէր Յակոբ գնեալ էր եւ տարեալ բազում աշխատութեամբ եւ արդեամբք. զխափանեալն ի բազում ժամանակաց կրկին նորոգեցաք, յիշատակ մեզ եւ նախնեաց մերոց որք հանդիպիք սուրբ երրորդութեամբ յիշեցէք ի Քրիստոս»։

Այդ երկու շինարար անձերի գործը այլ ևս գոյութիւն չունի. պատմական յի-

շատակարաններին չնորհիւ միայն գիտենք այդ աչքի ընկնող գործի մասին։

Վարդուտը ցաքուտ դարձած վայրը գտնւում է Տաթևի վանքի դէմ յանդիման՝ դէպի արևելք, Որոտն գետի ձախ ափին, նշանաւոր Սասունց կամրջից սկսող զառիվայրերում։ Ուչթափայի պռունգին գըտնւող պարսպանման ժայռի ստորոտում անցկացրած առուի փոքրածքն է մնում, մի հին մատուռի աւերակ և փլած պատերի շարքեր, որով բաւական թեք զառիվայրերը կտրատւել և յիշած այգիների ու տնկարանների տեղիք են դարձրել։

Հայաստանի անցեալ գիւղատնտեսական մշակութեան համար ուշադրութեան արժանի տուեալներ են խաղողի որթի, պտղատու ծառերի և ծաղիկների յիշատակութիւնը. մանաւանդ այն, որ մեր երկրի մէջ Տաթևի ձորում մշակւել են ձիրեանիներ, որ այժմ գոյութիւն չունին։

դ. Արագած լեռան ստորոտում գըտնւում է հնագոյն դարերից իր անունն անփոփոխ պահած Թալին գիւղը, որի մէջ կան եօթներորդ դարուց պահւած երկու կիսաւերակ եկեղեցի, մէկը փոքր մատուռ, միւսը մեծ կաթուղիկէ, եօթներորդ դարու հայկական լաւագոյն ճարտարապետութեան յուշարձան և ուշագրաւ գերեզմանային կոթողներ։ Տաճարի մայր սիւներից մէկի վրայ 783 թւականից փորագրւած է այսպիսի մի յիշատակարան.

«ՄԼԻ թուականութեան հայոց ես Ուխտանուր վանականս եւ Տուտի եղբայր իմ բերաք աղբեւրանիս ի Գարկաս նուբ/ա/տէն ի Թալին. թէ յիշխա(ն)աց ոք խլէ իմ մեզաց պար(տ)ական եղիցի»։ Յիշատակարանը սկիզբը արտագրել էր եւրոպացի ճանապարհորդ եւ տպել էր սխալներով Սյրարատում։ Յետոյ առ տեղեան մենք կրկին քննեցինք եւ Սոկրատի պատմութեան յառաջաբանում 1892ին հրատարակեցինք, բայց դարձեալ մութ էր մընում, թէ արդեօք նուբատեն պիտի կարդալ, թէ ոչ։ Յամենայն դէպս հայ չրաշինարարութեան արձանագրութեանց մէջ սկզբնական բնագրով հնագոյն արձանագրութիւնն է, 783 թ., որից աւելի հինը մեզ ծանօթ չէ։ Թալինը-իր շրջակայքով մեր երկրի կարեւոր տեղերից էր, թէեւ ներկայումս բաւական խեղճ վիճակ ունի։ Հայկական ճարտարապետութեան գեղեցիկ մնացորդներ, ոչ միայն Թալինում, այլ եւ նրա մօտակայ տեղերում, Մաստարայում, Ներքին Թալինում, Իրինգում, Թալիշում կամ Սրուճում, Սշնակում եւայլն, խօսուն վկաներ են, որ վեցերորդ դարից մինչեւ ութերորդ դարը, այդ շրջանում բազմաթիւ եւ լաւ կենցաղով ապրող ժողովուրդ կար, որ կարող էր գոյութիւն ունենալ միայն երկրի արդիւնաւէտ եւ յաջող մշակութեամբ եւ որ առաջնակարգ տեղ էր տըրուած ոռոգման գործին։ Այդ ենթադրու-

թիւնը հաստատւում է Կոչի Ջրայլին վէճի խնդիրը, որի հետ կ'ծանօթանանք։

Ուխտատուր վանականը ո՞րտեղից է Ջրեր բերել Թալինի համար, այժմ այդ տեղը յայտնի չէ. ո՞րտեղ էր գտնւում Քարկապինու բատեն, ընդունելով որ այդ ընթերցուածն է ուղիղը։ Տեղական ժողովուրդը, ոչ հին ընակիչներ, այլ նոր գաղթականներ, անտեղեակ են հին ընակիչների մէջ պահւող սովորական աւանդութիւններին և նրանց ցուցմունքը առանձին կարևորութիւն ունենալ չի կարող. իսկ նրանք ցոյց են տալիս եկեղեցուց մի կիլոմետրաչափ դէպի սարը բարձրացող լեռնահովիտ, որի առաջը հնուց պատնէշ կայ քաշւած, իսկ այժմ հողով է լցւած և մշակելի արտ է։ Նրանց ասելով այդտեղ հնում արհեստական Ջրամբար էր շինւած, պարտան Ջրերը հաւաքելու համար։ Հովիտը, որ անձամբ քննեցինք, բաւական փոքր է և նրա մէջ հաւաքւած Ջրերը մեծ բան չէին կարող լինել. սակայն անկասկած է, որ դա իսկապէս Ջրամբար է, փոքր մասշտաբի։ Ուշագիր հետախուզութիւնը գուցէ այդպիսի Ջրամբարներ աւելի ի յայտ բերի, բայց թէ արդեօ՞ք դա է Ուխտատուրի շինածը, թէ տակաւին անծանօթ մնացած Քարկապի Ջրերն է բերել, մնում է չլուծւած։ Ուստի մենք բաւականանանք միայն Ջուր բերելու փաստն արձանագրելով։

և. Էջմիածնի թանգարան է բերւած

բազալտ քարից մի մեծ կոպիտ քար, համարեա անտաշ վիճակում, ջրային շինարարութեան յիշատակարանով։ Քարի վերևի մասում, մէջտեղը փորուած է մի խաչ և դրա շուրջն ու ներքևի ազատ շերտի վրայ, չափազանց անկանոն եղանակով, առանց տողերի և միատեսակ ուղղութեան, փորագրուած է յիշատակարանը։ Գրերի մի մասը գլխագրեր են, մի մասը բոլորգիր, շղագրին մօտեցող։

Ս.յդ արձանագրութեամբ ոմն Գոռք Ի թագաւորութեան Սիսեբերիսմա Ջրի առու է հանել ՆԽՍ. (= 992) թուին։



հ ր ա գ ա ն ա ղ ր ա ն ա ն
ր ե ա ն ա ն ա ֆ
ք ա ն ա ն ա ն ր ա ն
ֆ ա ն ա ն ա ն ա ն ։

«կամ եղեալ հ՚ոյո (հոյո) ջրի | զառուն վաս (sic) | մեղաց | հանել | յանուն | Ս.ա | ՆԽԱ. (= 992) | ի թագավորու | թեան սինաք | էրեմա ես քոր | ք կակ-նեց խաչ»։

Արձանագրությունը գրված է երկաթագրով և հնաձև բոլորգրով. կարդացվում է դժվարությամբ և հասկանալի է, որ առաջի հրատարակությեան մէջ սխալներ կան։ Հնությամբ, գրերի ձևով և բովանդակությամբ կարևոր է։ Այս քարը բերված է Էջմիածին «Իգոիրէ դէպի Երասխ երկու ժամ հեռի Բլուր գիւղից, որի առջևէն կ՚անցնի փոքրիկ առու մը, սկիզբն առնելով Ղ.արագալայից». մի տեղեկությունը որ հաղորդում է Կ. Բասմաջեանը (Բանասէր, 1901, էջ 130–131), որ հրատարակել է քարի լուսանկարը և արձանագրությունը։ Այս տեղեկությամբ պարզվում է, առուն Քորքը հանել է Երասխի ոչ ափից, և իսկապէս յիշեալ գիւղը ողողվում է Երասխի ջրով։

գ. Մխիթար Այրիվանեցին իր պատմության մէջ (հրատ. Մ. Էմինի, Մոսկվա, 1860, էջ 58) գրում է.

«Ապիրատ իշխան երկոտասան հազար հեծելի — — Սա շինեաց զԿեչառուս և եհան զառուն Երևանայ»։

Երևանն ուներ ներկայումս մի քանի առուներ. բուն քաղաքի անմիջական մերձ-

ձաւորութիւնները չբաւում են Դրխբուլաղից սկիզբն առնող Գետակաչայի չրերով եւ Զանգու գետից հանած առուներով։ Անտրոշ է մնում Ապիրատ իշխանի հանած առուի բուն աղբիւրը։

Է. Բագրատունեաց իշխանութեան մայրաքաղաք ծառայող նշանաւոր Անի քաղաքը թէեւ շինուած է Ախուրեանի եւ Ծաղկոցաձորի հովիտներով կազմուող մի տեսակ թերակղզու վրայ, ինչպէս Արշակունիների ամրոց Անի–Կամախը, բայց այդ չրերը շատ խորն են ընկած, ամրութիւնների և պարիսպների շրջանակից դուրս, և ազգաբնակութիւնը գետնափոր անցքերով միայն կարող էր մօտենալ այդ չրերին։ Պրոֆ. Մառի պեղումները քաղաքի մէջ ի յայտ բերին զանազան ուղղութեամբ տարուած քուանգեր, որոնց հետքերը տանում հասցնում են մինչև քաղաքի արեւմուտքում գտնուող, ոչ շատ հեռի ընկած Ալաջադաղի ստորոտները։ Ալաջադաղից մեծ յորդութեամբ աղբիւրներ են դուրս ժայթքում, որ բնական հոսանքով ուղղւում են դէպի Անին և Ծաղկոցաձորի չրերի մի մասն են կազմում։

Կասկածից դուրս է, որ քուանգերով այդ աղբիւրների չրերից են քաղաքին չուր մատակարարուել։ Պ. Թ. Թորամանեանը գրում է այդ մասին. «Յիշատակութեան արժանի գործ է չրմուղը, որուն միջոցով լերան ստորոտներէն չուրը կ'հաս-

նէր մինչև Անի և կ'բարձրանար պալատի բարձունքներուն վրայ։ Ուշադրութեան արժանի էր Ջրմուղի որոշ մասերուն շինուածքի կերպը, որն որ նախընթաց տարիներ Պ. Ն. Մառի պեղումներով բացուեցաւ. կային տեղեր որ թրծած հողէ խողովակները ջրի ուժեղ ճնշումներէն անվնաս պահելու համար կրկնակի քարէ խողովակի մէջ ամփոփած և մաքուր կրաշաղախով պնդացուած են» (Ազգ. Հանդէս, XXIII. 1912, էջ 5–6)։

Այս ձեռնարկութիւնը վերագրուում է Աշոտ Ողորմած թագաւորին։ Նոյն պեղումներն ի յայտ բերեցին խոշոր ջրամբար միջնաբերդի պալատի հարաւային մասում։ Ջրամատակարարման այս մանրամասնութեամբ այս եղանակով էլ պատմական երկու Անի ամրոցները միմեանց նմանուում են։ Նախ քան պեղումները մի արձանագրութիւնից արդէն յայտնի էր, որ Առաւն Մագիստրոսը տան և մէկերորդ դարում քաղաքի համար խմելու ջուր էր բերել։ Ահա այդ արձանագրութիւնը.

«––– Ես Առաւնս Մագիստրոս մեծարեալ ի մեծափառ թագաւորութեանց ի գեղ զարդու և ի տիս մանգութեան իմոնեկի յարեւելս, ի գեղեցկաշէն բերդս յԱնի, բարձրացուցի բաւանդակ զպարիսպ սորին կառկառակոյտ արձանաւք եւ հաստահեղոյս ամրութեամբ. եւ ի յիմոց մեծածախ գանձուց ածի ջա-

նիւ ջուր յորդաբուխ ի մէջ ամրոցիս յուրախութիւն եւ ի զովացումն ծարաւեաց — ։»

Արձանագրութեան մէջ չի պահած թւականը, բայց որովհետեւ արձանագրութեան մէջ յիշւած է բիւզանդական կայսրուհի, հաւանական Զօէն, ուստի ընդունւում է որ Առաւնը իր ձեռնարկութիւնը կատարել է 1045–1054 թւականներին։

ը. Անի քաղաքի մերձաւորութեանն է գտնւում Հոռոմոսի նշանաւոր վանքը, Ախուրեան գետի աջ ափին։ Նրա վանահայրերից մէկը Մխիթար անունով 1198 թ. վանքի համար ջուր է բերել. չի աււած խմելու թէ ոռոգման նպատակաւ. տեղական ծանօթութիւնը կ'պարզի այդ։ Ջրի բերելը առելեոյթ կապւած էր որոշ դժուարութիւնների հետ, որովհետեւ արձանագրութեան մէջ կարդում ենք, որ Մխիթարից առաջ նոյն իսկ Հայոց թագաւորներն այդ գործը գլուխ հանել չեն կարողացել։

«Ի Ոկէ (=1191) թուին ես հայր Մխիթար սատարութեամբ Սարգսի կրաւնաւորի — զԱկանց ջուրն, զոր մեր հին թագաւորացն կարի յոյժ ջանացեալ եւ ոչ ժամանեցին բերել — մեծ ծախիւք ածաք ի Հոռոմոսի վանս — եղեւ այս ի հայրապետութեան տեառն Բարսղի եւ ի տէրութեան վանացս քրիստոսատէր պատրոնացս Գրիգոր Հէճպին եւ Սմպատա եւ եղբարց իւրեանց եւ ի տէ-

թութեան քաղաքիս եւ բոլոր երկրիս հաւոց . . . Զաքարէի եւ Իվանէի»։

Կէս դար անց այդ առուն վերասւում է և խափանւում — խուսպանեալ էր — և ամն Սուրբ վերասածները նորոգում է։

«Թվիս Զ (=1251 թ.) կամաւն աստուծոյ եւ Սուրբս Հոգեւորեանց եւ ամուսին իմ Սեդ միաբանեցաք սուրբ Յովհաննէս, յառաջնորդութեան տէր Բարսղի բերաք զջուրս որ տաթարուվս (?) խուսպանեալ էր . .»։

Արձանագրութեան տարառոիկ բառն անորոշ է. գուցէ մարդու անուն է, որ խանգարել էր ջրի բերելուն, ինչպէս այդ արդէն մի անգամ տեղի էր ունեցել 1206 թւին։

«Ի ՈԾԵ (= 1206) թւիս եւ Զամարեայ Շահնշահ, որդի Սարգսի, զաւրապետ Հայոց եւ Վրաց, քակեցի զջրաղացն, որ յԱկանս հակառակ ջրիս շինած էր եւ վերստին հաստատեցի զջուրս ի վանքս Հոռոմոսի վասն արեւշատութեան ինձ եւ եղբաւր իմոյ Իւանէի»։

Ք. Հետեւեալ արձանագրութիւնները եւս ջուր բերելու տեղեկութիւններ են պարունակում Բիւրականում գտնւած.

«Եա հայր Գրիգոր որ Հայաբաղի զակնս դրի եւ զառուս հանի, եւ տէրունի հրամանով զՀայաթաղի հ — բեցի Բիւրական — »։

ժ. Գանձասար նշանաւոր վանից մօտ, Խաչէն գետի ձախ կողմի մի բարձրութեան վրայ գտնւած Պառաւաձոր կոչւած տեղում, եկեղեցու պատի վրայ փորագրւած է.

«Ոկ (= 1181 թ.) թուին եւ իշխանութեան Սմպատա եւ Բարսեղ երեց եւ Սարգիս եւ այլ եղբայրքս եւ Սանսի երիցս որդիք մեր ժողովրդովս շինեցաք զեկեղեցիս եւ բերաք զուրս—»։

ժա. Դարալագեազ, Մարտիրոս գիւղի մի խաչաքարի վրայ փորագրւած է.

«Ի թվականիս հայոց ՉԼԷ (= 1288 թ.) յիշխանութեան Պապաքին եւ Ամիր-Հասանայ եւ Սարգիս եւ որդիքն իմ Պետրոս շինեցաք զաղբիւրս եւ կանկնեցաք զխաչս»։

ժբ. Սա. Օրբելեանի մէջ յիշւած են Ջուր բերելու այս դէպքերը։

Տաներորդ դարում ումն Վահան, որդի Զապիկ իշխանի, մտնում է կրօնաւորաց շարքը. իր համար և իր անունով մի վանք է շինում Բաղաբերդի ամրոցի մօտ, «հանդէպ Սճանանու»։ Նրա մահուանից յետոյ վանահայրութեան պաշտօնն ստանում է իր եղբօրորդին, որ ճոխացնում է վանքը նոր շինութիւններով։ Սա է որ յետոյ Հայոց կաթուղիկոս է ընտրւում։

«Շինէ . . զգաւիթ եկեղեցոյն մեծամեծ քերածոյ վիմաւք երեսուն կանգնոց չափ . . . Շինէ եւ ի ձուլեալ կրաշա-

զախ քարանց տրապէզ մի մեծ եւ բերէ փոզովք զջուրն ի դուռն նորա..»։

Ժզ. Սեւելի ուշադրութեան արժանի է Դարալագեազի կամ Վայոց ձորի, Գլընդէվազ վանքի վանահայր Սարգսի կատարած գործը, որ ՆԾԷ (= 1008) թուին Զկինարած կոչեած գետից առու է հանում առապար եւ անջրդի տեղերը ոռոգելով մշակելի դարձնելու։

«Ի թագաւորութեանն Գագկայ, որդւոյ Աշոտոյ, իսկ ի Սիւնեաց եւ Բաղաց նորոգ թագաւորութեանն Վասակայ... հայր Սարգիս.. ածեալ զջուրն ի լեռնէն ի մեծ գիտաւոր սարէն, ուր աւկունքն են քաղցրահամ գետոյն որ Զկնարած կոչեն, աներեւոյթ հրեշտակի առաջնորդութեամբ, բազում ջանիւ եւ մեծամեծ ծախիւք բերեալ հանդաստան վանիցն, եւ զանհուն առապարն անջրտի արար ջրարբի եւ զամենայն լեռնակողմն յորում ոչ գոյ ումեք հաշիւ. ոչ Պրակեցեաց եւ Կեչառեցեաց եւ ոչ այլ սահմանակից գիւղօրէիցն եւ ոչ այլ ումեք. եւ այս ի թուականին ՆԾԷ (= 1008)»։

Հետաքրքիր է այս առուն առ տեղեաւն քննել. արդեօ՞ք ներկայումս էս գործում է թէ ոչ եւ թէ որքան տարածութիւն ունէր, որովհետեւ ճանապարհին բաւական գիւղերի մօտով է անցել։

ժդ. Նոր Բայազէտի բերդի գլխին կայ մի հին մատուռ, մօտը մի խաչարձան, որի երկար պատուանդանի վրայ կայ այս արձանագրութիւնը.

«Ի թվ. ԲՃՂԱ. ես Ամիր Վա(հա)պս (որ)դի Վասիլ իշխ(ա)ն(ի) շինեցի զեկ(ե)ղ(ե)ց(ի)ս եւ զԳամատանս առուն հանեցի Կնիմանաց ձորէն եւ սարերէն։ Բնակիչք գեղիս խո(ս)տ(ա)ց(ա)ն տա-ր(ին)։ Գ։ ժ(ա)մ։ կ(ա)տ(ա)ր(ո)ղ(ք)ն ահնին յԱ.յ»։

Այս արձանագրութիւնը առաջին անգամ հրատարակող Թ. Ավդալբեկեանը չի համարում ԲՃՂԱ թուականը հայկական հին թուական, այլ սարկաւագադիր փոքր թուական, որի հետ հետեւապէս գումարում է ոչ թէ 551 (= 842) այլ 1083 և ստանում է 1374 թ. իբրև արձանագրութեան ուղիղ ժամանակ։ Հաւանական, նա հաշուի է առել նաև արձանագրութեան հնագրական կողմը, թէև այդ մասին ոչինչ չի ասում (տես, Տեղեկագիր ՀԽՍՀ. Գիտութեան եւ Արվեստի Ինստիտուտի, Երեւան, 1927, հ. 2, էջ 216)։

2. Առուցերի ցորոգութիւններ.

ա. Արդէն յիշեցին Տաթեւ և Հռոմոս վանքերի առուների նորոգման արձանագրութիւնները, որոնց մէջ տեղեկու-

թիւններ կային նախորդ աշխատանքների մասին. առանձնակի է մնում Աշտարակի Ականատեսի առուի նորոգութեան արձանագրութիւնը, որովհետև նորոգողը չի լմացել առուի հիմք դնողի անունը։

«Շնորհիւն աստուծոյ ես Յակոբ երեցս ըստ կարի մերոյ նորոգեցի զմեծ առու տեղւոյս բազում աշխատութեամբ որ խախտեալ հիմանց յիշատակ հոգւոյ իմոյ եւ որք ուգնական եղեն տրաւք եւ աւանդ գրեցի, որ շինած տուն եկել տնանկաց աւթեւան լինի։ թվ. ՉԽԱ. (= 1292)»։

Սրա նորոգութեան թւականն է 1292, երկու տարի առաջ Վարարակից։ Քաղաքի գետի խորը եւ բարձրադիր պատռուածքներով ջուր հանելը ուշագրաւ ձեռնարկ է եւ միանգամայն յարմար Ուրարտացիների աբեւատին. ուստի կարելի է ենթադրել որ հիմնական աշխատանքը նրանք էին կատարել, երբ ամբողջ Արագած լեառը ստորոտներով իրենց տիրապետութեան ներքոյ էր։

3. Ջրային վիճերի կարգաւորումն.

ա. Ջուրը առուծախի առարկայ էր եւ բաւական թանկարժէք, ինչ որ Սիւնեաց Յակոբ եպիսկոպոսի վճարած գումարն է ապացուցանում։ Ջուրը գողացւում եւ յափշտակւում էր, ապացոյց նոյն Յակոբի

սոսկալի նպովքները և թալին Տիրատուր վանականի սպառնալիքը։ Զրին տիրապետելու այնպիսի բարդ վէճեր էին տեղի ունենում, որ յաղթելու համար երկրի ամենաբարձր իշխանութեան միջամտութեան կարիք էր լինում։ Մի խօսքով տարաձայնութիւններ, որ յատուկ են հին տիրապետական իրաւակարգերին։

Պատմական Արուճի ներկայումս թալիսի եկեղեցու պատի վրայ 867 թուից մի արձանագրութիւն կայ պահուած, որ նման վէճերի կենդանի պատկեր է տալիս։ Կոշ և Արուճ գիւղերի բնակիչները ընդհանուր առուի ջրամասերի շուրջը անվերջ կռուի են բռնուում, որ ոչ իրար մէջ ոչ ալ տեղական իշխանաւորների միջոցով հարթել է լինում։ Գանգատը հասնում է Անիում գահակալող թագաւորին և նրա սպարապետին։ Վերջինս կողմից եկած անձն է կարողանում կողմերին հաշտութեան բերել։ Որպէսզի վէճը այլ ևս չկրկնուի, վճիռը աւող պաշտօնեայն իր որոշումը փորագրել է տալիս Արուճի մայր եկեղեցու պատի վրայ։

«ՅԺԶ ։ թուականին Հայոց յի
ծիսանցուրի Աշոտոյ եւ ի տէրուրի Սմբատայ
Հաց սպարապետի Բագրատունոյ եւ ի
կաթողիկո
սուրի Զաքարիայի եղեւ կռիւ ընդ Յա-
ռուճ եւ ընդ Կոշ եւ
ընդ գաւառն։ Եհար Արուճ զԿոշ եւ զգա-
ւառն եւ կալաւ

զկոչա վանականն եւ ի Բրբաւանին ընդ
անկին վինքա
նի վանառեցին եւ Գրիգոր որդի Վա-
ռամա ծառա Ս
մբատա Բագրատունոյ եկի հրամանաւ Սմ-
բատա եւ եւ
հաւատարեցի զշուրն ընդ Կոչ եւ ընդ
յԱրուն զին
չ իւրեանց բնիկ ռասմ. էր լեռ:ա: եւ կեա
Կոչա եւ :ա: Արն
ո: Արդ եթէ այլ ոք հակառակել չանցա
այլ աւելի ռ
ասմ յուզէ .յժը. սուրբ հայրապետացն
նզել լիցի եւ
ի Սմբատա մահուամբ . . . պատուհասի»:
(մի բառ քերուած)

Մի երկրորդ արձանագրութեան մէջ դարձեալ Կոչա ջրի վէճի հարց է արձանագրուած։ Արդեօ՞ք վերևը կարդաւորուած ջրի մասին է խօսքը. արձանագրութիւնից միայն այսքան է պարզւում, որ բռնաւոր մի անձն, կամ հարեւան գիւղի ժողովուրդը բռնութեամբ խլել են կոշապատկան ջուրը, որ դրամի վճարումով հարկիւ են կարողանում ազատել։

«*ՇԾ թվականին (=1101 թ.)* եւ հայր Ցոհանէս *բազում աշխատութեամբ /սասմ-տիկ երդուեալ* Կոչա տանուտիրաւէս դատաւորն աւագերէցն . . . թափեցին զբնաջուր առուն :Մ: (=200) դահեկանի գնի որ Աւագին տան եւ որ . . .»։

բ. Անշուշտ այդպիսի մի ջրային վէճի հետևանքով է որոշում կայացրած և Տեկորի եկեղեցու վրայ արձանագրուած հետևեալը, 1036ին, Յովհաննէս Շահնշահի թագաւորութեան և Պետրոս Հայոց կաթուղիկոսի հայրապետութեան ժամանակ.

«Ես Հապ.. շահիկս եւ եկեղ(ե)ցպանս միաբան եղբայրաւքս Խնձկաւնից վանան Տեկորոյ ջրոյս և Սգարակաց ուղելո զինչ առաջի թագաւորու..ն լել է ՞ի աւրս եւ ՞ի գիշեր Տեկորոյ է եւ ՞ի աւր եւ ՞ի գիշեր Սգրկուց հարցի.. և գիտողս նզովաւք եւ երդնլով աւղորդն այտ է...»։

գ. Էմբատ վանքում արձանագրուած է, որ Անօրէնները — արդեօ՞ք մահմեդականները, որոնց մասին սովորական է այդ բառի գործածութիւնը, թէ վանքը յաւիրշատակող անձինք — գրաւել էին վանքը և յետ են ստանում փոխարէնը զիջելով կամ հատուցանելով «զցիցքն վանից եւ զջուրն»։ Ինձ համար անհասկանալի է ցիցք բառը այսպիսի գործածութեամբ։

«Ոխ թ. (= 1191 թ.).. Եւ տեր Բարսեղ որ զնեցի զվանիս յանուրիցաց եւ եռոս զցիցքն վանից եւ զջուրն, որ իւրեան էր ի հնոց լեալ, յիշատակ ինձ..»։

4. Նվիրատուութիւններ վանքերից եւ եկեղեցիներից.

ա. Ստ. Օրբելեանն իւր պատմութեան մէջ է առել երկու արձանագրութիւններ, որոնցմով յիշատակւում է, թէ Սիւնեաց Սուփան իշխանը *901 թ. իր ծախքով եկեղեցիներ է շինել տուել, հոգեւորականաց դաս հաստատել եւ պահպանութեան համար խոշոր նուէրներ տուել. գիւղ, հող, ջուր եւ ձուկ որսալու իրաւունք շնորհել:*

«*Ինձ* Սուփանայ *յիշատակարան հաստատեալ հոգեւոր ի Քրիստոս* ի Բաղաբագեղս Կորայ *'ի կացուածի իմոց նախնեացն .... կամաւքն աստուծոյ շինեցի տուն տեառն .. անուանակոչութեամբ սրբուհւոյ տիրամաւր Աստուածածնին վիմատաշ, կոփածոյ քարամբք եւ ի սմա սենեակս ութ ի վերոյ եւ ներքոյ: Եւ ապա ի սմին տուրբ քաւարանիս կարգեցի քահանայս եւ զարդարեցի .. ես սահմանեցի հողս եւ* ջուրս, *եւ ետու միոյ միոյ քահանայի յիսուն դրամ ի տարւոջն ..*» (*Օրբելեան, Պատմ. Թիֆլիզ, 1910, Գլ. ԼԷ. էջ 177–178*):

Երկրորդ արձանագրութիւնն է.

«*Կամաւն աստուծոյ ես* Սուփան, Սիւնեաց իշխան, *շինեցի* զՄաբեցոցաց եկեղեցիս, *եւ անխնայաբար զարդարեցի*

պատուական սպասուք եւ աստուածա-
յին կտակարանաւք. եւ ետու զսեպ-
հական տեղն մեր ի սա, որ ըստ ան-
ուան եկեղեցւոյս Աստուածածին ասի,
ամենայն սահմանաւք, լեռամբք եւ
դաշտիւ. եւ ետու որս ձկանց . . . »
(էջ 179)։

Շարունակութեան մէջ յիշած են նաեւ
այլ նուէրներ. հետաքրքիր է մեզ համար
Ջրային հարցի հետ կապ ունեցող ձկնոր-
սութեան յիշատակութիւնը, անշուշտ Սե-
ւանի լճից։

բ. Հետաքրքիր է Անիի մէջ պահուած
մի արձանագրութիւն, որի մէջ գրուած է
ՆՁԵ (= 1036) թւից.

«Կամ եղեւ ինձ տեառն պետրոսի հա-
յոց կաթուղիկոսի տալ զայգին Աշնկի,
որ ի մեր կորդս արկած էր . . . մարզ-
պանին Սալղարիպա, որդւոյ Գրիգորոս
Պահլաւունոյ վասն առաւել սիրոյն եւ
երախտեացն, զոր ծառայել էր տուրբ
Լուսաւորչի աթոռս. արդ տուաք . . .
եւ Գ. աւր ջուր ապատ ի խալաէ եւ ի
գեղջէ յամենայն հասուց . . . իսկ նա
ընծաեաց յիւր շինեալ եկեղեցիս ի տուրբ
Փրկիչս բաժակի . .»։

գ. Զաքարիա Սպասալարը հայկական
արձանագրական յիշատակարանների մէջ
ամենայաճախ յիշատակուած անձնաւորու-

թիւններից է, որովհետև հայկական վանքերի մեծ հովանաւորն ու նուիրատուն էր։ Ուշադրութեան արժանի է այն մեծ նուիրատուութիւնը որ նա արել է Հառիճայի վանքին։ Բացի այլ և այլ շինութիւններից, այդ վանքին է ընծայում իր սեպհական գիւղը, ջրաղացներ, պարտէզներ, խաղողի այգիներ, եւն։ Վանքի հիւսիսային պատի վրայ խոշոր երկաթագրերով երկարօրէն թւարկում է իր ընծաները։

«Եւ Զաքարէ, մանդատորթա խուցէս, ամիր սպասալար հայոց եւ վրաց, որդի մեծի Սարգսի, գանձապին արարի ըզհռչակաւոր տուրբ ուխտս Հառիճայի յիւր բնական հայրենատիրացն յաղագս կենդանութեան տեառն իմոյ, բարեպաշտ Թամար թագուհւոյ. եւ փրկութեան ինձ եւ հարազատ եղբաւր իմոյ յիվանէի և զաւակաց մերոց Շահնշահի եւ Աւագին. եւ ծնողաց մերոց։ Շինեցի ի սմա ամրոց եւ ղկաթողիկէս բազում ծախիւք եւ զարդարեցի ամենայն սպասիւք եւ արքուութեամբ եւ զիմ զեղն, որ է մերձ ի տուրբ ուխտս, զՄողորիոն (թէ Մոկորիո՞ն) ընծայեցի տուրբ Աստուածածնիս բոլոր իւր ամէն հողահատովքն, սարովքն եւ ջրովքն, զոր ընտէան լեալ է։ Եւ նոյնպէս ջաղաց մի ի Գնատիկ, որ Գիւաղաց կոչի. ջաղաց մի յԱնի Գլիձորին եւ պարտէզ մի ի Ծաղ-

կաձորին. այգի մի յԵրեւան եւ այգի մի ի Թալին։ Եւ զառաջին սահմանքն, որ բուն լեալ էր, հաստատեցի ի սահմանախաչէ ի Հառիճա գետն կոռ մարգով, Գլխրոմէն, Ցամաքձորով, Ճինարին Հարով, Կոմցից ձորոմէն, Սրին աղբերով, Հին Հառիճաով . . . Նաեւ զրեցաւ կտակս հաստատ թիւ։ ՈԾ։ (= 1201)»։

Ոմն Հեճուպ Վահրամ աւելի ուշ, մօտ 1235 թ., Հառիճայում ժամատուն է շինում եւ վանքի համար Ջուր բերում, որը «միւս Ջուր» է կոչում, ուրեմն արդէն եղածի վրայ նորն է աւելացնում։

«Աստուածասէր եւ արդիւնաւոր պատրոնն Հիշուք Վահրամ շինեաց զվայելուչ ժամատունս եւ եբեր զմիւս ջուրս յինչատակ հոգւոյ իւրոյ եւ զաւակաց իւրոց եւ ամուսնոյ իւրոյ Թամարին . .»։

Դարձեալ Զաքարիա սպասալարը խոշոր նէր է տալիս Հաղբատի վանքին եւ ընդարձակօրէն արձանագրում։ Սա 1210 թ. «յամս աւծելոյ Սատուծոյ թագաւորաց թագաւորին Գէորգէ, որդւոյ մեծի թագաւորին Թամարին», իր սեպհական մի կալուածքը փոխանակում է ոմն Շոթորկայ որդի Դաւթի կալուածքի Հաղբատ գիւղի հետ եւ նոր ձեռք բերածը նւիրում, հողով ու ջրով, Հաղբատի վանքին, որովհետեւ իր ունեցածը վանքից հեռու էր գտնւում։

«. . . եւ առի երկու գեղին փոխան զՀաղբաց հայրենիք եւ ընծայ սուրբ Նշանին ամենայն սահմանաւք, ոնց բնական լեալ է հողով եւ ջրով, խոտամարգերով, մայրիւք եւ ջաղացովք. գոմամարգերով. լերամբ և դաշտով. վասն կենդանութեան թագաւորին եւ արեւշատութեան որդւոյ իմոյ Շահնշահի եւ եղբաւր իմոյ Իւանէի եւ որդւոյ իւրոյ Սւագին եւ յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց:

Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ ի պատրոնաց, ի ձեռնաւորաց, ի գիւղականաց . . ով զՀաղբատս յետ առնու . . նզովի . . »:

Նոյն Զաքարէն իր եղբայր Իւանէի հետ 1200 թ. Գեղարդայ կամ Սյրիվանքին ջուր են շնորհում, համեմատ այս արձանագրութեան.

«Ի թուի ՈԽԹ (= 1200) քրիստոսասէր Իշխանաց իշխանցին Զաքարէ եւ Իւանէ վերատին դարձոյց զջուրն Ամառնամատակի Ճշ (հինգշաբթի) եւ ուրբաթ ի սուրբ ուխտս. զՍ. (զմի) աւրն որ է ուրբաթու . . . (թերի):

Ի. 1211 թ. մի արձանագրութեան մէջ յիշուած է Սպարապետ Բուբայի նէրը:

«Թվին ՈԿ (= 1211) նորոգեցաւ եկեղեցիս առաջնորդութեամբ Յովասափի

եւ Անարայիսի, մեծ սպարապետ տէր Երկրիս Բուբայ եւ առու ինչք զայգին Ոսկէբակայ, որ է առու Բանաբեռուն. ՃԺ. ակն Ջաղացին աչիկ . . . (թերի)։

Ե. Զաքարէի եղբայր Իւանէ Աթաբակը 1219 թ. Աւանի գիւղի Ջրի մասին այսպիսի կարգադրութիւն է անում.

«ՈԿԸ (=1219) եւ Իւանէ Աթաբակ հայոց եւ վրաց զկուչա (?) Աւանա, որ ի հնուց նոցա էր եւ կրկին գնեցին ի Ջաջռոն բազում գանձ 'ի հայրենիք։ Արդ ոք յիմոց կամ յաւտարաց լինի տէր Երկրիս հող եւ ջուր աւելացնել պարտ է Աւանավան միամտութեան սոցա եւ ով խլէ ակաւս մի կամ մի բահով վարէ, շարէ տայ Ռ (=1000) ու . . . նզովեսցի..»։

Զ. Նոյն Իւանէ աթաբակը նուիրում է Շիրակա եկեղեցու Ջրային հարկը.

«ի թ. ՈՀԷ (=1228) շնորհիւն ատուծոյ ես Իւանի եւ խոտակս Վրաց եւ Հայոց թագոհի վան յերկար կենդանութեան հարազատաց մերոց մանդատորթա խուցէս Շահնշահի եւ ամիր սպասալար Աւազին թողաք զգեղիս Շիրակա զապուռիշի եւ զՋրահին բաժն յորդեցէ յորդիք ազատ ի բաժէն...»։

Է. Վերև յիշուած Հռոմոսի վանքին երկու նուագ հողի և Ջրի նուիրատուութիւն է տեղի ունենում 1231 թուին.

«Շնորհիւն Քրիստոսի ես Ասլանս, որդի Շիրականն եւ զիւզակից իմ Ասուշա տուաք զմեր գանձագին հայրենիքն զԳոգեցն զկէս գանգն իւր հողովն եւ ջրովն ի տուրբ Յովաննէս յառաջնորդութեանս տէր Բարսղի արհիեպիսկոպոսի, որդւոյ Ամիր Երկաթա» . . . (թերի)։

«Ի սոյն ամի ես Խուրոլ, որդի Վարհամա Լաւոնցո եւ զիւզակից իմ Շուշիկ տուաք զմեր գանձագին հայրենիք զԲարհատին գանգն իւր հողովն եւ ջրովն ի տուրբ Յովաննէս . . .»։

ը. Սիւնիքի նորավանքի 1261 թ. մի արձանագրութեան մէջ պահւած է Սիւնեաց Սմբատ իշխանի ջրանցքաբերութեան յիշատակութիւնը.

«Ի թվին ՉԺ (= 1261) այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի իմ Սմբատայ իշխանաց իշխանի, որդւոյ մեծին Լիպարիտի . . . շինեցի զեկեղեցիս. վերատին նորոգեցի . . . պահարանաւք եւ եռոս իմ հայրենեացն. Բ. (= 2) գիւղ ի տուրբ Նախավկայս, զԱւէշ ու Անապատ եւ յԱկոռի զնորատունկ մեծ այգին իւր կիրակաջրովն . . .»։

թ. Կարսի շրջանում գտնւող Բագնայրի վանքը 1262 թ. երկու գանձագան անձերից հոգի և ջրի նուէր է ստացել։

«ՉԺԱ. (= 1262) . . . ես Ապուղամր, որդի

Մագիստրոսի, թոռն Վահրամ իշխանին . . . եւ զիմ գանձագին հայրենիքն զկաղղուց կէսն իւր հողովքն եւ ջրովն ի սուրբ Աստուածածնամայրս...» (թերի);

«ՁԺԱ. (= 1262) . . . Եւ Խաւռազ, մեծ Խաւռապիս թոռն, Սասանիս որդիս, իմ անդրանիկ որդին Սասնայն, որ կէս տարեկան ի Քրիստոս փոխեցաւ, յիմ գանձագին հէրէնեցս յԱշնկու, որ իմ պապն գնել էր ու սիկելով յիս տվել, ինչ իմ պապն մեռաւ Եւ Խաւռազ իմ կնոջն զբաժինքն, ակն ու մարգարիտ իմ պարոնին տվի, Շահնշահի, ու կըրկին զԱշնակ գնեցի եւ զիմ որդւոյն բաժինն զՍասնին ի Բգնեru տվի յԱստուածածինս. զվէրի իգին իւր ընձանովքն . ՔԲ. (=2) շինական, զՄեհրեւան ու զԽաչատուր Դուլուսին փեսայն, իւրենց հողովքն ու ջրովն ի Տգնիս զՂազացն, յիմ խոտահարն .Ճ. (= 100) բարգ խոտի տեղ, որ վանքս ընձէ . . . սկի արծաթի: Եւ Խաւռաս զայս ընձա տվի սուրբ Աստուածածնիս, ով որ գրեցոցս հակառակի, Աստուածամայրս լինի իւրն դատախազ . . .»:

Ուշադրութեան արժանի տեղեկութիւն է, որ նուիրատուն երկու շինական եւս նուիրում է վանքին, նրանց յատկացրած հողով ու ջրով:

ժ. Տարայիճ «արքայաշուք» իշխանի աղջիկը Ասփէն Ղարաբաղի Խաթրայ վանքին մի բահի ջուր է նվիրել եւ վանքի պատի վրայ յաւերժացրել իւր նվէրը.

«Ես Ասփէ, դուստր արքայաշուք իշխանին Տարայիճին, թագաւորում մաւրն իմոյ Մինա խաթունին նպաստ եղեալ քրիստոսասպասակ գլխոյ իմոյ . . . իշխանին Գրիգորի ի շինութեան լուսանուէր սուրբ եկեղեցւոյս . . . տուի զմեր խաս հողն բլրի հանդի զսենեկպան Ս. բահի ջուր . . . զմեծ տէր Յովհաննէս, շինող եկեղեցւոյս, որդին Դաւթին, եղբայր մեծ իշխանին Հասանա յիշեցէք . . .»։

ժա. Քասախ գետի աջ ափին էր գտնւում հայկական ճարտարապետական գեղեցիկ յիշատակարաններից մէկը, Յոհաննա վանքը, մինչև մի 15 տարի սրանից առաջ բաւական լաւ վիճակում, թէև ունէր աչքի ընկնող ճեղքւածներ. այդ ժամանակ երկրաշարժի ցնցումներից հիմնովին կործանւեց։ Նրա պատի վրայ պահւած բազմաթիւ յիշատակարաններ կային. մէկի մէջ յիշատակւում է, որ 1283 թ. Քուրդ իշխանի որդի Հասանը վանքին նվիրաբերութիւն է անում։

«Թուին ՉԼԲ (=1283) ես Հասան իշխան, որդի Քրդին իշխանաց իշխանի եւ մաւր Խորիշահի յազգէ Մամիկոնեանց, թոռն մեծի Վաչէի եւ բարեպաշտ ամուսին իմ

Արուս խաբուն յազգէ Ռէքանանց տա-
բաժամ եւ կէս աւուրց ելաք յաշխար-
հէ, աւանդեցաք զհոգիս մեր եւ զամէն
հայրենիսն եւ զզաւակսն մեր Դաւթի
եղբաւր մեր հարազատի եւ աստուա-
ծասիրի . . . տուաք ի սուրբ կարապետս
ես եւ եղբայր իմ Դաւիթ զմեր գան-
ձագին գեղն զՎահրամագեղ եւ զՂա-
մազանցն իւրեանց ամէն հող եւ ջրով
եւ բնորդի մարտկաւք. Կարբի զմեր
գնած եւ զմեր ձեռատունկ այգին եւ
Զքարկենց փոսն եւ զՈրդկան, որ սեպ-
հական հայրենիք էր եկեղեցւոյս եւ ի
չար եւ ի դառն բերմանց ժամանակիս
ելեալ էր ի վանացս, բազում աշխատու-
թեամբ եւ յոլով ծախիւք դարձուցաք
ի սուրբ ուխտս»։

Ժբ. Արձանագրութիւնների յիշած
Ժողովածու գրքի մէջ բացառաբար տպա-
գրուել է մի արձանագրութիւն հարաւային,
տաճկական սահմանում գտնուած Հայաս-
տանից, որով Արճէշի սուրբ Յարութիւն
եկեղեցուն 1291 թ. ջուր է տրուում «ամէն
երկուշաբաթ, գիշեր եւ ցերեկ», իսկ մի
շարք գիւղականներ հողեր, այգիներ եւ
տներ են նուիրում։

«Ի ժամանակս տէրութեան Ուլաուն
զանին ես ծառայ ծառայիցն աստուծոյ
տէր Աբրահամ տեսուչ գաւառիս Գաշ-
բերունոն տվաւ ինձ տեղիս այս տեառնէ

սորին Սահմադին կոչեցեալ. եւ շինեցի զեկեղեցիս . . . պարոն Սահմադինն տանուտէրաւքն Ասպիանկայ, զի սեփական աւանդան, որ կարգեալ էր յառաջնոցս նախ քան զաւերն ի Խորազմէն, դարձեալ հաստատեցին տեղւոյս։ Ի մարզէն Ծ. (=50) բարդի տեղ եւ Բ. (=2) արտ, մին ԺԵ. (=15) եւ միւսն Ժ. (=10) եւ ի Սեւակն Ի (=20) բարդ խոտեղի եւ զջուրն Վրհաւնից յամէն Բ. շաբաթ զտիւ եւ զգիշեր։ Եւ ետ պարոն Սահմադին զգեղն Մեծոփ իւր մզրայիւքն եւ խարհանիւք եւ քրդագեղերովն. ետ Մելիք Ստեփան տանուտէրաւքն Ի. (=20) բարդի տեղ. ետ Խաչիկն զայգին ի Գոգիսան, վ. տակ. ետ Աւտարշահն եւ Մխիթարն զիւրեանց այգին ի Գոգիսան Բ. տակ. ետ պարոն Փռանգն արտ մին ի քաղաքն Ե. (=5) մոթայ տեղ. գնեցի արտ մին ես ոչ հեռի յայն արտէն Ժ. մոթա տեղ եւ տվի եկեղեցեացս . . . Եւ տվին ի քաղաքն տներ եւ Բ. կուղպակ։ Եւ սոքա են աւանդ եկեղեցեացս . . . Եւ շինեցաւ սուրբ Յարութիւնս ի թուիս ՉԽ (=1291)»։

Տանչորս և տասնհինգերորդ դարերը Հայաստանը ապրել է իր առանց այն էլ ողբերգական պատմութեան ամենածանր օրերը և շինարարական գործերի հետքեր համարեա թէ չկան։ Երբ 15րդ դարի կիսից

կաթուղիկոսական իշխանությունը նորից վերահաստատվում է Էջմիածնում, 16 րդ դարից նրա ներկայացուցիչներից ոմանք ոռոգման գործին առանձին ուշադրություն են դարձնում, առանց որի Էջմիածնի գլուխ-նված վաղարշապատի դաշտը մշակել և օգտակար դարձնել անկարելի է։ Այդ ուղղությամբ յուշելու արժանի են այս գործերը.

Քասախ գետի ջուրը օգտագործվում էր հնագույն ժամանակներից. վանական կառավարությունը յաջողեցրեց իր առուագլխի եղած և աւելի բարձրերում չօգտագործված ջրերի կէս մասը հաստատել Վաղարշապատի համար, որ բերվում է Շահարխ կոչված առուով։ Եղած ջրի քանակն աւելացնելու համար, Արագածի բարձունքում գտնվող Ղարագեոլ լճակի ջրերը, որ բնական հոսանքով դէպի արևմուտք, դէպի Շիրակի դաշտն էին հոսում, յատուկ առուի միջոցով այդտեղից հոսող ջուրը բերում խառնում են Քասախի ջրերին, Շահարխի ջրերը շատացնելու համար։ Ցիշեալ Մոլագուբասուն գիւղի մօտ արհեստական լիճ են շինում, Ծովակ անունը տալով։ Վանքի հարաւային մասում խոշոր ջրամբար են շինում, լինն արշին խորությամբ սրբատաշ քարերով շինված պատերով, յատուկ տնկած անտառին ջուր տալու։ Աշխատում են Սեւանի լճից Զանգուն թափող ջրի քանակը աւելացնել և այդ գետից

նոր առու բերել։ Սևջուր գետից առու են անցկացնում հարաւային, ցածրագիր հողամասերը ոռոգելու։ Գետնափոր երկու քարհոլ կամ քանքան են անցկացնում, խմելու և ոռոգելու ջուր ստանալով։ Ամենավերջին ձեռնարկն էր Զանգուի առուի շինութիւնը, որ կիսակատար էր մնացել և Հայաստանի Խորհրդային Կառավարութիւնը աւարտեց։

Պատմական և ուրձանագրական տեղեկութիւնները մեզ տանում են Հայաստանի բոլոր անկիւնները, Կարսի շրջանից սկսած, Անի, Հռոմոս, Հառիճ, Թալին, Թալիշ, Հաղբատ, Վաղարշապատ, Սիւնիք, Ղարաբաղ, Արճէշ, երբեմն կարևոր, երբեմն փոքր և աննշան տեղեկութիւններով շնչառում, թէ մեր երկրի բոլոր անկիւններում ոռոգման պահանջը անհրաժեշտութիւն էր։

Միևնոյն ժամանակ այդ պատմական տուեալները մեզ նոր բան էլ են սովորցնում. փոքր սեպհականատիրական սկզբունքներով ղեկավարող ժողովուրդը, անհատ ձեռնարկողների եռանդով, կարող է առերևոյթ աննշան յաջողութիւն ունենալ, օրինակ Յակոբ Սիւնեցու ձեռնարկը, բայց այդ կատարում է միմիայն յօգուտ առկուաթիւ անհատների։ Մի շարք գիւղերի բազմաթիւ ընակիչներ Յակոբի առուին մօտենալիս օգտուելու դիտաւորութեամբ, սոսկալի նեղութիւնների պիտի ենթարկուէին, որովհետև այդ ջուրը պէտք էր

իշխողի պարտէզներին, անուշահամ պտուղ-
ների և մանաւանդ ծաղկանոցների համար։
Բացի այդ՝ մենք տեսնում ենք, որ դա-
րերի ընթացքում անհատ անձինք, նոյն
իսկ մեծ տիտղոսներով իշխողներ, Ամբա-
կում, Ամիր Սպասալար, Սպարապետ, Կա-
թուղիկոս, ելն. որքան փոքր և աննշան
գործեր են կարողացել գլուխ հանել. մինչ-
դեռ սոցիալիստական շինարարական ո-
գևորութեամբ տարուած ժողովուրդն իր
հարազատ աշխատողների ձեռքերով ընդ-
ամէնը տաս տարիների չնչին ժամանա-
կում շինում և աւարտում է Էջմիածնի
Ջրանցքը, Շիրջրանցքը, Սարպարապատի,
Էվզիլարի, Կարճեւանի առուները, ևայլն։
Իսկ մի տարի առաջ, ընդամենը մի քանի
ամսում, Երևանի ներքևի մասում սկսած
Հայոց առաջնորդարանի ներքեւից Զան-
գուից մի մեծ առու հանեցին, թէ՛ խոշոր
էլեկտրական կայան գործարկելու և թէ՛
մեծաքանակ ունջրդի տարածութիւններ ո-
ռոգելու։ Նման ձեռնարկներ ներկայումս
սկզբի պէս անսովոր բաներ չեն. դրանց
մասին շատ բան չեն գրում, այլ բաւա-
կանանում են օրաթերթերում անցողակի
յիշատակութեամբ։

Ը. Մեր հարեւան Պարսկաստանի ռազմական սիստեմները.

Հիւսիսից հարաւ հազար կիլոմետրից աւելի երկար ձգւած Պարսկաստանը իր այդ սահմաններում ունի կասպից ծովը և Հնդկական օվկիանոսը, որ խոնաւութեան շտեմարաններ են. իսկ արեւելքում փռւած է ընդարձակ Ասիան, Թուրքեստան, Աղվանստան և Բելուջստանի ցամաքային երկիրները. նրա արեւմտեան սահմաններում նոյնպէս ցամաքային երկիրներ են, Հայաստան, Տաճկաստան, Ասորեստան, Մեսոպոտամիա: Երկրի ներսում չկան յիշելու արժանի լճեր և գետեր: Հարաւում հոսում է բաւական չրառատ Խուժիստանի Փարուն գետը, ստորին հոսանքում մինչև իսկ նաւագնաց, իսկ հիւսիսում բաւական մեծ է Ռուդբար գետը, որ գոյանում է Գիլանի յորդառատ անձրեւներից և համարեա անօգուտ կերպով թափւում է իրեն անուցանող կասպից ծովը:

Էնզելի և Ռեշտ, Գիլանի երկու գլխաւոր քաղաքներից, ցարական իշխանութեան օրով ռուսական ժողովրդական դրամով շինուած շոսէն, Ռուդբար գետի հովտով, սկզբում անտառածածկ, ապա լերկ և ժայռոտ ուղիով 40–50 կիլոմետր կտրելով, ճանապարհորդին հասցնում է Պարսկաստանի բարձրադիր մասերը, Ղազվին քաղաքի չափազանց ընդարձակ դաշտը,

որի համեմատաբար փոքր մասն է մշակուած։ Դաշտը նման է մի վիթխարի աւազանի, որի եզերքները կազմում են զանազան բարձրութեամբ լեռներ և բլուրներ, որ շղթաներ կազմելով միմեանց հետ օղականման եզերում են դաշտը։ Այդ պատկերն ու տեսարանը տիպիք է համարեա թէ ամբողջ երկրի համար, դէպի հարաւ և արևելք, տարբերելով շրջանակների մեծ ու փոքր չափերով։ Ամբողջ երկրի մէջ գիւղերն ու քաղաքները գլխաւորապէս օազիսների կերպարանքով են ներկայանում, որովհետև գետեր ու գետակներ չափազանց սակաւաթիւ են. և մշակութիւն տեղի է ունենում միայն ոռոգման միջոցով, որտեղ որ փոքրաքանակ ինքնահոս ջրեր կան կամ արհեստական ջրապաշար է ստացուում։ Երկարաձիգ գետերի մշակուած տարածութիւններ հազւագիւտ երևոյթ են Պարսկաստանի ընդարձակ տերիտորիայի վրայ։

Ղազվինն ունի բաւական ընդարձակ խաղողի այգիներ և պտղատու ծառերի պարտէզներ, որ ջուր ստանում են գլխաւորապէս ստորերկրեայ ջրապաշարից, արհեստական քանքանների միջոցով, որովհետև գետ ու գետակ չունի և մերձակայ տարածութիւններից ինքնահոս ջրերի քանակը աննշան է։

Ցիշեալ շոսէի ուղին հասնում է մինչև Թեհրան, արևելահարաւ ուղղութեամբ,

մինչև Պարսկաստանի ներկայ մայրաքաղաքը։ Ճանապարհին կայ միայն մի փոքր գետ կամ գետակ, Սրխէջի ջուրը, որի մեծ մասը 1925 թ. չահ դարձած Ռիզա Խանի կարգադրութեամբ 1929 թ. տարուում է մայրաքաղաք, խլելով տեղական գիւղական ազգաբնակութեան ձեռքից, քաղաքի նորագոյն ձևով, 30–45 մետր լայնացրած փողոցների ջրջրման և ազգաբնակութեան այլ կարիքների համար։ Թեհրանը վերջի երկու երեք տարիներում, իր գլխաւոր մասերով, համարեա թէ ամբողջովին վերաշինուել է, եռ և երկյարկանի տներով, գեղեցիկ ծառատունկ փողոցներով, քաղաքային ծաղկանոցներով, սքվերներով և հասարակական մեծ ու հոյակապ շէնքերով։

Թեհրանը Ղազվինի պէս նոյնպէս զուրկ է գետ ու գետակից, մինչդեռ մօտ 300,000 ազգաբնակութեամբ մայրաքաղաքը, իր արտասովոր ընդարձակ նստուածքով, ունի ճոխ բուսականութիւն, անհատ մեծամեծների և հարուստների խոշոր պարտէզներ և տների մեծ մասի բակերում մեծ ու փոքր աւազաններ, կիլոմետրներ տարածող լաւ մշակուած դաշտեր և բազմաթիւ գիւղեր։ Գիւղերի մի մեծ թիւը ընկած է քաղաքի հիւսիս արևելեան դէպի լեռնաշղթաները բարձրացող հովասուն գիրքերում, մօտ 15–20 կիլոմետր հեռաւորութեամբ, որոնք ծառայում են մայրաքաղաքի համար իբրև ամարանոցներ։

Քաղաքի նստատեղը միանգամայն հարթ տարածութիւն է, նախկին տիրապետողների օրով ազիւսէ պարիսպներով և մեծ խրամատով պաշտպանուած, առանց որևէ բնական ամրութեան։ Ներկայումս պարիսպները փլցնուում են և խրամատները լցնուում, իբրև կարևորութիւնից զուրկ բեռնաւորում։ Այդ հարթութիւնը ոչ շատ թեք մակերևոյթով բարձրանում է դէպի իր ամարանոցային գիւղերը, որտեղ նախկին ու ներկայ շահերը սքանչելի ամարանոցներ ու պալատներ ունին շինած, ոչ պակաս չափով եւրոպական դեսպանատները, մանաւանդ նախկին ցարականը և անգղիականը։ Պարսիկ մեծամեծներն ու հարուստները նոյնպէս ունին գեղեցիկ ամարանոցի շէնքեր, ընդարձակ պարտէզներով և պարտէզներով, թէ՛ դեկորատիվ եւ թէ՛ պտղատու ծառերից։ Այդ բարձունքները շարունակութիւնն են կազմում Պարսկաստանի ամենաբարձր լեռների, Դեմաւէնդի լեռնաշղթայի, որի մէջն է 21,000 ոտնաչափ՝ առասպելներով հարուստ գագաթը, մշտական ձիւնով ծածկուած և երկրի հեռաւոր տեղերից երևացող։

Լեռնաշղթան մայրաքաղաքի հետևում մի տեսակ պատնէշի պէս կանգնած է հիւսիսի սառնամանիքների դէմ յանդիման և իր անդնդախոր ձորերում պահում է մշտական անհալ ձեան մեծ կոյտեր և սառցարաններ։ Բնականից այդ եղանակով ամ-

բարձած խոնաւութիւնը աստիճանաբար հալւելով սուզւում է երկրի ներսը, իսկ պարսիկ ժողովուրդը, բազմադարեայ քաղաքակրթութեան ուղիներով ընթանալով, գետնատակ տուներներ է ծակծկում, որոշ հեռաւորութեամբ հորերի բացուածքներով և այդ տուներների մէջ կուտակւած ջրերը հաւաքում է ինքնահոս առուների մէջ և ծառայեցնում իր կարիքներին, ինչպէս իրենից առաջ քաղաքակրթւած Ուրարտացիները և միւս հին ազգերն էին անում։

Քանքաններն են գլխաւորապէս Թեհրան մայրաքաղաքի, նրա ազգաբնակութեան, նրա բազմաթիւ ոմարանոցներին բազմապիսի կարիքների համար ջուր մատակարարում, որովհետեւ ինքնաբուղխ ջրերը աննշան քանակ են։

Թեհրանից մինչև Սպահան, Մեծ կոչւած Շահաբասի հնութեան մնացորդներով հարուստ մայրաքաղաքը, հինգ հարիւր կիլոմետր է, դէպի հարաւ ընկած, Պարսկաստանի համարեա կենտրոնական մասում։ Այդ վիթխարի տարածութեան մէջ, 125 կիլոմետրի վրայ Ղում քաղաքն է գտնւում, շիա մահմեդականների ամենամեծ սրբավայրերից մէկը, որի միջով համանուն գետակն է հոսում և այնուհետև մինչև Սպահան ինքնահոս ջրեր չէք տեսնում և միայն մի տեղ մի բարակ աղբիւրի էք հանդիպում։ Մի մեանցից բաւական հեռու, անծայր ամայութիւններով անջատւած

գլուղեր և շէն տեղեր են պատահում, որ իրենց գոյութեամբ դարձեալ քարհիզների ջրերին են պարտական։

Սպահանի միջով հոսում է երկրի կենտրոնական մասի ամենամեծ գետը, Զայանդառուտ գետը, որը գարնանը բաւական խոշոր կերպարանք է ստանում, ծածկելով իր հունի ընդարձակ աւազանը, իսկ հաղւագիւտ տարիներում, ձեան և անձրևների աւատ ժամանակներում, ափերն էլ է հեղեղում։ Գետի վրայ շինուած են չորս կամուրջներ, Շահաբասեան դարից, երկուքը մի շարք աշքերով և ճարտարապետական գեղեցկութիւն տուող յաւելուածք շինուածներով։ Քաղաքը գտնւում է ձախ ափին, իսկ աջ ափը տրուած էր Հայաստանից 1605 թ. բռնութեամբ գերեվարած Հայերին, որ Նոր-Ջուղա անունով քաղաք էին հիմնել, եօթ թաղից բաղկացած, Երևանի, Թարվիզի, Քոչերի և էլն. անուններով, անշուշտ համապատասխան գաղթականների նախնական բնակատեղերի անունների յիշատակութեամբ։ Այժմ այդ մասում եւս, ինչպէս Նոր-Ջուղայի շրջապատում, Նոր-Նախիջևանում, ապրում են Հայերից աւելի շատ՝ տեղացի բնիկներ։

Զայանդառուտը սկիզբն է առնում Փերիա և Զարմահալ լեռնային բարձրադիր գաւառներից, որ նոյն ժամանակը գերեվարած հայ գլուղական ժողովրդի բնակութեան վայրերն են ծառայում։ Սպահանից

մինչև այդ գաւառները եղող տարածութեան բարձրանալը շատ անկատելի է և սայլի բնական և չպատրաստուած ճանապարհը որևէ աչքի ընկնող թեքութեան չի հանդիպում, հետևապէս և գետի հոսանքը Հայաստանի գետերի պէս անդընդախոր, գահավիժումների ընթացք չունի և ոչ էլ Ռուսաստանի գետերի դանդաղութիւնը։

Բաւական մեծ գետի ջրերի մինչև վերջին կաթիլը օգտագործւում է ոռոգման համար, բայց այստեղ էս, գետի ամբողջ ընթացքին զուգահեռ, աջ և ձախ ափերին, սկսած յիշեալ Փերիա և Զարմահալ գաւառներից, գործում են անվերջ քանքաններ, մի քանի անգամ աւելի հողամասեր մշակելի դարձնելով, քան գետի ջրերը կարող էին։ Օրինակ՝ Նոր-Ջուղան գետի ջրից մաս ունի և սեպհական առու, բայց այդ առուի ջուրը ոռոգման համար բաժանելով բաւական ընդարձակ սեպհական դաշտի վրայ, որի կիսից աւելին խաղողի այգիներ են, իւրաքանչիւր իրաւատիրոջ յատկացրած ժամանակամիջոցում, ամառուայ շոգերին հազիւ երկուսից երեք անգամ ջրելու հերթ է հասնում, մինչդեռ խաղողի այգիները տիրող տաքութեան պատճառով շաբաթական ջուր են պահանջում. իսկ այդ թերին լրացնում և բաւարարում են հորերի ջրերով։ Ամեն այգի իր սեպհական հորն ունի, երբեմն աւելի։

Ինչպէս նկատուել է, այդ հողերն էլ քարհիզների կարգին պիտի հաշուել, իբրեւ ստորերկրեայ պաշարի մասնակիցներ։

Փիւղատնտեսական. տապարիզում Պարսկաստանի կուլտուրան ամենաարժէքաւոր արտադրանքներն ունի։ Երկրի մի ծայրից մինչեւ միւսը, որտեղ, իբրեւ անհրաժեշտ պայման, ջրելու հնարաւորութիւնկայ, հանդում եւ մշակւում են խաղողորթը, ամենալնտիր եւ բազմաթիւ տեսակների, դեղձն ու ծիրանը, նուշն ու թուզը, շերամապահութեան եւ պտուղների թութը, ձիթենին իւղ արտադրող, խնձորն ու տանձը, ընկոյզն ու կաղինը. իսկ Շիրազից սկսած եւ աւելի հարաւ հասնում են արմաւը, ֆստան, լիմոնն ու նարինջը, եւ նրվերջիններիը մեծ ծառերի պէս բացօթեայ բուսնում են Փիլանում ու Մազանդարանում, կասպից ծովի հարաւային ափերին, որտեղ վերջերս սկսել են մշակել թէյի թուփը եւ Հնդկաստանի ջութը — վուշի մանրածք ստանալու։ Հողամշակութեան սերմերն են՝ ցորենն ու գարին, եգիպտացորենը, կորեկը, հաճարը, բամբակը, թամբաքուն եւ այլն տեսակ ընդեղէններ։

Երկիրը հողի պակասութեան հանգամանքներ չունի, այլ պակասում է ջուրը, որը արժէքաւորում է հողը եւ մարդկային կենցաղը հնարաւոր դարձնում։ Ջրի արժէքին պիտի վերագրել հողամշակութեան ինտենսիւ որոշ ձեւերի կիրարկումը։ Նոյն

կտոր հողից պարսիկը աշխատում է տաքեկան մի քանի բերք ստանալ, որովհետև այդ կտորը միայն կարող է ջրել։ Մարդկային եւ կենդանական աղբով, հին շինութիւնների արեւահար եղած պատերի հողերով, փողոցներից կուտակուած աղբով, անպայման երկու տարին մի անգամ պարարտացնում է խաղողի այգիները, իսկ ամէն տարի սովորական մշակութեան դաշտերը։ Ամենափոքր թեքութիւն ունեցող հողամասերի երեսը գլգզագաձեւ փոսերով է ծածկում, որպէսզի ջրելուց հողաշերտերը չլուացուեն, ինչ որ անխնայ տեղի է ունենում Հայաստանի բոլոր լեռնային գաւառներում։ Աւելի լաւ արդիւնք ստանալու համար, փոխանակ արօրի հեշտ միջոցին դիմելու, յատկապէս Սպահանում, երկար սրածայր բահերով են հողը փորում. մի իշաբեռ աղբ ձեռք բերելու համար, ամբողջ օրւայ ճանապարհ են կտրում անցնում։

Սպահանից մի քանի հարիւր կիլոմետր աւելի հարաւ է ընկած Շիրազի քաղաքի դաշտը, որտեղ մշակւում է խաղող և ստացւում է երկրի ամենագովական գինին, որտեղ ձմեռ չկայ եւ լիմոնի ու նարինջների մշտականաչ պարտէզներում ու բոլոր պարսիկներից անչափ սիրուած և խնամուած ծաղկանոցներում Հաֆիզ և Սաադի պարսիկ մեծ բանաստեղծների գոված սոխանները են երգում, և որի մերձակայ-

քուն է գտնուում Պարսկաստանի անցած փառքի ամենամեծ յիշատակարան — աւերակը, Պերսօպոլիս քաղաքը, Դարեհի եւ Քսերքսեսի վիթխարի պալատի բեկորների մնացորդներով։ Ոչ հին Պերսօպոլիսը և ոչ էլ Նոր Շիրազը գետ ու գետակ ունին, նման Թեհրանին. նրանց շրջապատի մեծ դաշտերը ստորերկրեայ ջրերով են կենդանութիւն ստացել։ Այժմ Պերսօպոլիսի շուրջը ամայութիւն է թագաւորում և հնութեան մնացորդները անխնայ յափշտակութեան ենթարկուելով, Եւրոպայի անյագ ժողովուրդների ժողովածուների քանակն են մեծացնում։

Տեսանք որ Վանի քարհիլների հնութիւնը Լեմանի կողմից վերապահումով էր ընդունուել. Ուրարտացիների երկրին տիրող Դարեհը անկասկած այդ զարգացած արհեստը պատրաստի ընդունել էր նախորդ աւելի քաղաքակիրթ և իրեն ենթարկուած ժողովուրդներից, հետեւապէս Վանի քարհիլների ծագման հնութեան մասին չպէտք է կասկածել։

Շիրազից ուղեւորելով դէպի աւելի հարաւ մինչեւ Հնդկական Ովկիանոսը, Պարսից ծոցը, երեք շաբաթ էեօրաանցեր կամ լեռնագօտիներ պիտի մագլցել անցնել, որոնց մէկի վրայ, ովկիանոսի խոնաւութեան ազդեցութեամբ, կաղնի ծառերի անտառներ են բուսնում, որոնց պտուղը իրենց անասունների հօտերով այդ լեռների վրայ չուող

բնակիչներին կերակուր է ծառայում։ Սակայն այդ մասում ևս հանդիպում են միայն փոքրիկ և աննշան ինքնահոս առուակներ և մի գետակ։ Մշակման դաշտերի մոտ հանդիպում էք դարձեալ կամ հորերի կամ քարհիզների։

Բուշիր քաղաքը գտնւում է Պարսից ծոցի ափին և երկրի հարաբերմեծ նաւահանգիստն է, Հնդկական ովկիանոս մըտնելու համար։ Այդտեղ ևս նոյն սիստեմն է գործում, հորն ու քարհիզը, լրացնելու ինքնահոս սակաւաքանակ ջրերի պակասը։

Սպահանից դէպի արեւելահարաւ են ընկած Եզդ ու Քրման քաղաքները, իսկ դէպի հիւսիս—արեւմուտք Սուլթանաբադ, Համադան, Քիրմանշահ քաղաքները, իրենց ընդարձակ գաւառներով։ Այդ բոլոր վայրերում ևս նոյն սիստեմն է թագաւորում և ոռոգման նոյն եղանակը։

Դարերի փորձն ու պահանջը Պարսկաստանում քանքանափորների յատուկ կադրեր է առաջ բերել։ Կան այնպիսի գիւղեր, որոնց բնակիչների գլխաւոր գործն է քանքանափորութիւնը և նրանց մաքրումն ու պահպանումը։ Ամէն երկու, առ առաւելն երեք տարուց յետոյ քանքաններին ներսից պիտի մաքրուին, այլապէս խոնաւութիւնից չամրացրած տուներից թափուող հողը ջրի քանակը կ'պակսեցնի և լճացումներ ստեղծելով, աւերներ կ'պատճառի։ Սակայն որքան փոքր է այդ ծախ-

քը, համեմատած բաց առուների տարէ ցտարի անհրաժեշտ մաքրումների համեմատութեամբ։ Ռանքանափորները գործնական հմտութեամբ ի վիճակի են նոր փորուելիք քանքանների տեղերն ու ուղղութիւնը որոշել, թէեւ Պարսկաստանում այդ այնքան էլ դժուար չէ, որովհետեւ կան քանքաններ շատ տեղերում դարեր առաջ գործադրուած եւ ներկայի ազգաբնակութեան սակաւութեան և աղքատութեան պատճառով երեսի վրայ են ձգուած եւ նոր կարիքի համար հարկաւոր է այդ հինը նորոգել։

Հայաստանը իբրեւ Պարսկաստանի սահմանակից երկիր, կլիմայական եւ հողամըշակման բաւական ընդհանուր գծեր ունի, բայց մեր երկիրը իր փոքրութեամբ ոչ այնքան սակաւաջուր է եւ ոչ էլ այնպիսի ընդարձակ անապատներով է ճոխացած։ Հիմնական նմանութիւնն այն է, որ մեր երկրում գիւղատնտեսութեան յաջողութեան համար առուգումը անհրաժեշտ է։ Յայտնի սահմաններում, լինելիք մեր առաջարկն է, Պարսկաստանի եւ Ռուսաստանի օրինակն աչքի առաջ ունենալով մեր երկրի համար որոշել ղեկավար սկզբունք դարձնել քարհիզափորութիւնը Հայաստանի Կառավարութեան ոռոգման ծրագրի մէջ, քարհիզների օգտագործումը ոչ միայն անուշադիր չթողնել, այլ առաջնակարգ տեղ տալ։

Թ. Հայաստանի ջրային ռեսուրսները.

Բնութիւնից մեր երկրին տրուած են երկու վիթխարի ջրամբարներ, որ տարբայ ձիւնաբեր և անձրևաբեր եղանակներին նախ, հետու տեղերի ջրատար ամպերը դէպի իրենց են քաշում և ապա իրենց ծոցում գոյացած վիթխարի խոռոչներում և ստորերկրեայ շերտերում ամբարում են, տարբայ ընթացքում ամբողջ երկրին մատակարարելու համար: Դոցանից մէկը Արագած լեռն է իր լայն փռուածքով, Արայի, Սպիտակի և Ջաջուռի բարձունքների հետ, միւսը Զանգեզուրի, Մխչանէի և Գեղարքունեաց լեռների բարձունքում թառած Սեւանայ լինը, 640 ոտք ծովից բարձր: Մեր երկրի, Պարսկաստանի հետ համեմատած, չափազանց առատ ջրերը, աղբիւրներով, գետակներով ու գետերով այդ երկու վիթխարի մասիւներից են սկիզբն առնում և գահավէժ բարձունքներից գլորւում են մեր և մասամբ մեր երկու հարեւան հանրապետութիւնների դաշտային հողերը պտղաբեր և մշակելի դարձնում: Արագածի բարձր գագաթը չը հաշուած, երկու զանգուածներ համարեա նոյն բարձրութեան վրայ են գտնւում, արևելքից արևմուտք դէմ յանդիման կանգնած:

Արագածից բղխող ջրերն են, Ախուրեանը, որ արևելքից իր մէջ է ընդունում

լերան վտակները և ստորերկրեայ հոսանքի ջրերը. Սեւ ջուրը, կազմեւած ամբողջովին վիթխարի աղբիւրներից և ստորերկրեայ սուզմունքներից: Այդ գետը մինչև իր դուրս գալու տեղը Արարատեան դաշտի սկսւածքում, ծածկւած է լուսայի հաստ շերտով և հոսելով ցածր մակերեւոյթի վրայ, ընդամենը 20–25 կիլոմետր երկարութեամբ և շատ քիչ օգուտ տալով, թափւում է Արաքսի մէջ: Արագածի ամենաօգտակար գետը Քասախն է, որի ամեն մի կաթիլ ջուրը ամառւայ եղանակին, գետի սկսւածքից մինչև Սեւջրի հետ խառնւելը, օգտագործւում է ափերին ապրող բազմաթիւ գիւղերի բնակիչների ձեռքով: Արագածը Սպիտակի բարձունքներից իր ջրերից բաժին է հանում Լոռւայ Զորագէտին-Դեբեդչային, իսկ Եղվարդի ուղղութեամբ Զանգուին: Ի վերջոյ Արագածի բարձունքներից են ներքև սուզւում այն մեծ հաճիկները, որ փռւած են, միանգամայն անօգուտ և վնասակար եղանակով, սկսած Սարդարապատի շրջանից մինչև Էջմիածնի ու Զոբանքարայի ցածրադիր հողերը: Թէ որքան ջրեր են սուզւում երկրի աւելի խորը շերտերը, արտեզեան ջրամբարներ կազմելով, արտեզեան հորերի յաճախութիւնը ապացոյցում կ'ապրեն:

Սեւանի և նրա վիթխարի շրջապատի զանգւածը, թէ աւելի ջրեր է ընդունում իր մէջ և թէ աւելի թւով ու ջրառատ գե-

տեր հասնենում իր կրծքից։ Անցեալ 1932ին ինչիներ Տէր Աստուածատրեանի Մոսկվայում կարդացած մի զեկուցման քաղուածքից տեղեկանում ենք, որ լեռնային 6340 տա մեծ բարձրութեան վրայ գտնուող Սևանայ լիճը 1413 քառակուսի կիլոմետր տարածութիւն ունի, որ նրա մէջ երկնքից թափուող և շրջակայքից ներս հոսող ջրերի քանակն է, ամբողջ տարին հաշուի առած, ամէն մի վայրկեանում 50,4 խորանարդ մետր։ դուրս տուածը միայն 2,8 մետր, իսկ մնացորդը ամբողջովին լճի մակերեւոյթը մշտական հաւասարակշռութեան մէջ պահելով, պակասում է անընդհատ գոլորշիացումով։ Զեկուցման ամփոփումը խիստ համառօտ էր, այլապէս մեզ համար մութ է մնում, թէ մի՞թէ յարգելի ինջինեերը Սևանի յատակը համարում է առանց ծակոտկէնների և ճեղքուածների մի կաթսայ, որ այդ յատակից չեն կարող ջրեր իրենց համար ստորերկրեայ անցքեր գտնել և մեր երկրի զանազան ոգբիւրներին ջուր մատակարարել։ Առերեւոյթ ի նկատի է առնուած միայն լճից անմիջապէս դուրս եկող ջուրը, Զանգու գետի մի ճիւղը և գոլորշիացումը։ Այդ առումով, իրաւ է, լճի ջուրը 50 մետրով իջնելով, երկրի ջրատնտեսութեան համար աննկատելի կ'մնայ։

Բաւականանանք միայն անուններով յիշատակել այն գլխաւոր և աչքի ընկնող գետերը, որ իրենց ծագումով Սևանի մեծ

զանգուածին են պարտական, յորդացած տեղական և մերձակայ լեռների ջրերով. Զանգուն, Գառնին, Վեդին, Արփաչայը, Երնջակը կամ Նախիջևանի գետը, Բազարչայը, մինչին հասանքում Որոտն, ստորինում Բարգուշատ կոչմամբ, Զաբուղն ու Յապարին, Խաչէնը, Թառթառը, Շամքորը, Ազատեւը և Զոլագետը կամ Դեբէդ գետը։

Սևանն ընդունելով մի մեծ շրջանակի կենտրոն, յիշեած գետերը նրա շաւիղներն են՝ ուղղեած դէպի նրա պերիֆերիան և այնպիսի դասաւորութեամբ, որ երկրի բոլոր մասերը կարող են ինքնահոս եղանակով ոռոգման ենթարկել։ Սակայն, եթէ նոյն իսկ այդ եղեւացող ջրերի քանակը բաւականանայ ոռոգման կարիքներին, ուշադրութեան պիտի առնենք մի կարևոր հանգամանք։ Մեր լեռների մեծ բարձրութիւնների հետեւանքով, նրանցից բղխող գետերը շատ արագավազ են, ներ քև են գլորում ահռելի վիհերով ու դժուարամերձ ժայռերի պատուածներով և ընդհանրապէս օգտակար են դառնում դաշտային մասը հասնելուց յետոյ։ Մեր երկրի լեռնային և լեռնաստորոտ մասերը զուրկ են մնում ջրերից։ Անկախ դրանից, եթէ ջրերը գործադրուեն բաւարար չափերով բարձրադիր մասերում, կ'զրկուեն ստորին դաշտերը, երկրագործական բարձր կուլտուրաների վայրերը։

Աւելորդ անգամ կրկնելով պիտի ասենք, թէ ջրերի տնտեսաբար օգտագոր-

ծումը, թէ ծախքերի անհամեմատ խնայողութիւնը կուցէ թելադրեն Պարսկաստանի և Ուրարտացիների օրինակով ընթանալ և մեր երկիրը ևս քանքաններ ունենալ։

Մեր ունեցած տեղեկութիւններով 1765–70 թ. Յակոբ Ջուղայեցի կաթուղիկոսն էր, որ Էջմիածնում առաջին քանքանը փորել տուեց։ Նա ինքը ծնուած լինելով Սպահանի մօտ Նոր–Ջուղայում և ծանօթ պարսկական քանքաններին, Էջմիածնի հին և սառը կոչուած քանքանները հանել տուեց, որ խլմելու և փոքր չափով հողեր ոռոգելու էին ծառայում։ Սմենայն հաւանականութեամբ քանքանափորները այնտեղից հրաւիրուած պարսիկներ էին։

Նոյն գործի կրկնութիւնը մենք տեսնում ենք Խրիմեան կաթուղիկոսի ժամանակ. սա իբրև Վանեցի, քաջատեղեակ էր քանքանների օգտակարութեանը. Վանից վարպետներ բերել տուեց և քանքանի նոր գիծ փորել տալով, հնի հետ միացրեց։ Նրա ժամանակ, երբ խնամքով մաքրուում էին քանքանի հորերը, հոսող ջուրն այնքան առատ էր, որ Խրիմեանը Ներսիսեան լճի ներքևում ջրաղաց շինել տուեց, որ գործում էր միշտ լիքը գրութեամբ պահուած լճի թափուած ջրից։

Անշուշտ Պարսկաստանի օրինակով պիտի բացատրել վեդի գիւղի, Հին–Նախիջևանի, Սղդամի, Ջակեան–Ջարգախլուի և Գանձակի տակաւին գործող քանքանների գոյութիւնը։

Ժ. Երկրաբաշ ինժիներ Գր. Աղաբաբեանի առաջարկը.

Իմ ձեռին է ինժ. Գր. Աղաբաբեանի ռուսերէն լեզուով հրատարակուած մի փոքր բրոշիւրը. Irrigacia Etschmiadzinskih zemil, Kaptaj podzemnich vod, Gornavo Ingenera Gr. Agababiana. *1911 թ.։*

Այդ թվականներին Էջմիածնում փոքր կերպով դրուած էր վանական սեպհականութիւն կազմող Վաղարշապատի մօտ 7000 դեսեատին հողերի ոռոգման հարցը։ Վանքի յանձնարարութեամբ մի քանի ինժիներներ ոռոգման ծրագրեր կազմեցին և իրենց նախահաշիւներով ներկայացրին վանական կառավարութեանը ի գործադրութիւն։ Ցարական իշխանութիւնը թոյլատրել էր և արտօնել Սևջրից վերցնել 75 բաշ ջուր։ Ի նկատի էր առնուած այդ ջրով ոռոգել վանքի հարաւային հողամասերը, Ներսիսեան լճից և այն ժամանակուայ անտառից ներքև, մինչև զորուղները տարածող մասը։

Առաջի ծրագիրը լեռնային ռուս ինժիներ Կազասին էր, որ հնարաւոր էր համարում օգտուել միայն արտօնութեան երրորդ մասով, 25 բաշ ջրով. արդէն գոյութիւն ունեցող Սևջրի առուի միջոցով բերել վանքի հողերը և ջրհան մղկղանների միջոցով բարձրացնել ու ջրել միայն մօտ 600 դեսեատին հող։ Ծրագիրը պահանջում էր

միանուագ 140,113 ռուբլի, իսկ տարեկան ծախք պիտի կատարեր, մէջը հաշուած տոկոսներն ու դրամագլխի ամորտիզասիոն գեղչումը, 19,638 ռ.։ Այդ հաշուով ամէն դեսեատնի միանուագ ծախքը հաւասար էր 230 ռ., իսկ տարեկանը 32 ռ.։

Երկրորդ ծրագիրը ներկայացնողներն էին ինչ. Ա. Լիսիցեան և Տեր Վարդանեան, որ հնարաւոր և օգտակար էին համարում օգտուել արտօնուած ջրի ամբողջութիւնից, քեռոնի խողովակներով ջուր բերել ինքնահոս եղանակով մինչև վանքի հողերը և չորս ատիճան ջրհաններ գործադրելով էլէկտրական ոյժով առաջի շարք նասոսներով ջրել 270 դեսեատին, երկրորդ շարքով 620 դ., երրորդով 390 դ. և չորրորդով 940 դ.։ Իրոշիւրի մէջ ծրագրի նախահաշիւը չի ցոյց տրուած, այլ նկատուած է, որ խիստ թանգարժէք է և տեղական պայմաններն ի նկատի առած, պատահարների ենթակայ։

Թումանեան և Վասիլեւ ինժիներները ներկայացրին երրորդ ծրագիրը, որ կայանում էր հետեւեալում. Կուլիբէկլու գիւղի մօտ բղխող աղբիւրների առաջը պատնէշել, ինքնահոս առու փորել մինչև ջրելիք հողերը, առուի տակ առնելով 1220 դեսեատին, իսկ եթէ պատնէշը փորի աղբիւրների ակներից 2 արշին աւելի ցած, նոյն եղանակով կարելի է ջրել միայն 1020 դ.։ Նախահաշուով ծախք ցոյց է տրուած 20-

25,000 ռ. պատնէշի, աքվեդուկի (Քասախ գետի վրայ) և առուի համար։ Այդ առաջարկը աւելի բանաւոր համարուելով, վանքը ձեռնարկեց գործի. պատնէշի վրայ ծախսեց 10,000 ռ.։ Բայց լճացած ջրերը պատռեցին պատնէշը և ծախսած գումարը իսկապէս ջուրը տարաւ։

Զորրորդ առաջարկը վերջապէս ինչիներ Կիրակոսեանցին էր, որ ցանկանում էր ընդլայնել Երևանի իր կառուցած փոքրիկ էլէկտրական հիդրոկայանը, էլէկտրական հոսանքը բերել Էջմիածին, վանքի մերձակայքում աւելի խորը հորերով քանքան փորել և ստորգետնեայ ջրերը նասոսներով բարձրացնել և ջրել, մի կողմ թողնելով Սեւջուրը, հարաւում ընկած անտառից ներքևի հողերը։ Սրա միանւագ ծախքն էր քանքաններին համար 25,000 ռ., իսկ էլէկտրական ոյժը տեղ հասցնելու համար նասոսների հետ միասին, 130,000 ռ.։ Դարձեալ չի ցոյց տրուած թէ տարեկան որքան ծախք էր պահանջում։

Բրոշիւրի հեղինակ Ազաբաբեանը վերոյիշեալ ծրագրերի նկատմամբ համառօտակի, մի քանի նախադասութիւններով հնարաւոր է համարում թումանեանի և ընկերոջ ծրագիրը. Կիրակոսեանինը այն չափով, որ կարիք չկայ նասոսների և էլէկտրական ոյժի, այլ հորերը շարունակելով պիտի գետնի երեսը ջուրը հանել, մանաւանդ որ հողի արագութեամբ ինչնաղ

մակերևույթը այդ հնարաւորութիւնը տալիս է, մի փոքր տարածութիւն աւելի պակաս չրելով։

Հետաքրքիրն այս փաստն է, որ կամենում ենք այստեղ յատուկ շեշտով յիշատակել։ Վանքի տպարանում այդ ժամանակ գործում էր ինքնուս վարպետ Ղեւոնդ Ղարախանեանը, իր ուշիմութեամբ յայտնի մէկը, որ իբրև պարկաստանցի, քաջածանօթ էր այն տեղի քանքանափորութեան գործին թէ Թաւրիզում և թէ Սպահանում։ Նա լսելով դիպլոմաւոր կիրակոսեանի մեծածախք պահանջը, խնդրեց իրեն տրամադրել ընդամենը 1200 ռ., որով նա խոստանում էր արդէն գոյութիւն ունեցող հորերը խորացնել և տարածութիւնը երկարացնել. ապա արդէն պատրաստի նասոսներով և վանքի էլէկտրական կայարանը գործի դնելով, չորս դիւմանոց խողովակով օր ու գիշեր, անընդհատ իր փորած հորերից ջուր հանել։ Վանքը վարպետի պահանջած ծախքը վճարեց. վարպետը տառացի կատարեց իր խոստումը և ստացաւ 1200 ռ. պարգև։ Վարպետի փորած հորերը մինչ օրս մնում են և գործում Ներսիսեան լիճը ջուր լցնելով։

Ծանօթանանք Սղաբաբեանի սեպհական առաջարկին։ Բրոշիւրի ամենից հետաքրքիր մասը կազմում է՝ Երկրաբանութիւն եւ Վաղարշապատի դաշտի ստորերկրեայ ջրաբանութիւն — Geologia i Podzemnaia Gid-

rologia Vigarshatamskoi ravniny: Իբրեւ երկրաբան ինչ. Ազաբաբեանը չափեց և ուսումնասիրեց Վաղարշապատում և մերձակայ գիւղերում գոյութիւն ունեցող ջրհորները, հաշուի առաւ հին և նոր քանքաններըը, չափեց Սեւջրի քանակը ակունքների մօտ և Իգդիրի շոսէի վրայ եղող կամուրջի տակը. հաշուի առաւ Ղարուղի, Ջուանքարայի, Վարմազիարի ճահիճները և եզրակացութիւններ տալիս է այդ տուեալներով։

Արագածի խարիսխ կազմող Վաղարշապատի դաշտը ծածկւած է, զանազան հաստութեամբ և ծաւալով, երևացող լաւաների դարաշրջանից մնացած աւազներով և հեղեղատների զանգւածներով։ Երկնքից տեղացող անձրևն ու ձիւնը յիշեալ ծակոտկէն միջավայրով ծծվում են երկրի ներսը, մինչև կաւային շերտերը, որպիսի արգելքի հետեւանքով կամ աղբիւրներ կազմելով երկրի երեսն են դուրս գալիս, ինչպիսիք են Սեւջրի վիթխարի աղբիւրները, կամ թեք մակերեսյթով աւելի հեռուները ծծելով, կազմում են յիշատակած ճահիճները։

Արագածից անմիջապէս եկող հոսանքներին միանում են Արայի լերան և տեղական տարածութիւնների ստորերկրեայ ջրերը։ Թէ ինչ մեծ չափեր ունին ստորերկրեայ ջրերը, ցոյց են տալիս նոյն Սեւջրի վրայ կատարած չափումները։ 1910 թ.

Նոյեմբեր ամսին, հետեւապէս ստորերկրեայ ջրերի բաւական պակասած ժամանակը, թուրքական Զէյվա գիւղի մօտ Սեւջուրը հոսում էր ամէն մի վայրկեանում 7,500 լիտր քանակութեամբ, իսկ կամուրջի մօտ, ընդամենը 7,5 վերստ ներքեւ, այդ քանակը հաւասար էր 39,000 լիտրի, որի մի հազար լիտրը Ֆասախի խառնարանից է աւելանում, մնացեալ 30,000 լիտրը ստորերկրեայ ջրերի առուծքներից էր գոյանում, այն ևս 7,5 վերստ չընչին տարածութեան մէջ։ Փայլուն ապացոյց՝ թէ յատկապէս Վաղարշապատի դաշտի խորքերում ինչ ահռելի քանակութեամբ ջրեր կան թաղնուած։

Մի քանի տարի անց, մենք առիթ ունեցանք Ամբերդի ձորը տեսնելու և լսելու, որ այդ ձորից զանազան գիւղերի համայնքներ իրենց համար ջուր են տանում։ Ձորի ամենաբարձր գիրքից սկսած մինչև բերդի տակը այդ առուների թիւը 12 էր։ Ինկաախ ունենալով, որ Ամբերդը սկզբնաբար հիմնել է Ուրարտացիների ձեռքով և կարծելով, որ առուների սկսուածքը ևս նրանցից է մնացել, ձորում հետախուզութիւններ կատարեցի սեպաձև արձանագրութիւն գտնելու յուսով։ Սեպաձևի փոխարէն հանդիպեցի մալինա թփերի մեծ քանակութեան, հասած պտուղներով, չափազանց անուշ և հոտաւէտ յատկութեամբ։ Տեսայ միևնոյն ժամանակ թէ

ինչպէս են կազմուում 12 առուագլուխ-ները։ Խորը պատուածքով ներքև լիջնող ձորի երկու փէշերից անընդհատ ջրեր են սուզուում։ Ամեն մի առուտէր ձորի մէջ կանգնեցրած պատնէշով մաքուր կտրում է մինչ այդ հոսող ջուրը. հետևեալ նոր առուագլուխը 100–200 մետր ներքև է, բաւական տարածութիւն նոր ջրերի գոյացման, նոր առուատիրոջ համար։

Այն ինչ որ Սևջրում է կատարուում գետնի խորքերից, աչքի համար ոչ տեսանելի, Ամբերդայ ձորում ակներև է կատարուում։

Դառնանք Աղաբաբեանին։ Ստորերկրեայ ջրերի փաստ է համարում նաև Ուլուխանլու կայարանի մօտ փորուած արտեզեան ջրհորը, որ ընդամենը 12 սաժէն խորութեամբ, 3 դիւմանոց խողովակով վայրկեանում 22 լիտր ջուր է տալիս։ Հաշուի է առնում վանքի հին և նոր քանքանները, որոնց սկսած ամենաբարձր հորը Սևջրի մակերևոյթից 18 սաժէն բարձր է, հետևապէս Վաղարշապատի հողերի բարձրադիր մասերը ևս կարելի է ջրել, առանց Սևջրի մակերևոյթին ինքնահոս առուի դիմելու, կամ արհեստական նասոսների ջրաբարձրացմանը։ Խորհրդային իշխանութիւնը մի քանի նոր արտեզեան ջրհորներ է փորել, որ բրոշիւրի գրելու ժամանակ չկային։

Հորերի չափումը ի յայտ բերեց մի ու-

լիչ հանգամանք. Վաղարշապատի դաշտը ստորերկրեայ ջրերի երկու շերտ ունի. առաջինը սկսւում է Քասախ գետից և տարածւում է մինչև Շողակաթի վանքը, ոչ այնքան խոր հոսող ջրերով։ Երկրորդ շերտը սկսւում է այդտեղից և տարածւում է դէպի Զուարթնոցը, որտեղ ջրի հոսանքը 9 սաժէն աւելի խորն է ընկած առաջնից։

Ընդհանուր տեղագրական ծանօթութեան վրայ հիմնւած՝ նա վանքին առաջարկեց հինգերորդ ծրագիրը. մի կողմ թողնել Սևջրի և նաստանների մեծածախք ձեռնարկները, փորել երեք ուղղութեամբ նոր երեք քանքաններ, ծախսելով 30,000 + 10,000 + 30,000 ընդամենը միանուագ 70,000 ռուբլի, և գոյութիւն ունեցող առուների հետ կոմբինացիաներ կատարելով, ջրել վանքի չջրւած 4,500 դեսեատին հողը, հետեւապէս Վաղարշապատի ամբողջ դաշտը։

Երեք քանքանների տարեկան նորոգութիւնների և մաքրելու ծախքը չնչին կ'լինի։

Քարհիպների կամ քանքանների մասին մի ամփոփ տեղեկութիւն կարդացի Մարիետտա Շահինեանի «Օրագրութիւն» գրքոյկում, հրատարակւած 1932 թ. որ իմ ձեռս անցաւ սոյն 1933 թ. մայիսին, որ համառօտութեան մէջ շատ սիրուն եղանակով լուսաբանում է այդ խնդիրը։ Նա գրում է այսպէս.

«Գանձակի ջրամատակարարում. պատմուած ինժիներ գիդրավլիկ Սուխինի կողմից։

«Ադրբեջանում ջրամատակարարումը կատարուում է քարհիզներով, տեղական յատուկ շինարարութեամբ։ Քարհիզները շատ հին են. մեզ մօտ մտել են Պարսկաստանից, իսկ ծագումը Ասորեստանից է։ Քարհիզ փորողները, քեանքեանչի կոչուած, բացառաբար պարսիկներ են միայն (դեղեռ-ինէ-ն ոչէղ չէ). վերջերս դրանց թիւն աւելացել են հայեր և թուրքեր, որ արխակ աշխատելու ձևերի մէջ նորութիւններ են մտցրել։ Պարսկաստանում քարհիզների սիստեմն այնքան է առաջ գնացած, որ այնտեղ գետնատակ ջրեր են ժողովում մինչեւ 150 մետր խորութիւնից (չափոնցրած ըէ- է)։ Մեզ մօտ Ադրբեջանում գոյութիւն ունին մի քանի հազար (?) քարհիզներ. միայն Գանձակի շրջանում կան մօտ 170 քարհիզներ։ (Այստեղ յիշուած էրէ+ ըուէրը, 150, հաղարնէր է- 170, կարծում էմ պէտ+ է ընդունել որոշ վէրապահումով)։ Ի միջի այլոց քարհիզներ կան նաև Կալիֆորնիայում, բայց աւելի կատարելագործուած ձևով, քանի որ շինողներն ինջինեներներ են։

«Ինքը Սուխինը առերևոյթ քարհիզների նկատմամբ թերահաւատ վերաբերմունք ունի. իսկ ինձ (Շահինեանին) թուում էր որ դա գրաւիչ էր և հիմնական միտքը խիստ յաջող։

«Գետերն էլ մարդու նման կրկնակի

կեանքով են ապրում, գետնի տակում և գետնի վրայ և յաճախ այդ կրկնակի ապրումները միմեանց չեն ծածկում։ Ինչպիսին Սուխինն այսպէս էր պատմում։ Լեռնային գետակը սկիզբն էր առնում բարձր լեռներից և գահավէժ գլորւում է դէպի դաշտը։ Նրա անցած ճանապարհի առաջի մասը մեծաւ մասամբ ժայռահունով է ընթանում և ջուրը գետնի մէջ չի ներսուզւում։ Բայց հէնց որ գետը հասնում է դաշտային մասերին, որտեղ գետինն արդէն թափանցիկ է, ջուրը ներս է ծծւում և կազմում է վերնագետի հետ երկրորդ մի գետ գետնի տակում, զուգահեռ վերևինի, բայց ոչ միշտ նրա անմիջական ներքևում, այլ ճիւղաւորւում է հոլհարանման, իսկ տեղ տեղ էլ ճահիճներ է կազմում։ (Ս.-Էլէ ֆէրոական և ուղէղ է ինչինէր Ալաբաբէանի պարզաբանումը)։

«Եւ ահա քարհիզի միջոցով կարողանում են առնել այդ գետնատակ ջրերը, ստորերկրեայ առուներին տալով որոշ թեքութիւն, որպէս զի ցանկացած տեղում ջուրը բարձրանայ գետնի երեսը ... քարհիզը շինում են այսպէս, փորում են 40–50, երբեմն մինչև 60 մետր խորութեամբ (Պարսկաստանում այդ խորութիւնը երբեմն հասնում 150 մետրի է հասնում. կրկնաց է) հորեր մօտ 40 մետր հեռաւորութեամբ և գետնատակում միմեանց հետ միացնում են։ Իսկ քարհիզի երկարութիւնը կարող է լինել

երկու երեք, մինչև եօթ կիլոմետր . . . քարհիգի միջոցով ջրաստացումը անհամեմատ աւելի աժան է . . . օրինակ 1931 թուի գներով Գանձակում քանքանի միջոցով որոշ քանակի ջուր ստանալու համար պէտք կ'ունէր ծախսել 6—7 հազար ռուբլի, իսկ նոյն քանակ ջրի համար գետնաներսեայ առուներով ջուր ստանալը կ'արժենար 315 հազար ռուբլի»։

Գանձակի շրջանում, ինչպէս ասուել է, Գանձակի գետի ուղղութեամբ գործում են մինչև 170 քանքաններ, գետնաներս են հանում մինչև 80,000,000 խորանարդ մետր ջուր և տարեկան ջրում են 500 հեկտար հող (տե՛ս յիշեալ գրքի էջ 421–423)։

ԺԱ. Եզրակացութիւն եւ մեր առաջարկը.

Մեր երկրի կոնտինենտալ կլիման ոռոգումը անհրաժեշտ է դարձնում։ Մեր երկիրը գտնւում է Եւրոպայի քաղաքակրթութեան էտապները նախապատրաստող Ասորա–Բաբելոնիայի, Եգիպտոսի, Փոքր–Ասիայի և Պարսկաստանի սահմաններին կից, որտեղ քաղաքակրթութեան նախադրեալ պայմանը ծառայել է հողի մշակումը ոռոգման միջոցով։ Մեր երկրի հնագոյն պատմական բնակիչները, արևմուտքում Հետիտները, արևելքում Ուրարտացիք կամ Խալդիացիք, ազդուօրէն մասնակցել են հին քաղաքակրթութեան յառաջխա-

ղացմանը. մասնաւորապէս Խալդիացիք Ջրաշինարարութեան մէջ խոշոր, ցայսօր գործող ձեռնարկներ են թողել իրենց ժամանակուայ ամենակատարեալ տեխնիկայով։ Զափազանց սակաւաջուր Պարսկաստանն իր մշակելի հողերի համարեա երեք քառորդը օպտակար է դարձնում ստորերկրեայ ջրերի շահագործմամբ։ Այս սիստեմի գործադրութիւնը Հայաստանում թէև չի ընդհանրացել, բայց Վանի, Թիմարի, Գանձակի, Նախիջևանի գաւառների և Էջմիածնի հին ու նոր փորձերը գործի կատարեալ յաջողութեան գրաւականներն են։ Գիտական պատրաստութեամբ երկրաբանի ձեռք բերած տուեալները և մանաւանդ վարպետ Ղ. Ղարախանեանի մեծ արդիւնքի ի յայտ բերելը մեր երկրում քանքաններով առատ տեղման և այլ նպատակների համար, ջրեր ստանալուն, ոչ մի կասկած չեն թողնում գործի յաջողութեան համար։

Էջմիածինը չգործադրեց ինչ. Աղաբաբեանի չափազանց խոստումնալից առաջարկը, որովհետև 1912 թ., համարեա կէս դար անվերջ դիմումներից յետոյ Կովկասեան ցարական իշխանութիւնից իրաւունք ստացաւ Զանգու գետից ինքնահոս առուհանելու և առանց ժամանակ կորսնցնելու անմիջապէս գործի ձեռնարկեց։ Վրայ հասաւ աշխարհաւեր պատերազմը և մինչև այժմ անուշադիր և անգործադրելի է մը-

նայել քանքանափորութեան խնդիրը, մեծ ծրագրային չափերով։

Մեր գետերի մեծ մասը գոյանում են արտասովոր մեծ աղբիւրներից. ամենախոշորներն են՝ յաճախ յիշւած Սևջուրը, Մենուասի առուի աղբիւրը, Շաքիի աղբիւրը Սիսիանում, Քասախ գետի աղբիւրները՝ Ալիքուչակ գիւղում, Երևան մայրաքաղաքին այնպիսի սքանչելի ջուր մատակարարող Ղրխբուլաղը, Գառնի գետի աղբիւրները և շատ շատերը։ Այդքան մեծ յորդութեամբ դուրս ժայթքող աղբիւրներն ապացոյց են, որ հողի ծակոտկէն շերտերով ներս թափանցող ջրերի բաւական խոշոր մասը, աւելի խորը թափանցելու բնական արգելքի հանդիպելով, կուտակւում են մի ուղղութեամբ և մեծ աղբիւրներին սնունդ տալիս. բայց չէ՞ որ որոշ տեղերում արգելիչ շերտերը տարբեր թեքութիւններ ունին կամ տարբեր խորութիւններ։ Հմուտ քանքանափորների և աւելի շուտ երկրաբանների գործն է գտնել այդ տարբեր շերտերի ուղղութիւնը, որոնց ջրերն են զանազան ճահիճների անպէտք և վնասակար գոյացումը առաջ բերում և քանքանի միջոցով, ցանկացած վայրում հանել երկրի երեսը և շինարարութեան նպատակների համար օգտագործել։

Խորհրդային իշխանութիւնը տարէ տարի մեծ ծախք ու ջանք է թափում, դրենաժի միջոցով չորացնել Արաքսի հով-

տի ուղղութեամբ ընկած ճահիճները, մաքարիայի դէմ կռուելու և բամբակամշակութեան համար օգտակար հողեր աւելացընելու։ Մասնաւոր անձի վկայութեամբ կապտաժով հնարաւոր է Վաղարշապատի գաւառում 4500 դեսեատին հող ջրել, եթէ այդ իրագործուէր. չէ՞ որ այդ տեղի էր ունենալու ի հաշիւ զորուղի, Վարմապետի Լայն ճահիճների ջրելի, որով մեծածախք դրենաժի անպէտք կորչող ջրերը երկրի կուլտուրայի մշտական աղբիւր կը դառնային։

Ամբերդի ձորի յիշած բազմաթիւ առուների ջրերը ամառուայ վերջերին բաւական պակասում են և ջրային վէճերն ու ընդհարումները սովորական են դառնում, մինչդեռ նոյն ձորի աջ կողմում գտնուող Էրմանի գիւղի և նրանից աւելի բարձր ընկած տեղերում ընդարձակ ճահիճներ կան, որ քանքանների մէջ ի մի հաւաքուած ճահիճները կ'չորացնեն և ջրի սուր պակասութիւնը կ'թեթեւացնեն։ Նոյնպիսի ճահիճներ ծածկում են Ղարագեօլից հարաւ-արևելք ընկած տարածութիւնները։ Ճահիճներից ապատ չեն նաև Սևանի լճի միջակայքի հողերը, Զաղալու գիւղի մօտ նշանաւոր Մագրայի և ուրիշ տեղերում։

Քանքանների օգտակարութեան մոմենտները կարելի է համարել հետևեալները։ Ունենք երկրամասեր, որտեղ ջուր

հասցնելը մեծամեծ ծախքերի հետ կապված լինելով, օգտագործման հնարաւորութիւնից դուրս են մնում։ Քանքանների փորելը, մանաւանդ ներկայ տեխնիկայի օժանդակութեամբ, կիր արկելով հանքափորութեան սխտեմները, ինչպէս ինջ. Սաղաբաբեանն է առաջարկում, աւելի աժան կ'լինի, քան շատ տեղերում առուների անցկացնելը, որովհետև ճանապարհին չեն ունենալ այն սոսկալի անհարթութիւնները, որ սովորական են մեր լեռնոտ երկրում։ Քանքանները ազատ են հեղեղների և գարնանային յորդացած ջրերի վնասներից. նրանց մաքրելը և կանոնաւոր պահպանելը շատ ուելի դիւրին է և աժան առուներից։ Քանքանները ապգաբնակութեանը կ'մատակարարեն մի կրոբներից և վարակումներից ազատ և ամառուայ շոգ եղանակներին զովացուցիչ սառը ջուր։

Քանքանները կ'ունենան և մի ուրիշ խոշոր օգտակարութիւն։ Հիդրոէլէկտրոկայանների ցանցը գնալով ծածկում է մեր երկրի բոլոր անկիւնները, շնորհիւ մեր երկրի տրագավազ գետերի և մանաւանդ Սեւանի վիթխարի ջրամբարի։ Տեխնիկայի համար բաւական դժուար լուծելիք խնդիրներից մէկն է, տուրբիններին այժ մատակարարող ջրի քանակը ըստ կարելոյն հաւասար չափերի մէջ պահպանել։ Մեր երկրի լեռնային մասերում հանած քանքանները տոգման խիստ կարճ սեզոն ունին.

տարեայ մեծագոյն ժամանակը կարելի է և պէտք է քանքաններուն ջրերը միացնել գետերուն ջրերուն և տուրբիններուն ջրապաշարի պահանջը կայուն դարձնել։

Խորհրդային իրաւակարգում վճռական կամքի արտայայտութեան օրինակները շատ են շատ։ Հաւատում եմ, որ նոյն կամքի մէջբերումով, մեր երկիրը կ'ծածկուի կենդանութիւն տուող ջրի երակներով։ Այդ կ'կատարուի արդէն աւարտած առուների և ղռերի հսկայական ծրագրի ոռոգման իրագործումով, որոնց լրացուցիչ կ'ցանկանայի որ միացուէր նաև քարհիզների սիստեմի գործադրութիւնը։

ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՋՐԱՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մեր լուսաքաղաքակրթությունները ջրաշինարարական գործերի մասին այժմ Հայաստան անունը կրող երկրամասի վերաբերեալ, որ այդ երկրում յատկապէս քաղաքակրթութեան և բարեկիրթ կենցաղ ստեղծելու ամենահիմնական խարիսխն է, կարող են ընթերցողին իրական պատկերացում տալ, թէ հնագոյն քաղաքակրթական կիզակէտում բնակութիւն հաստատած ժողովուրդները ո՛ր չափով են բարերարել իրենց վրայ իշխող օտարազգի և ընկերտէրերից։ Այդ տէրերի ստեղծած բարիքների կամ աւելի ուղիղ չարիքների պատկերն աւելի իրական է պատկերանում մեր աչքերին եթէ թեւնք այն աշխատանքները որ կատարել է Հայաստանի ներկայ Խորհրդային Հանրապետութիւնը, ոչ թէ հազարամեակներում, այլ իր գոյութեան ոչ երկու տասնամեակ ընդգրկող ակնթարթում։

Մեր երկրի խոշորագոյն ջրերի գործերի գլուխ կանգնած է ինքնին Յովսէփ Տէր Սաառաածատրեանը։ Մեր կառավարութիւնը նրան յանձնեց Շիրակի բարձրաւանդակ դաշտի ոռոգման գործը. նա

էր որ փայլուն կերպով, ամենակարճ ժամանակում գլուխ հանեց և աւարտեց «Շիրաբխը», որ իբրև սկզբնական գործ հայ վարպետներ և գործաւորներ պատրաստեց հետևեալ աւելի մեծագոյն ձեռնարկների համար։ Նոյն ինքնները չդիմացաց մեր մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի հայրենիքի և նրա երգած Դեբեդ–Ջորագետը, ծառայացնելով 30,000 ուժանոց էլէքտրակայանին, որով լուսաւորւում է պատմական հնութիւններով այնքան հարուստ Լոռին, հալում է մեր երկրի հարստութիւն կազմող պղնձահանքը, էներգիա է մատակարարում Կիրովականում — նախկին Ղարաքիլիսա — քիմիական գանագան արտադրանքների հսկայ գործարանին։ Այժմ նոյն Տէր Աստուածատրեանը գլուխ է կանգնած առասպելական հսկայ մի գործի. «Սեվան–Զանգու կասկադին», այն է օգտագործել հայկական ամենաբարձր տեղում թառած վիթխարի ջրամբարը եւ տարէ տարի բացթողնելով այդ ջրապաշարը, Զանգու գետի ափերին կառուցանել յաջորդաբար տաս էլէքտրակայաններ, որ Հայաստանին պիտի տան կէս միլիոն ձիւաւ ոյժ, բազմապիսի վիթխարի գործարաններին և ձեռնարկներին անընդհատ ոյժ մատակարարելով և մեր ժողովրդին յարատև բարեկեցութեան աղբիւր ծառայելով։ Այդ գործարաններից երկու հսկայ արդէն պատրաստ են. Դավալուի ցեմենտինը և Երե-

ւանի կառուցիկինը, չյիշեմ մի քանի փոքրերը. պատրաստ է նաև կատարի հլսակայ կայաններից մէկը, «Բանաքեռգեսը», 60,000 անոց էլէկտրոկայանը, որի բացման օրը որոշուած է սոյն թուի Յուլիսի 15ը։

Այդ վիթխարի ձեռնարկի մէջ կարեւորագոյն տեղ է գրաւելու նաև ոռոգման գործը. Սեւանից հոսող ջուրը իր սկզբնական նպատակը լրացնելուց յետոյ կուտակուելու է ծրագրած մեծ ջրամբարներում և առոգելու է Հայաստանի անապատներից 20,000 հեկտար տարածութեամբ «Ղռեր»։

Այմեն մի նոր ձեռնարկի մասին մայրաքաղաքի եւ գաւառական բազմաթիւ թերթեր, որ կարդացել և շատ բան մոռացել էլ, ուստի դիմեցի Երեւանում հէնց էն գլխից որ ժամանակին տրել են նոյնպէս ջրաշինարարական գործով զբաղուող ինժիներ Գրիգոր Շերմազանեանին և խնդրեցի լրիւ տեղեկութիւններ։ Նա ինձ ցոյց տուեց մի գիրք, մեքենայով գրած, լրիւ տեղեկութիւններով, որ պատրաստուած է իբրև պաշտօնական զեկուցում և ներկայացրած է Հայաստանի և Մոսկվայի կենդրոնական իշխանութիւններին։ Այդ պատկառանք ազդող գրաւոր փաստաթուղթը ցոյց է տալիս, թէ ի՛նչ խոշոր գումարներ են տարէ ցտարի ծախսուում երկրի բոլոր անկիւնների ոռոգման գործը առաջ տանելու համար. տրուած են մանրամասն հաշիւներ, յատակագծեր, կատարուած և ընթացքի մէջ եւ-

զող աշխատանքների լրիւ տեղեկութիւններ, պարզաբանուած բազմաթիւ լուսանկարչական պատկերներով։ Այդ գեկոյցը կատարեալ պատկեր է տալիս, թէ դուցէ տաս տարի չանցած, Հայաստանում չենք մնալ այլևս ամայի և անջրդի վայրեր որ կարգաւորուած կը լինին մեր լեռնային գետերի ըմբոստ և գարնան հեղեղներով ահագին մշակած հողամասեր ոչնչացնող ընթացքը, որ վերականգնուած կը լինին պատմական առուները նորագոյն տեխնիկայով և բոլոր գիւղերը, բացի ոռոգման նպատակների, նաև մարդկանց ու կենդանիների համար խմելու առատ և առողջարար ջուր կ'ունենան։

Աշխատանքները կատարուում են ծրագրուած եւ ուսումնասիրուած եղանակով ըստ այսմ.

Ա. — Անց են կացրել բոլորովին նոր առուներ մեծ և փոքր, ամայի և երբեք չջրուած հողամասեր մշակելու և լաւագոյն բերք ստանալու համար։ Ես կը յիշատակեմ միայն գլխաւորները։ Առաջի տեղը բռնում է Երրառուն, 1500 մետր ծովի մակերևոյթից բարձրանդակի վրայ, որ ոռոգելու է 11,750 հեկտար անջրդի տարածութիւն, իսկ մի մասը նորից թափուելով իր մայր գետի՝ Ախուրեանի ճիւղի մէջ, արդէն ծառայում է Լենինականի մեծ հիդրոկայանի համար, որի ոյժից օգտուում են քաղաքի լուսաւորութեան, Տեքստիլ

մեծ գործարանի և մասգործարանի մերձակայ գլուղերի և այլ կարիքների համար։

Երևան քաղաքում, առաջին ելեկտրակայարանի ջուրը գետը թափելու տեղից սկսած նախանցեալ տարի, ընդամենը 8 ամսայ կարճ ժամանակամիջոցում, մի մեծ առու շինելից, որ հասնում է Ղամարլուի շրջանը ահագին տարածութեամբ բամբակամշակման համար անապատ հողեր ոռոգելու, և քաղաքի մէջ կառուցած երկրորդ հիդրոկայանին այժ տալու, որովհետև առաջի կայարանը ամենևին չէր բաւարարում օրէցօր աճող, արդէն 150,000ը անց ազգաբնակութեան առօրեայ կարիքներին և մանաւանդ նոր կառուցեաց գործարաններին։

Սեւարտել է Մեղրի շրջանում կարճեւան գլուղի առուն, որ սկսւից 1923ին և վերջացաւ 1932, չնորհիւ այն բարդ պայմանների, որ կապւած էր այդ շինարարութեան հետ։ Սկսւած է Մեղրի գետի վրայ մեծ ծաւալով աշխատանքներ՝ հիդրոկայանի և ոռոգման համար, որ գլուխ գալուց յետոյ պատմական Արևիք գաւառը, պտղաբուծութեան համար ամենաաչքի ընկնող տեղը Հայաստանում, ընդարձակելու է իր արտադրանքը մի քանի անգամ։

Բ.— Կարգաւորում են գոյութիւն ունեցող ջրամատակարարումը նոր պահանջներին յարմարեցնելով։ Արաքս գետը իր

ափերը եզերող բարձր ժառերից ազատում և Սրաբատեան դաշտ է դուրս գալիս իր աջ ափին գտնուող Ղարաղալա–Երուանդակերտ քաղաքի աւերակներից մի փոքր ներքեւ, Սրմաւիրի բլուրի մերձակայքում։ Հէնց այդ տեղում հնագոյն ժամանակներից, նրա ձախ ափին, վերցրուած են մի շարք առաւներ զուգահեռ, մէկը միւսից ոչ շատ հեռու։ Այդ առաւներից հնագոյնն է Ռաբատեան Սրգիշտիս թագաւորի շինածը, որ իր ձեռնարկը յաւերժացրել է առուի վրայ մեծ ժայռի երեսին փորած սեպաձեւ արձանագրութեամբ։ Այդ փոքր առաւները, մի կամ մի քանի գիւղերի յատուկ, թէ Ջնորգման համար տարէցտարի մեծ ծախքերը պահանջում և թէ թանգարժէք ջրի ահագին անօգուտ վատնում է տեղի ունենում, կառավարութեան կարգադրութեամբ նորագոյն տեքնիկայով կառուցեց «Սարդարապատի առուն», որ մինչև այժմ ջրած հողերի կրկնակի տարածութեանն է բաւարարելու, և մեծաքանակ անապատ՝ բամբակի, խաղողի, արժէքաւոր պտուղների դաշտեր են դառնալու։ Դրանից աւելի կանուխ հիմնովին աւարտ հանուեց Էջմիածնի վանքի պատրաստած և ոչ աւարտած, «Լենինեան» անունով վերակոչուած առուն և այն անապատ տարածութիւնները որ կային Էջմիածնից Երեւան տանող ճանապարհի վրայ, արդէն պատրաստուած այգիներ են լաւագոյն խաղո-

ղի, գեղձի և այլ պտուղների, բոլորը «Պետական Սովխոզներ–սովետական տնտեսություններ», օրինակելի մշակմամբ, համեմատ գիւղատնտեսական լաւագոյն պահանջներին։

Գ. — Կան այնպիսի ջրեր, որ իրենց շրջապատի բերրի հողամասերից շատ խորն ընկած և ինքնահոս եղանակով անկարելի է օգտագործել։ Այդ ջրերը դարերով անօգուտ հոսել են, շատ անգամ, իրենց կազմած ճահիճներով, իբրեւ մալարիայի բուծարաններ, շրջապատի բնակիչներին չարիք պատճառելով։ Ամենայայտնին էջմիածնից եօթ վերստ արևմուտք ընկած Սև ջուր գետը, պատմական Մեծամօրը։ Այդ գետը իսկապէս հսկայ մի աղբիւր է, որ մի քանի տեղերից դուրս ժայթքելով ակներից երկու վերստաչափ հեռաւորութեան վրայ ստով անանցանելի մի մեծ գետ է կազմում և շուրջ բոլոր մեծամեծ ճահիճներ կազմելով մնանում է Քասախ գետի հետ և թափւում է Արաքս գետը, շատի հետ և թափւում է Արաքս գետը, շատ չնչին տարածութիւններ ոռոգելով։ Ցարի ժամանակ էջմիածնի վանքն իրաւունք էր ստացել իր ցանկացած քանակով այդ ջրից օգտուելու իր սեպհականութիւն կազմող վաղարշապատի դաշտի ոռոգման համար։ Ժամանակին գործը յանձնուեց ինժիներ Ն. Ամրի, որ ծրագրեցին ջրաբերանի առաջ ամբակուռ պատնէշ կառուցանել, հնարաւորչափով բարձրացնել ջուրը և ինքնահոս

ընթացքով բերել հասցնել վանքապատկան հողերը։ Ծախսից պատկառելի գումար, 12 թէ 15,000 ռուբլի, կառուցից պատնէշը, բայց երևաց որ ինջիներները հաշիւների մէջ սխալուել էին, կառուցածքները չդիմացան ջրի մեծ ոյժին, քանդեցին պատնէշը և ժողովրդական ասացուածքով՝ վանքի ծախքը «ջուրը տարաւ»։

Սևջրի աղբիւրների ամենամեծը բղխում է Սյղը լճից, մի փոքր լճակ բազալտ քարերի ափերով եղերած։ Կառավարութիւնը գործի գլխին կարգեց ինջիներ Շերմազեանին, որը ծրագրեց Երևանից, կառավարութեան նոր պատրաստած էլէքտրակայարանից, 1400 ձիու ոյժ փոխադրել մինչև այդ լճակը, այնտեղ շինել մեծ ջրամբար ջրի մակերևոյթից 10 մետր բարձրը, մեծ ջրհան մեքենաներով ջուրը բարձրացնել ջրամբարը և ինքնահոս առուով բերել մինչև մշակելիք հողերը։ Ծրագրած 6000 հեկտարից 2475 հեկտարը ներկայումս կենդանացել է այդ ջրով։ Նման ջրհաններ գործում են նաև Ղամարլուի շրջանում և ջրհաններով արդէն մշակում են 4905 հեկտար հողեր։

Դ. — Հայաստանի գետերի մեծ մասն ստորին վայրերում, նախ քան Արաքս թափուելը՝ կազմում են մեծամեծ ճահիճներ։ Այդպէս են Սևջրի, Զանգուի, Վեդիի գետերը։ Այդ ճահիճները մեծ չարիք են, ինչպէս յիշուեց, իբրև մոծակաբուծ վայ-

գեր և իբրև լաւագոյն հողերի անպետքացընողներ։ Մալաբիան հայ դաշտաբնակ բնակիչների աղէտն է և դարերի ընթացքում չգիտենք որ և է իշխող, որ այդ մեծ աղէտի դէմ միջոցներ ձեռնարկած լինի։ Խորհրդային կառավարութիւնն է, որ հէնց էն գլխից ուժեղ կռիւ է յայտարարել այդ աղէտի դէմ բժշկական պրոֆիլակտիկի միջոցառումներով, տրոպիկայանների հիմնարկներով, ճահիճները նաւթով սրսկելով և որ ամենից գլխաւորն է, ճահիճների ատենանական չորացումներով, որով ստացւում են նորանոր պարարտ հողամասեր բամբակամշակման բարձր կուլտուրայի համար։

Ե. — Պատմութեան մէջ ինձ յայտնի չեն դէպքեր թէ երբևէ աշխատանք կատարուած լինի մեր երկրի լեռնային գետերի կարգաւորման մասին։ Խորհրդային իշխանութեան երկրորդ տարին էր, որ Եւրևանի միջով հոսող, գլխաւորապէս Ղըրխբուլաղի աղբիւրներից գոյացած Գետառ գետակը, գարնան ձիւնահալքի ժամանակ չափազանց մեծանալով, գուրս եկաւ ափերից և հեղեղեց քաղաքի մեծ մասը, տների ներքնայարկերը լցնելով քար ու աւազով և մեծ աւեր պատճառելով ապագարնակութեանը, երբ խորհրդային բոլոր հանրապետութիւններից օգնութեան եկան աղէտեալ բնակչութեանը։ Համարեա ամեն տարի այս կամ այն գետակը ուռճանալով

մեծ անձրևներից և կամ առատ ձիւնահալոցից աւելուում է տներ, այդ ինչ ու մշակուած դաշտեր հեղեղատի յատակ դարձնում, անասուններին և մարդկանց մեծամեծ զոհերով։ Երբ 1895ին ոտով ճանապարհորդում էի Սաւատրիական Տիրոլում, զարմացմամբ և նախանձով տեսնում էի, որ քաղաքակիրթ այդ երկրում լեռնային գետակների յատակները սալայատակած են, ափերը պատերով ամրացրած։ Այժմ մեր երկրում ևս հաստատուել է մի հարազատ կառավարութիւն, որ ծրագրային ընթացքով մեր գիւղ ու ըմբոստ գետերին կարգ է սովորցընում, նրանց ճանապարհները շտկում, որ այլ ևս մոռանան իրենց դարերի ստրէցտարի կրկնուող աւերն ու մեծամեծ վնասները։

Զ. — Մեր լեռների փեշերից բղխում են բազմաթիւ սառնորակ և անուշահամ մեծամեծ աղբիւրներ. բազմաթիւ հեքիաթներում գովաբանուած են այդ անմահական ջրերը, սակայն աղգաբնակութեան ո՞ր մասն էր օգտուում այդ ջրերից։ Ակունքներից շատ չհեռացած, ամեն տեսակ անմաքրութիւններ և հանքային բաղադրութիւններ ոչնչացնում են այդ ակնաղբիւրների անմահական յատկութիւնները և դաշտերում ապրող ժողովուրդն ու կենդանիները խմում են ինչ որ գտնում են, որովհետև շատ տեղերում քանակն էլ է պակասում։ Հին դարերում ապրիւր շի-

նելը բարիք և Աստուծոյ գործ էր համարուում։ Իսկ այժմ, դաշտային շատ գիւղերում արդէն գործում են արտեզեան ջրբրոնները և կամ լեռներից բղխող սառնորակ աղբիւրներ խողովակներով բերած հասցրած օգտագործման վայրը։

Նախապատերազմեան վերջի տարիներում Երևանի մի քանի հայ վաճառականներ, շահագիտական նպատակներով, Ղըրխբուլաղի անմաան աղբիւրից ջուր էին բերել քաղաքը և վաճառելով ազգաբնակութեան, միայն գնելու ընդունակներին, մեծամեծ օգուտներ էին ստանում։ Այդ ձեռնարկը հաշուած էր 30 ից 40,000 ազգաբնակութեան համար։ Երևանի արագ աճող ազգաբնակութիւնն արդէն ջրի նեղութիւններ էր քաշում. ստիպուած առուի վատառողջ և անմաքուր ջուր էր գործ ածում։ Արագ կերպով դրա առաջն առնուեց. այժմ քաղաքի բոլոր թաղամասերում, փողոցների ոչ հեռաւոր մասերում առատութեամբ հոսում է անուշ և սառնորակ ջուրը և ջրի պակասութեան մասին այլևս ոչ ոք չի մտածում։ Անցեալ տարի Արագածի աղբիւրներից ջուր բերին հասցրին Կարբի և Աշտարակ գիւղերը, այս տարի աղբիւրը հասաւ Օշական, իսկ Վաղարշապատ։ Այս տողերը գրում եմ Մայիսի նախօրեակին։ Մայիս 1ին Վանքի հանդէպ Շահումեանի հրապարակում բացուելու է խորհրդային այդ մեծ քաղաքացու արձանը, որ-

ձանի առաջում մեծ աւազան է պատրաստուած, որի բացման հանդէսը յաւերժանալու է այդ շատրւանի բարձր ցնցուղներով դուրս ժայթքով Արագածի փեշերից բերած հասցրած սառնորակ զուլալ աղբրաջուրը, ժողովրդի ցնծութիւնն, ուրախութիւնը կատարեալ դարձնելով։

Քանից յիշատակած զեկուցումը պարունակում է 28 անուններ Լրաշինարարական արդէն աւարտած ձեռնարկների, յիշատակում է մի շարք ծրագրած և մօտիկ ապագայում գլուխ բերելիք մեծամեծ և փոքր աշխատանքներ նոյն ուղղութեամբ և նպատակով։

Այս համառօտ ակնարկը և հնարաւոր չափով ի մի հաւաքած պատմական տեղեկութիւններ տալով՝ ընթերցողին ենք թողնում միմեանց հետ համեմատելու հինն ու նորը և եզրակացութիւններ հանելու։

Զգալի կերպով փոխւում է երկրի կլիման, անապատների եւ անջրդի տեղերի մշակումով և մեծ չափերի պտղատու ծառերի, խաղողի այգիների և այլ ծառերի տարէցտարի աճող քանակով։

ՎԵՐՋ

[704]

A II 7540

ԳԻՆ՝ ՄԷԿ ՃԻԼԻՆ